

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
2401-«Փոխադրումների կազմակերպում և կառավարում
տրանսպորտում (ավտոտրանսպորտում)» մասնագիտության
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ ԵՎ ՄՈԴՈՒԼԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

Երևան 2009թ.

III. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՊԼԱՆԸ

Առարկաների անվանումը և մոդուլները	Ատեստավորում ըստ կիսամյակների				Ռեսուրսային ուսումնական բեռնվածությունը (ժամ)			Բաշխումն ըստ կուրսերի և կիսամյակների						
	Քննություն	Ստուգաթղթ	Կուրսային նախագիծ	Կուրսային աշխ.	Ընդամենը	Այդ թվում			2-րդ կուրս		3-րդ կուրս		4-րդ կուրս	
						Տեսական ուսուցում	Լաբոր. և գործն. պարամ.	Սեմինար պարամ.	3-րդ կիս. 18 շաբ.	4-րդ կիս. 18 շաբ.	5-րդ կիս. 18 շաբ.	6-րդ կիս. 14 շաբ.	7-րդ կիս. 12 շաբ.	
1	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ և ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ													
1.1	Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքներ	3,4տ			72	18	54		36	36				
1.2	Ռուսաց լեզու	3,4տ			72		72		36	36				
1.3	Օտար լեզու	3,4տ			72		72		36	36				
1.4	Տնտեսագիտության հիմունքներ	4տ			48	30	12	6		48				
1.5	Քաղաքագիտության և սոցիոլոգիայի հիմունքներ	3տ			48	42		6	48					
1.6	Պատմություն	3տ			54	46		8	54					
1.7	Իրավունքի հիմունքներ	5տ			36	30	6				36			
1.8	Ֆիզիկական կուլտուրա	3-6,7տ			160		160		36	36	36	28	24	
	ԸՆԴԱՄԵՆԸ				562	166	376	20	246	192	72	28	24	
2	ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ և ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ													
2.1	Բարձրագույն մաթեմատիկա	3,4տ			144	72	72		72	72				
2.2	Էկոլոգիայի հիմունքներ	4տ			36	18	18			36				
2.3	Ինֆորմատիկա, ինֆորմացիոն տեխնոլոգիաներ և համակարգեր	3,4տ			108	36	72		72	36				
2.4	Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր	3տ			36	18	18		36					
2.5	Աշխատանքի պաշտպանություն	7տ			24	12	12							24
	ԸՆԴԱՄԵՆԸ				348	156	192		180	144				24
3	ԱՈՒՍՏՊԱՅԻՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ													
3.1	Հաղորդակցման հմտություններ	5տ			36	18	18				36			
3.2	Անվտանգություն և առաջին օգնություն	3տ			36	18	18		36					
	ԸՆԴԱՄԵՆԸ				72	36	36		36		36			

4	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ												
4.1	Ճարտարագիտական գրաֆիկա	3տ		108	36	72		108					
4.2	Համակարգչային գրաֆիկա	4տ		90	36	54			90				
4.3	Տեխնիկական մեխանիկա	3,4,5տ		180	90	90		42	66	72			
4.4	Մեխանիզմների և մեքենաների տեսություն	4,5տ		72	36	36			48	24			
4.5	Մեքենաների մասեր	5տ		54	18	36				54			
4.6	Նյութագիտության հիմունքներ	4տ		72	36	36			72				
4.7	Աշխատանքային գործունեության հմտություններ	5տ		36	18	18				36			
4.8	Մարքեթինգ և կառավարում ավտոտրանսպորտում	5տ		72	36	36				72			
4.9	Ավտոմոբիլային ձանապարհներ	3,4տ		72	36	36		36	36				
4.10	Միասնական տրանսպորտային համակարգեր	5,6տ		72	36	36				30	42		
4.11	Բեռնման-բեռնաթափման աշխատանքների կազմակերպում	5տ		90	54	36				90			
4.12	Ավտոտրանսպորտային միջոցներ	5,6տ		126	36	90				54	72		
4.13	Ավտոշահագործական նյութեր	5տ		36	18	18				36			
4.14	Ավտոտրանսպորտի օրենսդրություն	6տ		36	24	12						36	
	ԸՆԴԱՄԵՆԸ			1116	510	606		186	312	468	150		
5	ՀԱՏՈՒԿ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ												
5.1	Լոգիստիկայի հիմունքներ	6տ		54	36	18						54	
5.2	Ճանապարհային երթևեկության կազմակերպում և անվտանգություն	6տ		96	54	42						96	
5.3	Բեռնատար ավտոմոբիլային փոխադրումներ	6,7տ		132	72	60					48	84	
5.4	Ուղևորատար ավտոմոբիլային փոխադրումներ	7տ		132	72	60						132	
5.5	Միջպետական փոխադրումների կազմակերպում	7տ		60	36	24						60	
5.6	Տրանսպորտային աշխատանքների հաշվետվություն և արդյունքների գնահատում	6տ		60	36	24						60	
5.7	Տրանսպորտի տեսակների համագործակցություն	6տ		60	36	24						60	
	ԸՆԴԱՄԵՆԸ			594	342	252						326	268
6	ԸՆՏՐՈՎԻ			90									90
	ԸՆԴԱՄԵՆԸ	7տ		90									90
	Խորհրդատվություն			250									
	Պահուստային ժամեր			98						72	8	18	
	ԸՆԴԱՄԵՆ			2880	1266	1548	90	648	648	648	504	432	
	Շաբաթվա ժամերի քանակը							36	36	36	36	36	

IV. ՆԱԽԱՍԻՐԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ				N	VII. ԱՆՀՐԱԺԵՇՏ ԿԱԲԻՆԵՏՆԵՐԻ, ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԻ ԵՎ ԱՐՀԵՍԱՆՈՑՆԵՐԻ ՑԱՆԿԸ
1	Բարոյագիտություն				ԿԱԲԻՆԵՏՆԵՐ
2	Գեղագիտություն			1	Ինֆորմատիկայի
3	Վարվելակերպ			2	Համակարգչային գրաֆիկայի
4	Գործարար հարաբերությունների էթիկա			3	Աշխատանքի պաշտպանության և էկոլոգիայի
				4	Գծագրության
	V. ՊՐԱԿՏԻԿԱ	Կիսամյակ	Շաբաթ	5	Տեխնիկական մեխանիկայի
1	Ուսումնական			6	Անվտանգ երթևեկության կանոնների
1.1	Ինֆորմատիկա, ինֆորմացիոն տեխնոլոգիաներ և համակարգեր	4	1	7	Ուղևորափոխադրումների կազմակերպման և ղեկավարման
1.2	Ավտոմոբիլային ճանապարհներ	4	2	8	Ընդհանուր հումանիտար առարկաների
1.3	Բեռնման-բեռնաթափման աշխատանքների կազմակերպում	5	2	9	Ընդհանուր բնագիտական առարկաների
1.4	Ավտոտրանսպորտային միջոցներ	6	2		
1.5	Բեռնատար ավտոմոբիլային փոխադրումներ	6	1		
1.6	Ուղևորատար ավտոմոբիլային փոխադրումներ	6	1		
1.7	Ճանապարհային երթևեկության կազմակերպում և անվտանգություն	6	1		
2	Տեխնոլոգիական (արտադրական)	7	6		ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐ
3	Նախաավարտական	7	3	1	Նյութագիտության
	ԸՆԴԱՄԵՆԸ		19	2	Ավտոտրանսպորտային միջոցների
				3	Համակարգչային տեխնիկայի
VI ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍԱԿՈՐՈՒՄ Դիպլոմային նախագծի պաշտպանություն՝ 16.02 – 01.03					
					ԱՐՀԵՍԱՆՈՑՆԵՐ
				1	Էլեկտրատեղակայման և նյութագիտության
					ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ
				1	Սպորտային դահլիճ և մարզահրապարակ

VIII. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

1. Սովորողների գիտելիքների յուրացման մակարդակը ստուգելու, ինչպես նաև ուսումնառության արդյունավետությունը վերահսկելու նպատակով, ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ կարող են անցկացվել առանձին առարկաների ընթացիկ /միջանկյալ/ քննություններ, ստուգարքներ, ստուգողական աշխատանքներ: Ստուգարքներն, այդ թվում՝ տարբերակված, անցկացվում են առարկայի համար սահմանված ժամերի հաշվին: Ըստ առարկաների՝ ստուգողական աշխատանքների թիվը հաստատում է ուսումնամեթոդական որհուրդը: Քննությունների և ստուգարքների անցկացման կարգը սահմանում է ՀՀ կրթության և գիտության նախարարությունը:
2. Լաբորատոր աշխատանքների, օտար լեզուների, համակարգչային, գործնական, սեմինար, ֆիզիկական կուլտուրայի ,ինչպես նաև ուսումնամեթոդական խորհրդի կողմից երաշխավորած առանձին առարկաների գծով ուսումնական պարապմունքների, կուրսային նախագծման և արհեստանոցներում արտադրական ուսուցման ժամանակ ուսումնական խումբը բյուջետային ֆինանսավորման դեպքում կարող է բաժանվել ենթախմբերի՝ յուրաքանչյուրում առնվազն 8 ուսանող՝ ելնելով ուսուցանվող առարկայի յուրահատկությունից: Համապատասխան միջոցների առկայության պայմաններում ուսումնական պարապմունքները կարող են անցկացվել առանձին ուսանողների հետ /անհատական պարապմունքներ, ուսուցման անհատական ստեղծագործական ձևեր և այլն/: Ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ առանձին առարկաների տեսական դասընթացը կարող է կազմակերպվել հոսքային պարապմունքի ձևով: Ուսումնամեթոդական խորհրդի որոշումներն ու երաշխավորությունները ուսումնական տարվա սկզբում քննարկում է ուսումնական հաստատության խորհուրդը, հաստատում՝ տնօրենը:
3. Նախասիրական առարկաները, դրանց ծավալը և ուսուցման ժամկետը,բայց ոչ ավելի, քան շաբաթը 4 ժամ, որոշում է ուսումնական հաստատությունը: Ամբիոնների, առարկայական /ցիկլային/ հանձնաժողովների կողմից ներկայացված նախասիրական առարկաների ծրագիրը հաստատում է ուսումնական հաստատության ուսումնամեթոդական խորհուրդը:
4. Ֆիզիկական կուլտուրայի առարկայական ծրագրով նախատեսված նյութը կարող է իրացվել նաև արտաուսումնական պարապմունքների տարբեր ձևերով՝ մարզական ակումբներում, սեկցիաներում, խմբակներում:
5. Ուսումնական գործընթացի ժամանակացույցը, ելնելով տեղական պայմաններից, կարելի է փոփոխել՝ պարտադիր պահպանելով տեսական և գործնական ուսուցման, մոդուլների ամփոփման, պրակտիկայի, արձակուրդի ընդհանուր տևողությունը:
6. Ամբիոնների, առարկայական /ցիկլային/ հանձնաժողովների ներկայացրած խորհրդատվությունների անցկացման ձևը հաստատում է ուսումնամեթոդական խորհուրդը:
7. Պետական կառավարման լիազորված մարմնի կողմից հանձնարարված փաստաթղթերի ուսումնասիրումը կատարվում է համապատասխան առարկաների ժամերի հաշվին:
8. Պահուստային ժամերը տնօրինում է ուսումնական հաստատությունը՝ ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության սահմանած կարգի պահանջներին համապատասխան:
9. Ուսումնական պրակտիկական կարող է անցկացվել կենտրոնացված, կամ տեսական պարապմունքների հետ հաջորդաբար՝ պահպանելով պլանով նախատեսված ժամաքանակը: Պրակտիկայի անցկացման ժամկետը կարելի է տեղաշարժել ուսումնական տարվա նույն կիսամյակի ընթացքում: Պրակտիկայի յուրաքանչյուր ձև ավարտվում է հաշվետվությամբ՝ զնահատումով:
10. Նախաավարտական պրակտիկական անց է կացվում կենտրոնացված կարգով, ուսումնական պլանով նախատեսված ժամկետներում:
11. Ուսումնական հաստատությունը, ելնելով անհրաժեշտությունից, կարող է ստեղծել լրացուցիչ կաբինետներ, մասնագիտացված լսարաններ:

ՄՈՂՈՒԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ` ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մողուլի դասիչը` ԱՀՀ - 4-09-001

Մողուլի տևողությունը 36 ժամ

Դասախոսություն` 18 ժամ

Գործնական պարապմունքներ` 18 ժամ

Մողուլի նպատակը Այս մողուլը նախատեսված է այն անձանց համար, ովքեր կարիք ունեն գարգացնելու և ամրապնդելու հաղորդակցության իրենց ունակությունները: Մողուլը կարելի է յուրացնել ոչ միայն մասնագիտական ուսումնառությանը զուգընթաց, այլև առանձին, քանի որ այն պարունակում է ընդհանուր կրթության և անձի զարգացման տարրեր: Ավարտելով այս մողուլը ուսանողը ձեռք կբերի հաղորդակցության համար էական նշանակություն ունեցող ունակություններ, ինքնավստահություն, որպեսզի կարողանա արդյունավետ և ակտիվ կերպով դրսևորվել աշխատանքային ու մասնագիտական գործունեության ընթացքում, ինչպես նաև` անձնական կյանքում:

Մուտքային պահանջները Չկան

Արդյունքները

1. Սահմանել ուսումնառության անձնական նպատակները,
2. Բանավոր և գրավոր տեղեկատվական հաղորդում կատարել պարզ թեմաների և տեքստերի մասին,
3. Նախաձեռնել, պահպանել, եզրփակել երկխոսություններ և քննարկումներ,
4. Մեկնաբանել սխեմաներ, աղյուսակներ, դիագրամաներ, քարտեզներ և նկարներ.
5. Կատարել փաստաթղթավորում:

Գնահատման կարգը Մողուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Արդյունք 1 Սահմանել ուսումնառության անձնական նպատակները:

Կատարման չափանիշներ

- ա. ձիշտ է սահմանում ուսումնառության անձնական նպատակները,
- բ. ձիշտ է պլանավորում և կիրառում ուսումնառության անձնական նպատակների ձեռքբերմանն ուղղված ուսումնառության գործընթացները,
- գ. ձիշտ է սահմանում ուսումնառության տարբեր եղանակները:

Գնահատման միջոցը

Սովորողին կհանձնարարվի սահմանել ուսումնառության անձնական նպատակները, պլանավորել և կիրառել ուսումնառության անձնական նպատակների ձեռքբերմանն ուղղված ուսումնառության գործընթացները, սահմանել ուսումնառության տարբեր եղանակները: Կտրվեն մի շարք թեստային և հոգեբանական հարցեր:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում բերվում են իրական աշխատանքային փորձի օրինակներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Դասախոսություն՝ 2 ժամ

Գործնական պարապմունքներ՝ 2 ժամ

Արդյունք 2 Բանավոր և գրավոր տեղեկատվական հաղորդում կատարել պարզ թեմաների և տեքստերի մասին:

Կատարման չափանիշներ

- ա. ճիշտ է օգտագործում բանավոր և գրավոր խոսքի համապատասխան կառուցվածքը,
- բ. ճիշտ է ներկայացնում կատարված հաղորդումը՝ պարզ տեղեկատվություն, կարծիքներ կամ գաղափարներ,
- գ. ճիշտ է ներկայացնում տեղեկատվության առանձնացումը / խմբավորումը նպատակային է կատարում/
- դ. ճիշտ է ներկայացնում հաղորդման իրականացումը հաշվի առնելով իրավիճակը և լսարանը:

Գնահատման միջոցը

Սովորողին կհանձնարարվի բանավոր և գրավոր տեղեկատվական հաղորդում կատարել պարզ թեմաների և տեքստերի մասին: Կտրվեն մի շարք թեստային և հոգեբանական հարցեր, ինչպես նաև կառաջադրվեն տեղեկատվության նպատակային խմբավորման աշխատանքներ բանավոր և գրավոր խոսքի համապատասխան կառուցվածք ստուգելու նպատակով:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Կազմակերպվում են իրավիճակային և դերային խաղեր՝ առավելագույնս նմանացված աշխատանքային իրավիճակին: Ուսուցման ընթացքում բերվում են իրական աշխատանքային փորձի օրինակներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Դասախոսություն՝ 4 ժամ

Գործնական պարապմունքներ՝ 2 ժամ

Արդյունք 3 Նախաձեռնել, պահպանել, եզրփակել երկխոսություններ և քննարկումներ:

Կատարման չափանիշներ

- ա. ճիշտ է կիրառում «ակտիվ ունկնդրման» ժամանակ օգտագործվող հմտությունները (պարզաբանումներ ստանալու ձգտումը, գրառումներ կատարելը, ամփոփելը)
- բ. ճիշտ է ներկայացնում ազատ ձևով ձևակերպումը, արտահայտումը և պաշտպանում է իր գաղափարները, տեսակետներն ու կարծիքները,
- գ. կարողանում է ցուցաբերել համոզելու հստակություն,
- դ. կարողանում է կատարել է ճիշտ ամփոփում (եզրափակում):

Գնահատման միջոցը

Սովորողին կառաջադրվեն իրավիճակներ, որտեղ կարող է պաշտպանել իր գաղափարները, կտրվեն խնդիրներ և երկխոսության ընթացքում դիմացինին համոզելու, իր խոսքն ամփոփելու, եզրակացություն անելու կարողությունները ստուգելու վերաբերյալ:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների, առաջադրվող խնդիրների միջոցով: Կազմակերպվում են իրավիճակային և դերային խաղեր՝ առավելագույնս նմանացված աշխատանքային իրավիճակին: Ուսուցման ընթացքում բերվում են իրական աշխատանքային փորձի օրինակներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Դասախոսություն՝	4 ժամ
Գործնական պարապմունքներ՝	4 ժամ

Արդյունք 4 Մեկնաբանել սխեմաներ, աղյուսակներ, դիագրամաներ, քարտեզներ և նկարներ.

Կատարման չափանիշներ:

ա. ճիշտ է նախանշում սխեմաների աղյուսակների, դիագրամաների, քարտեզների և նկարների նշանակությունը և նրանց միջև եղած տարբերությունները,

բ. կարողանում է մեկնաբանելու համար օգտագործել խոսքի համապատասխան կառուցվածքը:

Գնահատման միջոցը

Ուսանողին առաջադրվում են սխեմաներ, աղյուսակներ, դիագրամաներ, քարտեզներ և նկարներ, մեկնաբանման, դրանց նշանակությունը և նրանց միջև եղած տարբերությունները ներկայացնելու կարողությունները ստուգելու նպատակով:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների, սխեմաների, աղյուսակների, դիագրամաների, քարտեզների և նկարների միջոցով: Կիրառվում են ձևաթղթեր, ձևաչափեր, այլ դիտակտիկ նյութեր:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Դասախոսություն՝	2 ժամ
Գործնական պարապմունքներ՝	4 ժամ

Արդյունք 5 Կատարել փաստաթղթավորում:

Կատարման չափանիշներ

ա. ճիշտ է սահմանում տարբեր փաստաթղթերը ըստ նրանց նշանակության,

բ. ճիշտ է նախանշում տարբեր փաստաթղթերի օգտագործման տեղը և դերը,

գ. ճիշտ է կատարում տարբեր տեսակի տեղեկատվությունների փաստաթղթավորումը:

Գնահատման միջոցը

Ուսանողին տրամադրվում են տարբեր փաստաթղթեր՝ պահանջելով ըստ նշանակության խմբավորում և տեղեկատվությունների փաստաթղթավորում՝ ըստ տեսակների:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների, տարբեր փաստաթղթերի օգտագործման, տարբեր տեսակի տեղեկատվությունների փաստաթղթավորման միջոցով: Կիրառվում են ձևաթղթեր, ձևաչափեր, այլ դիտակտիկ նյութեր:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Դասախոսություն`	6 ժամ
Գործնական պարապմունքներ`	6 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ` ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

Մոդուլի դասիչը` ԱՀՀ 4-09-001

Մոդուլի տևողությունը` 36 ժամ

դասախոսություն` 18 ժամ

գործնական պարապմունք` 18 ժամ

Մոդուլի նպատակը Այս մոդուլի նպատակն է սովորողներին աշխատանքի անվտանգության և առաջին օգնության վերաբերյալ համապատասխան գիտելիքներ մատուցելը, ինչպես նաև աշխատանքի պաշտպանության և առաջին օգնության միջոցառումների կազմակերպման վերաբերյալ հմտություններ զարգացնելը:

Մուտքային պահանջները` Զկան

Արդյունքները

- 1.Կարողանա ներկայացնել աշխատանքի պաշտպանության իրավական և կազմակերպչական դրույթները,
- 2.Կարողանա շարադրել անվտանգության տեխնիկայի նորմերը և կանոնները ձեռնարկություններում,
3. Հստակ ներկայացնի արտադրական սանիտարիայի և հիգենայի վերաբերյալ պահանջները,
4. Կազմակերպել առաջին օգնություն և ներկայացնել անհրաժեշտ միջոցները:

Գնահատման կարգը Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Արդյունք 1. Կարողանա ներկայացնել աշխատանքի պաշտպանության իրավական և կազմակերպչական դրույթները:

Կատարման չափանիշներ

- ա. ճիշտ է շարադրում աշխատանքի պաշտպանության վերաբերյալ իրական ակտերը և օրենքները,
- բ. կարողանում է լրացնել ձեռնարկություններում աշխատանքի պաշտպանության կազմակերպման ներքին նորմատիվային փաստաթղթերը,
- գ. հստակ պատկերացնում է աշխատանքի պաշտպանության նորմերի և կանոնների խախտման հետ կապված պատասխանատվությունը,
- դ. ճիշտ է շարադրում աշխատանքի պաշտպանության նորմերի և կանոնների պահպանման նկատմամբ վերահսկողության ձևերը և մեխանիզմները,

ե. ճիշտ է ներկայացնում արտադրությունում դժբախտ դեպքերի և պատահարների հետաքննության, փաստաթղթավորման և հաշվառման կարգ,

զ. ճիշտ է շարադրում արտադրության տարբեր մակարդակների ղեկավարների պատասխանատվությունը աշխատանքի պաշտպանության նորմերի պահպանման վերաբերյալ:

Գնահատման միջոցը

Ուսանողին տրվում են հարցեր աշխատանքի պաշտպանության, իրավական ակտերի, ձեռնարկություններում աշխատանքի պաշտպանության կազմակերպման ներքին նորմատիվային փաստաթղթերի. աշխատանքի պաշտպանության նորմերի և կանոնների խախտման հետ կապված պատասխանատվության. աշխատանքի պաշտպանության նորմերի և կանոնների պահպանման նկատմամբ վերահսկողության ձևերի և մեխանիզմների, արտադրությունում դժբախտ դեպքերի և պատահարների հետաքննության, փաստաթղթավորման և հաշվառման կարգի. արտադրության տարբեր մակարդակների ղեկավարների պատասխանատվության, աշխատանքի պաշտպանության նորմերի պահպանման վերաբերյալ:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների, տարբեր վթարային դեպքերի, տարբեր իրավիճակների քննարկման միջոցով: Ուսուցման ընթացքում բերվում են իրական աշխատանքային փորձի օրինակներ:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Դասախոսություն`	6 ժամ
Գործնական պարապմունքներ`	4 ժամ

Արդյունք 2 Կարողանա շարադրել անվտանգության տեխնիկայի նորմերը և կանոնները ձեռնարկություններում:

Կատարման չափանիշներ

ա. կարողանում է շարադրել տեխնոլոգիական սարքավորումների, մեխանիզմների, փոխադրամիջոցների շահագործման անվտանգության տեխնիկայի հիմնական պահանջները,

բ. կարողանում է ներկայացնել էլեկտրաանվտանգության կանոնները և պաշտպանությունը, հրդեհանվտանգության կանոնները և պաշտպանությունը,

գ. կարողանում է շարադրել ճնշման տակ աշխատող սարքավորումների և մեխանիզմների անվտանգ շահագործման կանոնները:

Գնահատման միջոցը

Ուսանողին տրվում են հարցեր աշխատանքի պաշտպանության, տեխնոլոգիական սարքավորումների, մեխանիզմների շահագործման անվտանգության տեխնիկայի հիմնական պահանջների. էլեկտրաանվտանգության կանոնների և պաշտպանության, հակահրդեհային պաշտպանության կանոնների, ճնշման տակ աշխատող սարքավորումների և մեխանիզմների անվտանգ շահագործման կանոնների վերաբերյալ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների, տարբեր վթարային դեպքերի, տարբեր իրավիճակների քննարկման միջոցով: Ուսուցման ընթացքում բերվում են իրական աշխատանքային փորձի օրինակներ:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Դասախոսություն՝	4 ժամ
Գործնական պարապմունքներ՝	6 ժամ

Արդյունք 3 Հստակ ներկայացնի արտադրական սանիտարիայի և հիգիենայի վերաբերյալ պահանջները:

Կատարման չափանիշներ

- ա. ճիշտ է պատկերացնում արտադրական սանիտարիայի և հիգիենայի հասկացությունները,
- բ. ճիշտ շարադրում է արտադրական միկրոկլիմայի վերաբերյալ նորմատիվային պահանջները,
- գ. ճիշտ ներկայացնում է արտադրական աղմուկից և ցնցումներից պաշտպանվելու միջոցները,
- դ. ճիշտ շարադրում է արտադրական լուսավորվածությանը ներկայացվող պահանջները և նորմերը:

Գնահատման միջոցը

Ուսանողին տրվում են հարցեր արտադրական սանիտարիայի և հիգիենայի հասկացությունների, արտադրական միկրոկլիմայի նկատմամբ նորմատիվային պահանջների, արտադրական աղմուկից և ցնցումներից պաշտպանվելու միջոցների վերաբերյալ: Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների, սանիտարիայի և հիգիենայի, տարբեր վթարային դեպքերի և տարբեր իրավիճակների քննարկման միջոցով: Ուսուցման ընթացքում բերվում են իրական աշխատանքային փորձի օրինակներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Դասախոսություն՝	4 ժամ
Գործնական պարապմունքներ՝	4 ժամ

Արդյունք 4 Կազմակերպել առաջին օգնություն և ներկայացնել անհրաժեշտ միջոցները:

Կատարման չափանիշներ

- ա. կարողանում է ճիշտ կատարել արհեստական շնչառություն,
- բ. կարողանում է ճիշտ կատարել սրտի աշխատանքի վերականգնում,
- գ. կարողանում է դադարեցնել արյան հոսքը և դնել վիրակապ,
- դ. կարողանում է վիրակապել կոտրվածքները.,
- ե. կատարում է առաջին օգնություն այրվածքների դեպքում,
- զ. ճիշտ է կատարում առաջին օգնությունն էլեկտրահարման դեպքում:

Գնահատման միջոցը

Ուսանողին տրվում են հարցեր արհեստական շնչառության իրականացման, սրտի աշխատանքի վերականգնման, արյան հոսքի դադարեցման, վիրակապ դնելու, այրվածքների, էլեկտրահարման դեպքում առաջին օգնության ցուցաբերելու վերաբերյալ: Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների, գործնական պարապմունքների, ֆիլմերի ցուցադրման միջոցով: Կազմակերպվում են իրավիճակային և դերային խաղեր՝ առավելագույնս նմանացված աշխատանքային իրավիճակին: Ուսուցման ընթացքում բերվում են իրական աշխատանքային փորձի օրինակներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Դասախոսություն՝	4 ժամ
Գործնական պարապմունքներ՝	4 ժամ

ՄՈԴՈՒԽ ԱՆՎԱՆՈՒՄԸ` ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ԳՐԱՖԻԿԱ

Մոդուլի դասիչը՝ ՓԿԿ 4-09-001

Մոդուլի տևողությունը՝ 108 ժամ

Դասախոսություն՝ 36 ժամ

Գործնական պարապմունքներ՝ 72 ժամ

Մոդուլի նպատակը՝

Այս մոդուլը նախատեսված է «Տեխնիկ» մասնագետի պատրաստման համար: Ավարտելով այս մոդուլը՝ սովորողը ձեռք կբերի տեխնիկական և մասնագիտական աշխատանքային գծագրեր կարդալու և հասկանալու կարողություններ:

Մուտքային պահանջները՝

Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է լիարժեքորեն տիրապետի «Գծագրություն» և «Երկրաչափություն» առարկաներին՝ միջնակարգ դպրոցի ծրագրի ծավալով:

Արդյունքները

- 1. Գծի պարզ երկրաչափական պատկերների և մարմինների պրոյեկցիաներ,**
- 2. Կատարի էսքիզային և աշխատանքային գծագրեր,**
- 3. Կարդա մեխանիզմների աշխատանքային գծագրերը, նրանց պայմանական նշանակումները և մասնագրերը:**

Գնահատման կարգը՝

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Արդյունք 1 Գծի պարզ երկրաչափական պատկերներ և մարմինների պրոյեկցիաներ.

Կատարման չափանիշներ

- ա. ճիշտ է շարադրում պարզ պատկերների պրոյեկցիաների կառուցման կանոնները և տրված պրոյեկցիայով ճիշտ է կառուցում մյուս պրոյեկցիաները և տարածական պատկերը,**
- բ. ճիշտ է ներկայացնում գծագրության չափանիշները և դրանց կիրառումը,**
- գ. ճիշտ է ներկայացնում պարզագույն սխեմայի և տարբեր կտրվածքների կառուցման օրինաչափությունները:**

Գնահատման միջոցը

Սովորողին տրվում են անհատական առաջադրանքներ հարթության վրա երկրաչափական կառուցումներ կատարելու, տիպային մեքենամասի երեք պրոեկցիաները

հարթության վրա պրոեկտելու, տարածական (աքսիոնոմետրիկ) պատկերը կառուցելու, ինչպես նաև էսքիզը ու աշխատանքային գծագիրը պատկերելու համար: Սովորողը պետք է տիպային մեքենամասի բնօրինակից կատարի համապատասխան էսքիզը և աշխատանքային գծագիրը: Աշխատանքի կատարումը ստուգելու համար կատարվում է բնօրինակի և աշխատանքային գծագրի համեմատություն:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Ուսուցումը կատարվելու է գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով ուսանողներին տալ գծագրությանն առնչվող գիտելիքներ և կարողություններ: Ուսանողներին տրվելու են գիտելիքներ գծագրության մեթոդների և չափանիշների մասին:

Կառուցման խնդիրների լուծման միջոցով ուսանողները ձեռք են բերելու պրոյեկցիաների կառուցման, տրված պրոյեկցիաների միջոցով տարածական տեսքի կառուցման կարողություններ: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են ցուցադրական տարբեր նյութեր, ուսումնական և մեթոդական գրականություն, պաստառներ և գծագրական պատկերներ ու պարագաներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Դասախոսություն	12 ժամ
Գործնական պարապմունքներ	24 ժամ

Արդյունք 2 Կատարել էսքիզային և աշխատանքային գծագրեր:

Կատարման չափանիշներ

- ա. ճիշտ է ընտրում չափող գործիքները և կատարում չափումները,
- բ. ճիշտ է կատարում տրված առարկայի էսքիզը,
- գ. ճիշտ է կազմում տրված առարկայի աշխատանքային գծագիրը՝ տեխնիկական պահանջներին համապատասխան:

Գնահատման միջոցը

Սովորողին տրվում են տարբեր տիպային մեքենամասերի էսքիզներ ու աշխատանքային գծագրեր դրանց վրա մեքենամասերի չափերը, չափերի թույլվածքները, մաքրության դասերը, մակերևույթների ձևի թույլատրելի շեղումները պատկերելու համար: Սովորողը պետք է տիպային մեքենամասի (ատամնաանիվ, փոկանիվ, աստղանիվ, լիսեռ, կցաշուրթ և այլն) էսքիզի և աշխատանքային գծագրի վրա ներկայացնի տեխնիկական պահանջները և մեկնաբանի այդ մեքենամասի առանձին տարրերի (երիթ, բազմաերիթ, տարբեր նշանակության առվակներ, երեսակներ և այլն) նշանակումները: Գնահատումը կատարվում է աշխատանքային գծագրի օրինակի հիման վրա: Արդյունքի բավարար իրագործումը հիմնված կլինի սահմանված կատարման բոլոր չափանիշների իրականացման վրա:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողին տալ գծագրերի կառուցման, կատարման կարողություններ: Ուսուցումն իրականացվելու է մոդելների, չափող գործիքների, համակարգիչների և ուսումնական գրականության օգնությամբ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Դասախոսություն	12 ժամ
----------------	--------

Գործնական պարապմունքներ՝ 24 ժամ

Արդյունք 3. Կարդա մեխանիզմների աշխատանքային գծագրերը, նրանց պայմանական նշանակումները և մասնագրերը:

Կատարման չափանիշներ

ա. արդիական տեխնիկական պահանջներին համապատասխան, բոլոր էական տվյալների ընդգրկմամբ՝ ճիշտ է բացատրում մեխանիզմների գծագրերը,

բ. ճիշտ է հատկորոշում և մեկնաբանում մեխանիզմների պայմանական նշանները:

Գնահատման միջոցը

Սովորողին տրվում են տարբեր մեքենաների հանգույցների և մեքենամասերի հավաքական գծագրեր դրանց վրա բացատրելու առանձին մեքենամասերի (ատամնաանիվ, փոկանիվ, աստղանիվ, լիսեռ, կցաշուրթ և այլն) ինչպես նաև այդ մեքենամասի առանձին տարրերի (երիթ, բազմերիթ, տարբեր նշանակության առվակներ, երեսակներ և այլն) դիրքավորման նշանակումները: Սովորողը պետք է մեկնաբանի հավաքական գծագրերում պատկերված նստեցվածքները, հավաքական գծագրի և մասնագրի փոխադարձ կապը, ինչպես նաև հավաքական գծագրի հիման վրա ընտրի համապատասխան մեքենամասի աշխատանքային գծագիրը: Արդյունքի բավարար իրագործումը հիմնված կլինի սահմանված կատարման բոլոր չափանիշների իրականացման վրա:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողին տալ աշխատանքային գծագրեր կարդալու և բացատրելու կարողություններ: Ուսուցումն իրականացվելու է մոդելների, դիտակտիկ նյութերի, մեքենայի հանգույցների մոդելների, հավաքական գծագրերի ատլասների, չափող գործիքների, համակարգիչների և ուսումնական գրականության օգնությամբ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Դասախոսություն՝	12 ժամ
Գործնական պարապմունքներ՝	24 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԳՐԱՖԻԿԱ

Մոդուլի դասիչը՝	ՓԿԿ 4-09-002
Մոդուլի տևողությունը՝	90 ժամ
դասախոսություն	36 ժամ
գործնական պարապմունք	54 ժամ

Մոդուլի նպատակը Մոդուլը նպատակ ունի սովորողին տալ գիտելիքներ մեքենաների կոնստրուկտավորման, պատրաստման ու շահագործման ուղղությամբ, ինչպես նաև մեքենաների, դրանց հանգույցների և մեքենամասերի, հավաքական գծագրերում դրանց փոխհարաբերությունների երկրաչափական մոդելավորման մեթոդների մասին:

Մոդուլը յուրացնելուց հետո, ուսանողը պետք է կարողանա համակարգչային նախագծման, մասնավորապես AUTOCAD ծրագրերի ինտեգրացված փաթեթի միջոցով նախագծել մեխանիզմներ ու մեքենաներ:

Սուտքային պահանջները

Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է ունենա գրաֆիկական կառուցումների որոշակի գիտելիքներ, ծանոթ լինի Windows 95, 98, 2000, 2006, XP օպերացիոն համակարգերի հետ և ունենա անհատական համակարգչով աշխատելու փորձ:

Արդյունքները

1. Ծանոթ լինի նախագծման ավտոմատացված համակարգերին:
2. Իմանա AUTOCAD ծրագրային փաթեթի հնարավորությունները:
3. Ծանոթ լինի երկչափ համակարգում կառուցման ռեժիմներին:
4. Կարողանա մոդելավորել եռաչափ երկրաչափական օբյեկտները:

Գնահատման կարգը

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների լիարժեք ապահովումն է:

Արդյունք 1 Ծանոթ լինի նախագծման ավտոմատացված համակարգերին:

Կատարման չափանիշներ

- ա. ճիշտ է ներկայացնում նախագծման ավտոմատացված համակարգերը,
- բ. ճիշտ է որոշում գոյություն ունեցող ծրագրերը,
- գ. ճիշտ է համեմատում ծրագրերը:

Գնահատման միջոցը

Սովորողին կներկայացվի որոշակի խնդիրներ և կպահանջվի, որ նա ներկայացնի նախագծման ավտոմատացված համակարգերը և որոշի ու համեմատի գոյություն ունեցող ծրագրերը:

Արդյունքը համարվում է բավարար ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Դասախոսությունների ընթացքում ուսանողներին հաղորդվելու են գիտելիքներ նախագծման ավտոմատացված համակարգերից: Ուսուցումն իրականացվելու է համակարգչի և համապատասխան գրականության օգնությամբ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Դասախոսություն`	8 ժամ
Գործնական պարապմունքներ`	14 ժամ

Արդյունք 2 Իմանա AUTOCAD ծրագրային փաթեթի հնարավորությունները:

Կատարման չափանիշներ

- ա. ճիշտ է բացում AUTOCAD-ի պատուհանը և համակարգչային մենյուների տողը,
- բ. ճիշտ է օգտվում գործիքային վահանակներից,
- գ. ճիշտ է ընտրում չափման միավորները և մասշտաբները,
- դ. ճիշտ է դասակարգում գծագրի սահմանների դույմական և մետրական համակարգերը:

Գնահատման միջոցը

Ուսանողին կներկայացվի որոշակի խնդիրներ և կպահանջվի, որ նա կարողանա բացել AUTOCAD-ի պատուհանը ու համակարգչային մենյուների տողը և դասակարգում գծագրի սահմանների դույմական և մետրական համակարգերը:

Արդյունքը համարվում է բավարար ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Դասախոսությունների ընթացքում ուսանողներին հաղորդվելու են գիտելիքներ AUTOCAD ծրագրային փաթեթի հնարավորությունների վերաբերյալ: Ուսուցումն իրականացվելու է համակարգչի և համապատասխան գրականության օգնությամբ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Դասախոսություն`	8 ժամ
Գործնական պարապմունքներ`	14 ժամ

Արդյունք 3 Ծանոթ լինի երկչափ համակարգում կառուցման ռեժիմներին:

Կատարման չափանիշներ

- ա. ճիշտ է մեկնաբանում կառուցման շերտերի առավելությունները,
- բ. ճիշտ է օգտվում օբյեկտների կառչման գործիքաշարքից,
- գ. կարողանում է օգտվել խմբագրման հրամաններից,
- դ. կարողանում է գծագրերին ավելացնել տեքստ,
- ե. ճիշտ է կիրառում չափերը և ընտրում չափադրման ձևը:

Գնահատման միջոցը

Սովորողին տրվում են անհատական առաջադրանքներ մեկնաբանելու կառուցման շերտերի առավելությունները, օգտվելու օբյեկտների կառչման գործիքաշարքից ու խմբագրման հրամաններից, կարողանա գծագրերին տեքստեր ավելացնել և կիրառելու չափերը ու ընտրել չափագրման ձևը: Արդյունքը համարվում է բավարար ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան համակարգչային տեխնիկա, ուսումնական գրականություն, տիպային մեքենամասերի մոդելներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Դասախոսություն`	10 ժամ
Գործնական պարապմունքներ`	14 ժամ

Արդյունք 4 Կարողանա մոդելավորել եռաչափ երկրաչափական օբյեկտները:

Կատարման չափանիշներ

- ա. ճիշտ է վիզուալացնում մոդելը,
- բ. ճիշտ է ընտրում մոդելի անհրաժեշտ տեսքը,
- գ. կարողանում է գծագրել մակերևույթները,
- դ. կարողանում է եռաչափ գծագրից անցնել երկչափի,
- ե. կարողանում է եռաչափ գծագրությունում կատարել անիմացիաներ և ռեդերինգ:

Գնահատման միջոցը

Սովորողին տրվում են անհատական առաջադրանքներ տարածության մեջ եռաչափ օբյեկտների մոդելավորում կատարելու, տիպային մեքենամասի երեք պրոեկցիաներով տարածական

(աքսիոնոմետրիկ) պատկերը կառուցելու համար: Սովորողը պետք է տիպային մեքենամասի բնօրինակից կատարի համապատասխան օբյեկտի մոդելավորումը: Արդյունքը համարվում է բավարար ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան համակարգչային տեխնիկա, ուսումնական գրականություն, տիպային մեքենամասերի մոդելներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Դասախոսություն`	10 ժամ
Գործնական պարապմունքներ`	12 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ` ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԵՆԱՆԻԿԱ

Մոդուլի դասիչը` ՓԿԿ 4-09-003

Մոդուլի տևողությունը` 180 ժամ

դասախոսություն 90 ժամ

գործնական պարապմունք 90 ժամ

Մոդուլի նպատակը` Այս մոդուլի նպատակն է ուսանողներին տալ տեսական գիտելիքներ տեսական մեխանիկայի և նյութերի դիմադրության բաժիններից, որոնց իմացությունը թույլ կտա յուրացնել և ճշտորեն կիրառել ունեցած գիտելիքները մասնագիտական առարկաների ուսումնասիրման թե տեսական և թե նախագծման աշխատանքներում:

Ավարտելով այս մոդուլը` սովորողը ձեռք կբերի ստատիկայի բաժնի խնդիրներ լուծելու և պարզ կառուցվածքների հաշվարկի կարողություններ:

Մուտքային պահանջները` Զկան

Արդյունքները

1. Հավասարակշռության վիճակում գտնվող ձողի, հեծանի կամ տարածական մարմնի համար որոշի հենարանային հակազդումները.
2. Կատարի ձգված կամ սեղմված ձողի լայնական հատույթի չափերի ընտրություն տրված բեռնավորման դեպքում.
3. Հեծանի կամ ձողի համար կատարի ամրության հաշվարկ և
 - տրված ձևի հատույթի համար կատարի չափերի ընտրություն.
 - տրված չափերով հատույթի համար ստուգի ամրության բավարարվածությունը.
4. Ստուգի սեղմված ձողի կայուն հավասարակշռության պայմանը և կայունության պայմանի օգտագործմամբ որոշի թույլատրելի բեռի ու հատույթի անհրաժեշտ չափերը:

Գնահատման կարգը Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների լիարժեք ապահովումն է:

Արդյունք 1 Հավասարակշռության վիճակում գտնվող ձողի, հեծանի կամ տարածական մարմնի համար որոշել հենարանային հակազդումները:

Կատարման չափանիշներ

ա. ճիշտ է որոշում ձգված կամ սեղմված ձողի ամրակցված եզրի հենարանային հակազդումները,
բ. կարողանում է տարբերել հենարանային ամրացումների տեսակները և հակազդումների որոշումը և
ճիշտ է կատարում հեծանի հարթ ծռումը:

Գնահատման միջոցը

Սովորողին տրվում է կոնկրետ ձողի կամ հավասարակշռության վիճակում գտնվող հեծանի սխեմա և պահանջվում է որոշել հենարանային հակազդումները և ստուգել ստացված արդյունքները:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե սովորողն անսխալ կարողանում է որոշել հենարանային հակազդումները և ստուգել ստացված արդյունքները:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Դասախոսությունների ընթացքում ուսանողներին հաղորդվելու են գիտելիքներ տեսական մեխանիկայի ստատիկայի բաժնից, իսկ գործնական պարապմունքների ընթացքում ուսանողները սովորելու են տեսական նյութի գործնական կիրառության մեթոդները, կոնկրետ խնդիրների լուծման եղանակները: Ուսուցումն իրականացվելու է ձողի մոդելների, չափող գործիքների, հեծանների հենարանային ամրակցումների վերաբերյալ ամրակցված մոդելների և համապատասխան գրականության օգնությամբ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Դասախոսություն`	20 ժամ
Գործնական պարապմունքներ`	20 ժամ

Արդյունք 2 Կատարել ձգված կամ սեղմված ձողի լայնական հատույթի չափերի ընտրություն տրված բեռնավորման դեպքում:

Կատարման չափանիշներ

- ա. կարողանում է ճիշտ որոշել ձողի ներքին ուժային գործոնները և կառուցել էպյուրները,
- բ. ճիշտ է ընտրում ձողի ամրության պայմանի կիրառմամբ ձգված ձողի հատույթի չափերը,
- գ. կարողանում է ստուգել ամրության ապահովումը ձողի լայնական հատույթի հայտնի ձևի և չափերի դեպքում` ամրության պայմանի կիրառմամբ:

Գնահատման միջոցը

Սովորողին կտրվի հավասարակշռության վիճակում գտնվող ձողի սխեմա և կպահանջվի որոշել ներքին ուժային գործոնները, կազմել էպյուրները և կատարել ամրության հաշվարկ:

Արդյունքի ձեռքբերումները բավարար է համարվում, եթե սովորողն անսխալ է կառուցում ներքին ուժային գործոնների էպյուրները:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողին տալ գիտելիքներ նյութերի դիմադրության ընդհանուր հասկացությունների, ձողի ձգման ու սեղմման, ինչպես նաև ամրության հաշվարկ կատարելու վերաբերյալ: Ուսուցումն իրականացվելու է ձողի մոդելների, չափող գործիքների, կշռաքարերի (կամ կշեռքի և տարբեր ծանրության առարկաների), զսպանակի, թելի, գծագրական պարագաների և տեղեկատու գրականության միջոցով:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Դասախոսություն`	22 ժամ
-----------------	--------

Արդյունք 3 Հեծանի կամ ձողի համար կատարել ամրության հաշվարկ:

Կատարման չափանիշներ

- ա. ճիշտ է որոշում հեծանի հավասարակշռության պայմանների կիրառմամբ հենարանային հակազդումները և ստուգում որոշման ճշտությունը,
- բ. ճիշտ է որոշում հեծանի ներքին ուժային գործոնների ֆունկցիաների տեսքերը և կառուցում դրանց էպյուրները,
- գ. ճիշտ է կատարում ամրության պայմանի կիրառմամբ հեծանի լայնական հատույթի տրված ձևի չափերի ընտրությունը,
- դ. կարողանում է ամրության պայմանի կիրառմամբ ստուգել հատույթի չափերի բավարարությունը:

Գնահատման միջոցը

Սովորողին տրվում է հավասարակշռության վիճակում գտնվող հեծանի սխեմա և կպահանջվի որոշել հենարանային հակազդումները, որոշել ներքին ուժային գործոնները, կառուցել լայնական ուժերի և ծռող մոմենտների էպյուրները, կատարել ամրության հաշվարկ:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե սովորողն անսխալ է կատարում լայնական հատույթի չափերի ընտրությունը:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսության, գործնական պարապմունքների միջոցով` նպատակ ունենալով սովորողին տալ գիտելիքներ հեծանի հարթ ծման տեսությունից: Ուսուցումն իրականացվելու է ձողի մոդելների, չափող գործիքների, կշռաքարերի (կամ կշեռքի և տարբեր ծանրության առարկաների), զսպանակի, թելի, գծագրական պարագաների և տեղեկատու գրականության միջոցով:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Դասախոսություն`	24 ժամ
Գործնական պարապմունքներ`	24 ժամ

Արդյունք 4 Ստուգել սեղմած ձողի կայուն հավասարակշռության պայմանը և կայունության պայմանի օգտագործմամբ որոշի թույլատրելի բեռի ու հատույթի անհրաժեշտ չափերը:

Կատարման չափանիշներ

- ա. ճիշտ է որոշում կայունության պայմանի կիրառմամբ սեղմված ձողի լայնական հատույթի չափերը և թույլատրելի բեռը,
- բ. ճիշտ է որոշում կայունության պայմանի միջոցով հայտնի լայնական չափերորոշվ սեղմված ձողի վրա ազդող երկայնական ուժի թույլատրելի մեծությունը,
- գ. ամրության պայմանի կիրառմամբ ճիշտ է կատարում հեծանի լայնական հատույթի տրված ձևի չափերի ընտրությունը,
- դ. կարողանում է ամրության պայմանի կիրառմամբ ստուգել հատույթի չափերի բավարարությունը:

Գնահատման միջոցը

Սովորողին տրվում է սեղմված ձողի սխեմա և պահանջվում է կատարել կայունության հաշվարկ երկու տարբերակով` լայնական հատույթի չափերի կամ թույլատրելի բեռի հաշվարկ և ընտրություն:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե սովորողը կարողանում է անսխալ իրագործել հատույթի չափերի ընտրության հաշվարկի հաջորդական մոտարկումների մեթոդը կամ հայտնի չափերի դեպքում ճիշտ է որոշում բեռի թույլատրելի մեծությունը:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողին տալ գիտելիքներ սեղնված ձողի կայության հաշվարկի բաժնից: Դասախոսությունների ընթացքում ուսանողներին հաղորդվելու են գիտելիքներ տեսական մեխանիկայի և նյութերի դիմադրության համապատասխան բաժիններից, իսկ գործնական պարապմունքների ընթացքում՝ կոնկրետ խնդիրների լուծման կարողություններ: Ուսուցումն իրականացվելու է ձողի սխեմայի, չափող գործիքների, գծագրական պարագաների և տեղեկատու գրականության միջոցով:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Դասախոսություն`	24 ժամ
Գործնական պարապմունքներ`	24 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ` ՄԵՏԱՆԻՉՄՆԵՐԻ ԵՎ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Մոդուլի դասիչը` ՓԿԿ 4-09-004

Մոդուլի տևողությունը` 72 ժամ

դասախոսություն 36 ժամ

գործնական պարապմունք 36 ժամ

Մոդուլի նպատակը

Մոդուլը նպատակ ունի սովորողին տալ գիտելիքներ մեքենաների ու մեխանիզմների աշխատանքի սկզբունքների, մեքենաներում մեխանիզմների փոխգործունեության մասին: Մոդուլը յուրացնելուց հետո, ուսանողը պետք է կարողանա կատարել մեխանիզմների վերլուծություն ու սինթեզ, այսինքն, հետազոտել մեխանիզմների կինեմատիկ ու դինամիկ բնութագրերը, ըստ տրված կինեմատիկ ու դինամիկ հատկանիշների կառուցել մեխանիզմը

Մուտքային պահանջները Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է ուսումնասիրած լինի «Բարձրագույն մաթեմատիկա», «Ֆիզիկա» առարկաները, ինչպես նաև ՓԿԿ 04-09-001, ՓԿԿ 04-09-003 մոդուլները:

Արդյունքները

1. իմանա մեխանիզմների կառուցվածքային և կինեմատիկական վերլուծությունը,
2. իմանա մեխանիզմների ուժային վերլուծությունը,
3. կարողանա որոշել մեքենայի շարժման պարամետրերը,
4. կարողանա սինթեզել բարձրակարգ զույգերով մեխանիզմները,
5. կարողանա որոշել մեխանիզմների մեջ շփման ուժերը,
6. կարողանա որոշել մեխանիկական օգտակար գործողության գործակիցը:

Գնահատման կարգը

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների լիարժեք ապահովումն է:

Արդյունք 1. Իմանա մեխանիզմների կառուցվածքային և կինեմատիկական վերլուծությունը:

Կատարման չափանիշներ

- ա. ճիշտ է ներկայացնում մեխանիզմը, մեքենան, կինեմատիկ գույգը,
- բ. կարողանում է դասակարգել կինեմատիկ գույգերը,
- գ. ճիշտ է ներկայացնում կինեմատիկ շղթաները,
- դ. կարողանում է որոշել մեխանիզմի ազատության աստիճանները,
- ե. կարողանում է կառուցել մեխանիզմի դիրքերը:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումը կատարվելու է հարց ու պատասխանների, ինչպես նաև գործնական աշխատանքի կատարման հիման վրա:

Սովորողը պետք է գիտենա.

- մեքենայի մեխանիզմը և կինեմատիկ գույգը,
- կինեմատիկ գույգերի դասակարգումը,
- կինեմատիկ շղթաները,

Արդյունքի ձեռքբերումը կհամարվի դրական, եթե սովորողը ճիշտ է ներկայացնում մեխանիզմը, մեքենան, կինեմատիկ գույգը, կինեմատիկ շղթաները, կարողանում է դասակարգել կինեմատիկ գույգերը, որոշել մեխանիզմի ազատության աստիճանները և կառուցել դրա դիրքերը, դրանով իսկ կատարելով մեխանիզմների կառուցվածքային և կինեմատիկական ճիշտ վերլուծություն:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Ուսուցումը կատարվելու է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են համապատասխան ուսումնական մակետներ, մոդելներ և մեքենամասեր, պաստառներ, ուսումնական համապատասխան գրականություն, տեղեկատուներ, գծագրական գործիքներ և գծագրման համար անհրաժեշտ պիտույքներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Դասախոսություն`	6 ժամ
Գործնական պարապմունքներ`	6 ժամ

Արդյունք 2 Իմանա մեխանիզմների ուժային վերլուծությունը:

Կատարման չափանիշներ

- ա. ճիշտ է ներկայացնում հարթ մեխանիզմների օղակների իներցիոն ուժերը,
- բ. ճիշտ է ներկայացնում ուժային պլանը,
- գ. կարողանում է որոշել թափանիվի իներցիայի մոմենտը:

Գնահատման միջոցը

Սովորողին տրվում են անհատական առաջադրանքներ հարթ մեխանիզմների օղակների իներցիոն ուժերը և թափանիվի իներցիայի մոմենտը որոշելու ու դրանց ուժային պլանը կառուցելու համար:

Սովորողը պետք է գիտենա.

- մեխանիզմների օղակների իներցիոն ուժերը,
- ուժային պլանը,
- թափանիվի իներցիայի մոմենտը:

Արդյունքը համարվում է բավարար, եթե սովորողը կարողանում է կատարել մեխանիզմների ուժային վերլուծություն:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Ռեսուրսները կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Ռեսուրսների ընթացքում օգտագործվելու են համապատասխան ուսումնական մակետային, մեխանիզմներ և մոդելներ, պաստառներ, տեխնիկական գրականություն, տեղեկագիրք, դիտակտիկ նյութեր, զծագրական գործիքներ և զծագրման համար անհրաժեշտ պիտույքներ:

Ռեսուրսների քանակական ցուցանիշներ

- Դասախոսություն՝ 6 ժամ
- Գործնական պարապմունքներ՝ 6 ժամ

Արդյունք 3. Կարողանա որոշել մեքենայի շարժման պարամետրերը:

Կատարման չափանիշներ

- ա. ճիշտ է որոշում մեխանիզմի արագություններն ու արագացումները, պտտման ակնթարթային կենտրոնը և արագացումների կենտրոնը,
- բ. ճիշտ է ներկայացնում մեխանիզմի շարժման հավասարումները և ուժային բնութագիրը:
- գ. ճիշտ է կատարում ամրության պայմանի կիրառմամբ հեծանի լայնական հատույթի տրված ձևի չափերի ընտրությունը,

Գնահատման միջոցը

Սովորողին տրվում են անհատական առաջադրանքներ որոշելու մեխանիզմի արագություններն ու արագացումները, պտտման ակնթարթային և արագացումների կենտրոնները և կարողանա ներկայացնել մեխանիզմի շարժման հավասարումներն ու դրանց ուժային բնութագիրը:

Սովորողը պետք է գիտենա.

- մեխանիզմի արագություններն ու արագացումները,
- մեխանիզմի պտտման ակնթարթային և արագացումների կենտրոնները,
- մեխանիզմի շարժման հավասարումները և ուժային բնութագիրը:

Արդյունքը համարվում է բավարար, եթե սովորողը կարողանում է որոշել մեքենայի շարժման պարամետրերը:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Ռեսուրսները կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Ռեսուրսների ընթացքում օգտագործվելու են ուսումնական մակետային համապատասխան մեխանիզմներ և մոդելներ, պաստառներ, տեխնիկական գրականություն, տեղեկատու, դիտակտիկ նյութեր և զծագրման համար անհրաժեշտ զծագրական պիտույքներ:

Ռեսուրսների քանակական ցուցանիշներ

- Դասախոսություն՝ 6 ժամ
- Գործնական պարապմունքներ՝ 6 ժամ

Արդյունք 4 Կարողանա սինթեզել բարձրակարգ զույգերով մեխանիզմները:

Կատարման չափանիշներ

- ա. ճիշտ է ներկայացնում հարթ մեխանիզմի կառուցվածքային սինթեզը,
- բ. ճիշտ է ներկայացնում ատամնավոր մեխանիզմների սինթեզը,

Գնահատման միջոցը

Սովորողին տրվում են անհատական առաջադրանքներ ներկայացնելու հարթ և ատամնավոր մեխանիզմների կառուցվածքային սինթեզները:

Սովորողը պետք է գիտենա.

- հարթ մեխանիզմի կառուցվածքային սինթեզը,
- ատամնավոր մեխանիզմների սինթեզը,

Արդյունքը համարվում է բավարար, եթե սովորողը կարողանում է սինթեզել բարձրակարգ զույգերով մեխանիզմները:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Ռեսուրսները կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Ռեսուցման ընթացքում օգտագործվելու են համապատասխան ուսումնական մակետային մեխանիզմներ կամ մոդելներ, պլակատներ, տեխնիկական գրականություն, տեղեկատու, դիտակտիկ նյութեր, գծագրական գործիքներ, գծագրման համար անհրաժեշտ պիտույքներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Դասախոսություն՝ 6 ժամ

Գործնական պարապմունքներ՝ 6 ժամ

Արդյունք 5. Կարողանա որոշել մեխանիզմների մեջ շփման ուժերը:

Կատարման չափանիշներ

ա. ճիշտ է ներկայացնում շփման ուժերը և շփման անկյունը,

բ. ճիշտ է մեկնաբանում կայունացած շարժումը և ինքնաարգելակումը,

Գնահատման միջոցը

Սովորողին տրվում են անհատական առաջադրանքներ ներկայացնելու մեխանիզմներում շփման ուժերը և դրանցում որոշելու շփման անկյունը, ինչպես նաև կայունացած շարժումն ու ինքնաարգելակումը:

Սովորողը պետք է գիտենա.

- շփման ուժերը,
- շփման անկյունը,
- կայունացած շարժումը,
- ինքնաարգելակում:

Արդյունքը համարվում է բավարար, եթե սովորողը կարողանում է որոշել մեխանիզմներում շփման ուժերը:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Ռեսուրսները կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Ռեսուցման ընթացքում օգտագործվելու են համապատասխան ուսումնական մակետային մեխանիզմներ կամ մոդելներ, պաստառներ, տեխնիկական գրականություն, տեղեկատու, դիտակտիկ նյութեր, գծագրական գործիքներ, գծագրման համար անհրաժեշտ պիտույքներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Դասախոսություն՝ 6 ժամ

Գործնական պարապմունքներ՝ 6 ժամ

Արդյունք 6. Կարողանա որոշել մեխանիկական օգտակար գործողության գործակիցը:

Կատարման չափանիշներ

ա. ճիշտ է որոշում կինեմատիկ զույգի մեխանիկական օգտակար գործողության գործակիցը,
բ. կարողանում է որոշել մեխանիզմի մեխանիկական օգտակար գործողության գործակիցը,

Գնահատման միջոցը

Սովորողին տրվում են անհատական խնդիրներ որոշելու մեխանիզմներում կինեմատիկ զույգի և մեխանիզմի մեխանիկական օգտակար գործողության գործակիցները:

Սովորողը պետք է գիտենա.

- կինեմատիկ զույգի մեխանիկական օգտակար գործողության գործակիցը,
- մեխանիզմի մեխանիկական օգտակար գործողության գործակիցը:

Արդյունքը համարվում է բավարար, եթե սովորողը կարողանում է որոշել մեխանիկական օգտակար գործողության գործակիցը:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են ուսումնական համապատասխան մեխանիզմներ և մոդելներ, պաստառներ, տեխնիկական գրականություն, տեղեկատու, դիտակտիկ նյութեր, գծագրական գործիքներ, գծագրման համար անհրաժեշտ պիտույքներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Դասախոսություն`	6 ժամ
Գործնական պարապմունքներ`	6 ժամ

ՄՈԴՈՒԽ ԱՆՎԱՆՈՒՄԸ` ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՄԱՍԵՐ

Մոդուլի դասիչը ՓԿԿ 4-09-005

Մոդուլի տևողությունը 54 ժամ

դասախոսություն 18 ժամ

գործնական պարապմունք 36 ժամ

Մոդուլի նպատակը Մոդուլը նպատակ ունի սովորողին տալ գիտելիքներ ընդհանուր նշանակության մեքենամասերի, մեխանիզմների ու հանգույցների հաշվարկի և կառուցվածքաշինության հիմունքների վերաբերյալ: Մոդուլը յուրացնելուց հետո, ուսանողը պետք է կարողանա կատարել տիպային և ոչ ստանդարտ մեքենամասերի ու հանգույցների հաշվարկ, ընտրել մեքենամասերի ձևերը, հաշվի առնելով աշխատանքային պայմանները` կատարել ամրության, կոշտության, կայունության և այլ հաշվարկներ:

Մուտքային պահանջները Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է ուսումնասիրած լինի «Բարձրագույն մաթեմատիկա», «Ֆիզիկա» առարկաները, ինչպես նաև ՓԿԿ 04-09-001, ՓԿԿ 04-09-003, ՓԿԿ 04-09-004 մոդուլները: Կատարվելու է կուրսային նախագիծ:

Արդյունքները

1. Իմանա մեքենամասերի նախագծման հիմունքները,
2. Իմանա մեխանիկական փոխանցումները,
3. Ծանոթ լինի պտտական շարժումը սպասարկող մեքենամասերին և սարքավորումներին,
4. Իմանա միացումները:

Գնահատման կարգը Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների լիարժեք ապահովումն է:

Արդյունք 1. Իմանա մեքենամասերի նախագծման հիմունքները:

Կատարման չափանիշներ

ա. ճիշտ է ներկայացնում մեխանիզմի աշխատունակության չափանիշները,

բ. ճիշտ է մեկնաբանում լարում և ամրության պաշար տերմինները,

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումը կատարվելու է հարց ու պատասխանների, ինչպես նաև գործնական աշխատանքի կատարման հիման վրա:

Սովորողը պետք է գիտենա.

- մեխանիզմի աշխատունակության չափանիշները,
- լարում և ամրության պաշար տերմինները:

Արդյունքի ձեռքբերումը կհամարվի դրական, եթե սովորողը ճիշտ է ներկայացնում մեխանիզմի աշխատունակության չափանիշները, ճիշտ մեկնաբանում լարումը և ամրության պաշարի տերմինները:

Հարցերին բանավոր պատասխանելիս թույլատրվում են որոշ ոչ էական սխալներ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Ուսուցումը կատարվելու է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են մեքենամասերի նախագծման համար անհրաժեշտ պլակատներ, ուսումնական համապատասխան գրականություն, տեղեկատուներ, գծագրական գործիքներ և գծագրման համար անհրաժեշտ պիտույքներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

- | | |
|--------------------------|-------|
| Դասախոսություն՝ | 6 ժամ |
| Գործնական պարապմունքներ՝ | 8 ժամ |

Արդյունք 2. Իմանա մեխանիկական փոխանցումները:

Կատարման չափանիշներ

ա. ճիշտ է դասակարգում մեխանիկական փոխանցումները,

բ. կարողանում է հաշվարկել գլանային ու կոնական ֆրիկցիոն, ինչպես նաև որդնակային և ատամնապտուտակավոր փոխանցումները,

գ. ճիշտ է ներկայացնում փոխանցումների երկրաչափական և ուժային պարամետրերը:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումը կատարվելու է հարց ու պատասխանների, ինչպես նաև գործնական աշխատանքի կատարման հիման վրա:

Ստորև ներկայացվում է

- մեխանիկական փոխանցումների դասակարգումը,
- գլանային ու կոնական ֆրիկցիոն հաշվարկը,
- որդնակային և ատամնապտուտակավոր փոխանցումների հաշվարկը,
- փոխանցումների երկրաչափական պարամետրերը,
- փոխանցումների ուժային պարամետրերը:

Արդյունքի ձեռքբերումը կհամարվի դրական, եթե սովորողը ճիշտ է դասակարգում մեխանիկական փոխանցումները, կարողանում է հաշվարկել գլանային ու կոնական ֆրիկցիոն, ինչպես նաև որդնակային և ատամնապտուտակավոր փոխանցումները, ճիշտ է ներկայացնում փոխանցումների երկրաչափական և ուժային պարամետրերը:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Ուսուցումը կատարվելու է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են մեխանիկական փոխանցումներ պարունակող համապատասխան ուսումնական մակետներ և մոդելներ, պլակատներ, ուսումնական համապատասխան գրականություն, տեղեկատուներ, գծագրական գործիքներ և գծագրման համար անհրաժեշտ պիտույքներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Դասախոսություն`	4 ժամ
Գործնական պարապմունքներ`	10 ժամ

Արդյունք 3 Ծանոթ լինի պտտական շարժումը սպասարկող մեքենամասերին և սարքավորումներին:

Կատարման չափանիշներ

- ա. կարողանում է տարբերել լիսեռը և սռնին,
- բ. կարողանում է կատարել լիսեռի ու սռնու հաշվարկ,
- գ. ճիշտ է ընտրում առանցքակալը և կատարում է դրա հաշվարկը,
- դ. ճիշտ է դասակարգում կցորդիչները,
- ե. կարողանում է կատարել կցորդիչների հաշվարկ:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումը կատարվելու է հարց ու պատասխանների, ինչպես նաև գործնական աշխատանքի կատարման հիման վրա:

Ստորև ներկայացվում է

- լիսեռի և սռնու միյև եղած տարբերությունը,
- լիսեռի ու սռնու հաշվարկը,
- առանցքակալի ընտրումը,
- առանցքակալի հաշվարկը,
- կցորդիչների տեսակները, նշանակությունը և աշխատանքի սկզբունքը,
- կցորդիչների հաշվարկը:

Արդյունքի ձեռքբերումը կհամարվի դրական, եթե սովորողը ճիշտ է կարողանում տարբերել լիսեռը սռնուց, կատարում է լիսեռի ու սռնու հաշվարկ, ճիշտ է ընտրում առանցքակալը և կատարում դրա հաշվարկը, ճիշտ է դասակարգում կցորդիչները և կարողանում է կատարել դրա հաշվարկը:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Ուսուցումը կատարվելու է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են պտտական շարժումով սպասարկվող մեքենամասեր և սարքավորումներ պարունակող համապատասխան ուսումնական մակետներ և մոդելներ, պլակատներ, ուսումնական համապատասխան գրականություն, տեղեկատուներ, գծագրական գործիքներ և գծագրման համար անհրաժեշտ պիտույքներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Դասախոսություն	4 ժամ
Գործնական պարապմունքներ	8 ժամ

Արդյունք 4 Իմանա միացումները:

Կատարման չափանիշներ

ա. ճիշտ է ներկայացնում գամային, եռակցված, պարուրակային ու երիթային միացումները,
բ. կարողանում է կատարել միացումների հաշվարկ:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումը կատարվելու է հարց ու պատասխանների, ինչպես նաև գործնական աշխատանքի կատարման հիման վրա:

- Ստորև ներկայացվում է
- գամային միացումները,
 - եռակցված միացումները,
 - պարուրակային միացումները,
 - երիթային միացումները,
 - միացումների հաշվարկ:

Արդյունքի ձեռքբերումը կհամարվի դրական, եթե սովորողը ճիշտ է ներկայացնում գամային, եռակցված, պարուրակային ու երիթային միացումները և կարողանում է կատարել դրանց հաշվարկները:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Ուսուցումը կատարվելու է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են գամային, եռակցված, պարուրակային ու երիթային միացումներ պարունակող համապատասխան ուսումնական մակետներ, մոդելներ և մեքենամասեր, պլակատներ, ուսումնական համապատասխան գրականություն, տեղեկատուներ, գծագրական գործիքներ և գծագրման համար անհրաժեշտ պիտույքներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Դասախոսություն	4 ժամ
Գործնական պարապմունքներ	10 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ ՆՅՈՒԹԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՆՔՆԵՐ

Մոդուլի դասիչը՝	ՓԿԿ 4-09-006
Մոդուլի տևողությունը՝	72 ժամ
Դասախոսություն	36 ժամ
Գործնական պարապմունքներ՝	36 ժամ

Մոդուլի նպատակը՝

Նպաստել, որպեսզի սովորողը ձեռք բերի գիտելիքներ սև և գունավոր մետաղների և դրանց համաձուլվածքների տեսակների, հատկությունների, մակնիշավորման սկզբունքների և կիրառության բնագավառների վերաբերյալ, ինչպես նաև ձեռք բերի մետաղները, համաձուլվածքները,

նախապատրաստվածքների պրոֆիլները ճանաչելու մակնիշավորման սկզբունքները գործնականում օգտագործելու կարողություն:

Մուտքային պահանջները` Չկան

Արդյունքները`

1. Իմանա թուջերի և պողպատների դասակարգումը, նրանց կիրառման բնագավառը և հիմնական ֆիզիկամեխանիկական հատկությունները,
2. Իմանա թուջերի և պողպատների մակնիշավորումը,
3. Իմանա խառատային մշակման ժամանակ կիրառվող գունավոր մետաղների և դրանց համաձուլվածքների դասակարգումը, կիրառման բնագավառները, հիմնական ֆիզիկամեխանիկական հատկությունները, մակնիշավորումը,
4. Իմանա խառատային կտրիչների համար օգտագործվող մետաղների դասակարգումը, կիրառման բնագավառը և մակնիշավորումը,
5. Իմանա մեքենաշինության մեջ կիրառվող պրոֆիլների տեսակները և կարողանա օգտվել պրոֆիլների ստանդարտներից:

Գնահատման կարգը`

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Արդյունք 1 Իմանալ թուջերի և պողպատների դասակարգումը, նրանց կիրառման բնագավառը և հիմնական ֆիզիկամեխանիկական հատկությունները.

Կատարման չափանիշներ

- ա. Ճիշտ է ներկայացնում պողպատների և թուջերի, որպես երկաթ ածխածնային միացության, կառուցվածքային էությունը և բացատրում դրանց դասակարգումը,
- բ. Ճիշտ է մեկնաբանում պողպատների և թուջերի հիմնական ֆիզիկամեխանիկական հատկությունները` ամրություն, կարծրություն, կռելիություն, պլաստիկություն,
- գ. Ճիշտ է մեկնաբանում պողպատների և թուջերի կիրառման բնագավառը ելնելով նրանց հիմնական ֆիզիկամեխանիկական հատկություններից,
- դ. Կարողանում է մետաղների նմուշների կոտրվածքներով ճանաչել և տարբերել թուջերը, և պողպատները,
- ե. Կարողանում է ձեռքի փականագործական գործիքներով` խարտոց, սրոցաքար, հղկաքար գնահատել պողպատի և թուջի բացարձակ և համեմատական ամրությունները և կարծրությունները:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումը կատարվելու է հարց ու պատասխանների, ինչպես նաև գործնական աշխատանքի կատարման հիման վրա:

Ստորև ներկայացվում է

- պողպատների և թուջերի, որպես երկաթ ածխածնային միացության, կառուցվածքային էությունը և դրանց դասակարգումը,
- պողպատների և թուջերի հիմնական ֆիզիկամեխանիկական հատկությունները` ամրություն, կարծրություն, կռելիություն, պլաստիկություն,

- պողպատների և թուջերի կիրառման բնագավառը, ելնելով նրանց հիմնական ֆիզիկամեխանիկական հատկություններից, մետաղների նմուշների կոտրվածքներով ճանաչել և տարբերել թուջերն ու պողպատները,
- ձեռքի փականագործական գործիքներով՝ խարտոց, սրոցաքար, հղկաքար գնահատել պողպատի և թուջի բացարձակ և համեմատական ամրությունները և կարծրությունները:

Արդյունքի ձեռքբերումը կհամարվի դրական, եթե հարցերի առնվազն 80%-ին տրվել են ճիշտ պատասխաններ: Մնացած հարցերի պատասխաններում կարող են թույլ տրվել որոշ ոչ էական սխալներ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են երկաթածխածնային դիագրամային պաստառ, պողպատների հատկությունները բնութագրող պաստառ, համապատասխան գրականություն և տեղեկատուներ, տարբեր մետաղների նմուշների կոտրվածքներ, ձեռքի փականագործական գործիքներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Տեսական ուսուցում՝	8 ժամ
Գործնական պարապմունք՝	8 ժամ

Արդյունք 2 Իմանալ թուջերի և պողպատների մակնիշավորումը.

Կատարման չափանիշներ

- ա. Ճիշտ է ներկայացնում պողպատների մակնիշավորումը,
- բ. Ճիշտ է ներկայացնում թուջերի մակնիշավորումը:

Գնահատման միջոցը

- Արդյունքի գնահատումը կատարվելու է գրավոր թեստերի միջոցով:
- Ստորև ներկայացվում է
 - պողպատների մակնիշավորումը,
 - թուջերի մակնիշավորումը:

Կառաջադրվեն առնվազն 10 հարցեր՝ թուջերի և երկաթների տարբեր մակնիշների վերաբերյալ 3 պատասխաններով, որոնցից 1-ը ճիշտ է: Արդյունքի ձեռքբերումը կհամարվի դրական, եթե տրվել են առնվազն 8 պատասխաններ: Մնացած 2 պատասխաններում կարող են լինել որոշ ոչ էական սխալներ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնակա պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են պողպատների և թուջերի տարբեր մակնիշների նմուշներ, պլականտներ, ուսումնական համապատասխան գրականություն և տեղեկատուներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Տեսական ուսուցում՝	6 ժամ
Գործնական պարապմունք՝	6 ժամ

Արդյունք 3 Իմանալ խառատային մշակման ժամանակ կիրառվող գունավոր մետաղների և դրանց համաձուլվածքների դասակարգումը, կիրառման բնագավառները, հիմնական ֆիզիկամեխանիկական հատկությունները, մակնիշավորումը.

Կատարման չափանիշներ

- ա. Ճիշտ է ներկայացնում խառատային մշակման ժամանակ առավել հաճախ կիրառվող գունավոր մետաղների՝ ալյումինի և պղնձի համաձուլվածքների կիրառման բնագավառը,,
- բ. Ճիշտ է ներկայացնում ալյումինի և պղնձի համաձուլվածքների դասակարգումը, դրանց մակնիշավորումը
- գ. Ճիշտ է ներկայացնում ալյումինի և պղնձի համաձուլվածքների ֆիզիկամեխանիկական հատկությունները,
- դ. Ճիշտ է ներկայացնում ալյումինի և պղնձի համաձուլվածքների մակնիշավորումը,

Գնահատման միջոցը

Արդյունքի յուրացումը գնահատվելու է գրավոր թեստերի միջոցով:

Ստորև ներկայացվում է

- խառատային մշակման ժամանակ առավել հաճախ կիրառվող գունավոր մետաղների՝ ալյումինի և պղնձի համաձուլվածքների կիրառման բնագավառը,
- ալյումինի և պղնձի համաձուլվածքների դասակարգումը, դրանց մակնիշավորումը,
- ալյումինի և պղնձի համաձուլվածքների ֆիզիկամեխանիկական հատկությունները,
- ալյումինի և պղնձի համաձուլվածքների մակնիշավորումը:

Սովորողին կառաջադրվեն ալյումինի և պղնձի համաձուլվածքների ֆիզիկամեխանիկական հատկությունների և մակնիշման վերաբերյալ առնվազն 10 հարցեր 3 պատասխաններով, որոնցից 1-ը ճիշտ է: Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական առնվազն 8 ճիշտ պատասխանների դեպքում, մնացած պատասխաններում թույլատրվում են ոչ էական սխալներ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնակա պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են ալյումինի և պղնձի համաձուլվածքի դասակարգման, ֆիզիկամեխանիկական հատկությունների վերաբերյալ պլակատներ, նմուշներ, ուսումնական համապատասխան գրականություն և տեղեկատուներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Տեսական ուսուցում՝	8 ժամ
Գործնական պարապմունք՝	8 ժամ

Արդյունք 4 Իմանա խառատային կտրիչների համար օգտագործվող մետաղների դասակարգումը, կիրառման բնագավառը և մակնիշավորումը.

Կատարման չափանիշներ

- ա. Ճիշտ է ներկայացնում խառատային կտրիչների իրանների համար օգտագործվող մետաղների դասակարգումը, մակնիշավորումը,
- բ. Ճիշտ է ներկայացնում կտրիչների կտրող եզրերի համար օգտագործվող մետաղների դասակարգումը,
- գ. Ճիշտ է ներկայացնում կարծր համաձուլվածքների մակնիշավորումը,

դ. Կարողանում է արտաքին տեսքից տարբերել տարբեր մակնիշի կարծր համաձուլվածքներից պատրաստված կտրիչները:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումը կատարվելու է հարց ու պատասխանների, ինչպես նաև գործնական աշխատանքների կատարման հիման վրա:

Ստորև ներկայացվում է

- խառատային կտրիչների իրանների համար օգտագործվող մետաղների դասակարգումն ու մակնիշավորումը,
- կտրիչների կտրող եզրերի համար օգտագործվող մետաղների դասակարգումը,
- կարծր համաձուլվածքների մակնիշավորումը,
- արտաքին տեսքից տարբերել տարբեր մակնիշի կարծր համաձուլվածքներից պատրաստված կտրիչները:

Արդյունքի ձեռքբերումը կհամարվի դրական, եթե սովորողը հարցերի առնվազն 80%-ին տվել է ճիշտ պատասխաններ: Մնացած հարցերի պատասխաններում կարող են թույլ տրվել որոշ ոչ էական սխալներ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնակա պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում անհրաժեշտ է կտրիչների համար օգտագործվող մետաղների և դասակարգման ու մակնիշման պլակատներ, կտրիչների սալիկներ, ուսումնական համապատասխան գրականություն, տեղեկատուներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Տեսական ուսուցում	6 ժամ
Գործնական պարապմունք	6 ժամ

Արդյունք 5 Իմանա մեքենաշինության մեջ կիրառվող պրոֆիլների տեսակները և կարողանա օգտվել պրոֆիլների ստանդարտներից.

Կատարման չափանիշներ

- ա. Ճիշտ է դասակարգում մեքենաշինության մեջ կիրառվող պրոֆիլների տեսակները,
- բ. Ճիշտ է ներկայացնում պրոֆիլների հիմնական երկրաչափական բնութագրերը,
- գ. Կարողանում է օգտվել համապատասխան ստանդարտներից, պրոֆիլների տեսականիները որոշելու համար:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատվում է հարց ու պատասխանների և գործնական աշխատանքների կատարման հիման վրա:

Ստորև ներկայացվում է

- դասակարգել մեքենաշինության մեջ կիրառվող պրոֆիլների տեսակները,
- պրոֆիլների հիմնական երկրաչափական բնութագրերը,
- օգտվել համապատասխան ստանդարտներից, պրոֆիլների տեսականիները որոշելու համար:

Արդյունքի ձեռքբերումը կհամարվի դրական, եթե սովորողը հարցերի առնվազն 80%-ին տվել է ճիշտ պատասխաններ: Մնացած հարցերի պատասխաններում կարող են թույլ տրվել որոշ ոչ էական սխալներ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են պրոֆիլների տարբեր տեսակների պլակատներ և նմուշներ, ստանդարտներ, ուսումնական համապատասխան գրականություն, տեղեկատուներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Տեսական ուսուցում`	8 ժամ
Գործնական պարապմունք`	8 ժամ

ՄՈԴՈՒԽ ԱՆՎԱՆՈՒՄԸ` ԱՇԱԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մոդուլի դասիչը` ՓԿԿ 4-09-007

Մոդուլի տևողությունը` 36 ժամ

Դասախոսություն` 18 ժամ

Գործնական պարապմունքներ` 18 ժամ

Մոդուլի նպատակը`

Սովորողի մոտ ձևավորել ցանկացած բնագավառում անհրաժեշտ աշխատանքային մշակույթ և էթիկա, տալ իմացություն աշխատանքային գործունեության ընթացքում հաջողության հասնելու նախապայմանների մասին, ինչպես նաև ղեկավարի և գործընկերների հետ արդյունավետ հարաբերվելու կարողություններ:

Մուտքային պահանջները` Զկան

Արդյունքները`

1. Տիրապետի աշխատանքի տեղավորվելու կարողությունների,
2. Դրսևորի անհրաժեշտ վերաբերմունք աշխատանքի և աշխատավայրի նկատմամբ,
3. Տիրապետի աշխատանքի մշակույթին և էթիկային,
4. Իմանա աշխատանքում հաջողության հասնելու նախապայմանները և պատշաճ հարաբերվի ղեկավարի հետ,
5. Արդյունավետ աշխատի թիմում:

Գնահատման կարգը`

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Արդյունք 1. Տիրապետել աշխատանքի տեղավորվելու կարողությունների:

Կատարման չափանիշներ

- ա. ճիշտ է շարադրում գործող աշխատանքային օրենսգրքի անհրաժեշտ դրույթները,
- բ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի ընդունվելու և դրանից ազատվելու համար անհրաժեշտ բոլոր գործընթացները,
- գ. ճիշտ է կազմում գրավոր ինքնակենսագրություն (CV),
- դ. ճիշտ և մանրամասն բանավոր ներկայացնում է իր կենսագրությունը:

Գնահատման միջոցը

Ուսանողին կներկայացվի որոշակի խնդիրներ և կպահանջվի, որ նա կազմի գրավոր ինքնակենսագրություն (CV) և բանավոր ներկայացնում է իր կենսագրությունը: Կտրվեն մի շարք հարցեր՝ գործող աշխատանքային օրենսգրքի անհրաժեշտ դրույթներից և աշխատանքի ընդունվելու ու ազատվելու համար անհրաժեշտ բոլոր գործընթացներից:

Արդյունքը համարվում է բավարար ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողին տալ գիտելիքներ աշխատանքի տեղավորելու կանոնակարգի վերաբերյալ: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են աշխատանքային օրենսգիրքը և այլ կանոնակարգեր, տեղեկատուներ, համապատասխան որոշումներ և այլն:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Դասախոսություն՝	4 ժամ
Գործնական պարապմունքներ՝	4 ժամ

Արդյունք 2. Դրսևորել անհարժեշտ վերաբերմունք աշխատանքի և աշխատավայրի նկատմամբ:

Կատարման չափանիշներ

ա. ճիշտ է ներկայացնում աշխատանքի և շրջապատի նկատմամբ դրական տրամադրվելու կարողությունները,

բ. ճիշտ է ներկայացնում գործընկերների նկատմամբ հարգալից վերաբերմունքի և արդյունավետորեն հարաբերվելու օրինակներ,

գ. կարողանում է ցուցաբերել առաջադրված իրավիճակում պատասխանատվության զգացման դրսևորումներ,

դ. կարողանում է ցուցաբերել գործընկերոջը և ղեկավարին ուշադիր լսելու և հասկանալու դրսևորումներ:

Գնահատման միջոցը

Ուսանողին կներկայացվի մի քանի պրոբլեմային իրավիճակ աշխատանքի և շրջապատի նկատմամբ՝ դրանց նախապայմաններով: Կպահանջվի, որ նա արագ կողմնորոշվի, ուսումնասիրի դրանց պատճառները, բացահայտի դրանք, առաջարկի կանխարգելիչ միջոցներ, կարողանա ցուցաբերել գործընկերոջը և ղեկավարին ուշադիր լսելու, հասկանալու դրսևորումներ և տա արագ ու արդյունավետ լուծումներ: Կտրվեն մի շարք թեստային և հոգեբանական հարցեր:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Կազմակերպվում են իրավիճակային և դերային խաղեր՝ առավելագույն նմանացված աշխատանքային իրավիճակին: Ուսուցման ընթացքում բերվում են իրական աշխատանքային փորձի օրինակներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Դասախոսություն 2 ժամ

Գործնական պարապմունքներ՝ 4 ժամ

Արդյունք 3. Տիրապետել աշխատանքի մշակույթին և էթիկային.

Կատարման չափանիշներ

- ա. ճիշտ է ներկայացնում կազմակերպության նպատակները, արժեքները և այդտեղ կիրառվող ընդհանուր աշխատանքային մեթոդները, աշխատանքային և միջանձնային հարաբերությունները,
- բ. ճիշտ վերաբերմունք է դրսևորում և հարգալից է կոնֆլիկտային գործընկերների նկատմամբ,
- գ. կարողանում է ճիշտ լուծումներ առաջարկել խնդրի առաջադարձած պրոբլեմային իրավիճակում:

Գնահատման միջոցը

Ուսանողին կներկայացվի մի քանի հարցեր աշխատանքի մշակույթի և էթիկայի վերաբերյալ: Կպահանջվի, որ նա ճիշտ ներկայացնի կազմակերպության նպատակները և հարգալից է կոնֆլիկտային գործընկերների նկատմամբ: Կտրվեն մի շարք թեստային և հոգեբանական հարցեր:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Կազմակերպվում են իրավիճակային և դերային խաղեր՝ առավելագույն նմանացված աշխատանքային իրավիճակին: Ուսուցման ընթացքում բերվում են իրական աշխատանքային փորձի օրինակներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Դասախոսություն 4 ժամ

Գործնական պարապմունքներ՝ 2 ժամ

Արդյունք 4. Իմանալ աշխատանքում հաջողության հասնելու նախապայմանները և պատշաճ հարաբերվի ղեկավարի հետ.

Կատարման չափանիշներ

- ա. ճիշտ է բացատրում աշխատանքի հաճախման և ճշտապահության կարևորությունը,
- բ. ճիշտ է ներկայացնում ղեկավարի հետ հարաբերվելու ձևերը, իր և ղեկավարի իրավունքներն ու պարտականությունները,
- գ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի արդյունավետության ու որակի ապահովման ընդհանուր սկզբունքները,
- դ. ճիշտ և մանրամասն բանավոր ներկայացնում է իր կենսագրությունը:

Գնահատման միջոցը

Ուսանողին կներկայացվի մի քանի հարցեր աշխատանքի հաճախման և ճշտապահության կարևորության, ղեկավարի հետ հարաբերվելու և աշխատանքի արդյունավետության ու որակի ապահովման վերաբերյալ: Կպահանջվի, որ նա ճիշտ ներկայացնի աշխատանքում հաջողության հասնելու նախապայմանները: Կտրվեն մի շարք թեստային և հոգեբանական հարցեր:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Կազմակերպվում են իրավիճակային և դերային խաղեր՝ առավելագույն նմանացված

աշխատանքային իրավիճակին: Ուսուցման ընթացքում բերվում են իրական աշխատանքային փորձի օրինակներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Դասախոսություն	4 ժամ
Գործնական պարապմունքներ`	4 ժամ

Արդյունք 5. Արդյունավետ աշխատել թիմում:

Կատարման չափանիշներ

- ա. ճիշտ է ներկայացնում թիմային աշխատանքի հիմնական սկզբունքները,
- բ. ճիշտ է ներկայացնում թիմային խնդիրների լուծման մեթոդները,
- գ. ճիշտ է դրսևորում է անհրաժեշտ վարքագիծ` թիմային աշխատանքի առաջադրված իրավիճակում` ցուցաբերելով փոխօգնություն, համբերատարություն, նվիրվածություն աշխատանքին և ընկերներին:

Գնահատման միջոցը

Ուսանողին կներկայացվի մի քանի հարցեր` թիմային աշխատանքի և խնդիրների լուծման մեթոդների վեպրաբերյալ: Կպահանջվի, որ նա ճիշտ ներկայացնի թիմային աշխատանքում առաջադրված իրավիճակի անհրաժեշտ վարքագիծը և համբերատարության ու նվիրվածության նախապայմանները: Կտրվեն մի շարք թեստային և հոգեբանական հարցեր:

Արդյունքը համարվում է ձեռքբերված` բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Կազմակերպվում են իրավիճակային և դերային խաղեր` առավելագույն նմանացված աշխատանքային իրավիճակին: Ուսուցման ընթացքում բերվում են իրական աշխատանքային փորձի օրինակներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Դասախոսություն	4 ժամ
Գործնական պարապմունքներ`	4 ժամ

ՄՈՂՈՒԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ` ՄԱՐՔԵԹԻՆԳ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԱԿՏՈՏՐԱՆՍՊՈՐՏՈՒՄ

Մոդուլի դասիչը ՓԿԿ 4-09-008

Մոդուլի տևողությունը 72 ժամ

դասախոսություն	36 ժամ
գործնական պարապմունք	36 ժամ

Մոդուլի նպատակը`

Այս մոդուլի նպատակն է սովորողներին տալ կազմակերպության (ծեռնարկության), որպես տնտեսական միավորի և նրա ստորաբաժանումների տնտեսական և ֆինանսական գործունեությանը վերաբերող գիտելիքներ և ձևավորել ձեռնարկության գործունեության էական ցուցանիշների հաշվարկման կարողություններ:

Մուտքային պահանջները`

Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է լիարժեքորեն տիրապետի «Հանրահաշիվ» առարկային` միջնակարգ դպրոցի ծրագրի ծավալով:

Արդյունքները՝

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

1. Պատկերացում ունենա ձեռնարկության ռեսուրսների և դրանց օգտագործման ցուցանիշների մասին,
2. Պատկերացում ունենա ձեռնարկության մարքեթինգային ռազմավարության մասին,
3. Իմանա գնագոյացման հասկացությունները և գնի ձևավորման մեխանիզմը,
4. Իմանա ժամանակակից ավտոտրանսպորտի մենեջմենթի էությունը, խնդիրները և առանձնահատկությունները,
5. Իմանա ձեռնարկության և նրա ստորաբաժանումների կառավարման ապարատի կառուցվածքը:

Գնահատման կարգը՝

Սոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների ապահովումն է:

Արդյունք 1. Պատկերացում ունենալ ձեռնարկության ռեսուրսների և դրանց օգտագործման ցուցանիշների մասին:

Կատարման չափանիշներ

- ա. ճիշտ է ներկայացնում ձեռնարկության գործունեության համար անհրաժեշտ ռեսուրսները և ճիշտ է բնութագրում դրանք,
- բ. ճիշտ է ներկայացնում ձեռնարկության հիմնական արտադրական ֆոնդերը և դրանց հետ կապված հիմնական ցուցանիշները, բնագավառի աշխատանքի բնույթը և առանձնահատկությունները,
- գ. ճիշտ է ներկայացնում ձեռնարկության շրջանառու միջոցները և դրանց հետ կապված հիմնական ցուցանիշները,
- դ. ճիշտ է ներկայացնում ձեռնարկության աշխատանքային ռեսուրսները և դրանց հետ կապված հիմնական ցուցանիշները:

Գնահատման միջոցը

Սովորողին կտրվի հարցեր ձեռնարկության հիմնական արտադրական ֆոնդերի (շենքեր, կառույցներ, փոխանցող հարմարանքներ, մեքենաներ և սարքավորումներ, տրանսպորտային միջոցներ, արտադրական և տնտեսական գույք և այլն), հիմնական արտադրական ֆոնդերի հետ կապված հիմնական հասկացություններ (գնահատում, ամորտիզացիա), հիմնական ֆոնդերի օգտագործման մակարդակը բնութագրող կարևորագույն ցուցանիշների (էքստենսիվ, ինտենսիվ, ինտեգրալ ցուցանիշներ) վերաբերյալ:

Արդյունքի ձեռքբերումը կհամարվի բավարար, եթե սովորողն ճիշտ պատասխանի տրված հարցերին և բացատրի, թե ինչ հետևանքներ կունենա ֆոնդերի օգտագործման մակարդակը բնութագրող այս կամ այն ցուցանիշի փոփոխությունը:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը կիրականացվի դասախոսության, գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողներին տալ գիտելիքներ ձեռնարկության ռեսուրսների և դրանց օգտագործման ցուցանիշների մասին:

Ուսուցման ընթացքում օգտագործվելու է ուսումնական գրականություն, արտադրական իրավիճակների նմանակման նյութեր, հաշվարկներ կատարելու միջոցներ և այլն:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Դասախոսություն	8 ժամ
Գործնական պարապմունք	8 ժամ

Ուսումնառության արդյունք 2 Պատկերացում կազմել ձեռնարկության մարքեթինգային ռազմավարության մասին:

Կատարման չափանիշներ

ա. ճիշտ է ներկայացնում մարքեթինգային ռազմավարության կարևորությունը ժամանակակից տնտեսության մեջ,

բ. ճիշտ է ներկայացնում շուկաների վերլուծության ընդհանուր մոտեցումները և քայլերը,

գ. ճիշտ է կիրառում շուկայի սեզմենտավորման անհրաժեշտ քայլերը,

դ. ճիշտ է ներկայացնում ապրանքների և ծառայությունների հոսքի կառավարման էությունը և գործընթացը:

Գնահատման միջոցը

Սովորողին կպահանջվի կատարել շուկայական իրավիճակների վերլուծություն: Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե սովորողը ցուցաբերում է իրավիճակները հասկանալու կարողություն, կատարում է տրամաբանական եզրահանգումներ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը կիրականացվի դասախոսության և գործնական պարապմունքների միջոցով:

Ուսուցման ընթացքում օգտագործվելու է ուսումնական գրականություն, ամսագրեր և տեղեկատու նյութեր, թափանցաթերթիկներ և այլն:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Դասախոսություն	6 ժամ
Գործնական պարապմունք	6 ժամ

Ուսումնառության արդյունք 3 Իմանալ գնագոյացման հասկացությունները և գնի ձևավորման մեխանիզմը:

Կատարման չափանիշներ

ա. ճիշտ է ներկայացնում գնային քաղաքականության էությունը,

բ. ճիշտ է ներկայացնում գների տեսակները և դրանց տարրերը,

գ. ճիշտ է ներկայացնում արտադրության ծախսերի և արտադրության ինքնարժեքի հաշվարկման կարգը,

դ. ճիշտ է հաշվարկում ձեռնարկության աշխատանքի ֆինանսական արդյունքները:

Գնահատման միջոցը

Սովորողին կտրվեն հարցեր գնագոյացման ընդհանուր հասկացությունների, գնի տարրերի վերաբերյալ, կտրվի գործնական առաջադրանք՝ հաշվարկել որևէ արտադրանքի ինքնարժեքը և գինը, որոշել շահույթի գումարը: Ուսանողը պետք է ցույց տա գնագոյացման կոնկրետ իրավիճակներում ճիշտ կողմնորոշվելու ընդունակություն:

Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե բանավոր հարցադրումներին պատասխանելիս ուսանողը հանդես է բերում մտքերը գրագետ և հիմնավոր ներկայացնելու ընդունակություն, իսկ հաշվարկները կատարում է ճիշտ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը կիրականացվի դասախոսության և գործնական պարապմունքների միջոցով:

Ուսուցման ընթացքում օգտագործվելու է ուսումնական գրականություն, մեթոդական նյութեր, թափանցաթերթիկներ և այլն:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Դասախոսություն	8 ժամ
Գործնական պարապմունք`	8 ժամ

Ուսումնառության արդյունք 4 Իմանալ ժամանակակից մենեջմենթի էությունը, խնդիրները և առանձնահատկությունները:

Կատարման չափանիշներ

- ա. ճիշտ է ներկայացնում մենեջմենթի էությունը և բնութագրիչ գծերը,
- բ. ճիշտ է ներկայացնում կառավարման գործընթացը և գիտի մենեջմենթի ցիկլը,
- գ. ճիշտ է ներկայացնում կառավարման մեթոդները,
- դ. ճիշտ է ներկայացնում գործարար հաղորդակցման սկզբունքները,
- ե. ճիշտ է ներկայացնում որոշումների ընդունման մեթոդները և մակարդակները:

Գնահատման միջոցը

Սովորողին կտրվեն կառավարման ձևերի հետ կապված թեստեր: Արդյունքի ձեռքբերումը կհամարվի բավարար, եթե ուսանողը կարողանա ճիշտ պատասխանել հիմնական հարցերին և կողմնորոշվել մյուս հարցերի պատասխաններում:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը կիրականացվի դասախոսության և գործնական պարապմունքների միջոցով:

Ուսուցման ընթացքում օգտագործվելու է ուսումնական և մասնագիտական գրականություն, թեստեր:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Դասախոսություն	6 ժամ
Գործնական պարապմունք`	6 ժամ

Ուսումնառության արդյունք 5 Իմանալ ձեռնարկության և նրա ստորաբաժանումների կառավարման ապարատի կառուցվածքը:

Կատարման չափանիշներ

- ա. ճիշտ է ներկայացնում կառավարման ապարատի օղակները և նրանց ֆունկցիաները,
- բ. ճիշտ է ներկայացնում արտադրամասի և առանձին տեղամասերի կառավարման օղակները:

Գնահատման միջոցը

Ուսանողին կառաջադրվեն բանավոր հրցադրումներ:

Արդյունքի ձեռքբերումը կհամարվի բավարար, եթե ուսանողը ընդհանուր առմամբ ճիշտ պատասխանի հարցերին:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը կիրականացվի դասախոսությունն և գործնական պարապմունքների միջոցով` նպատակ ունենալով սովորողներին տալ գիտելիքներ ձեռնարկության և նրա

ստորաբաժանումների կառավարման ապարատի կառուցվածքի վերաբերյալ: Ուսուցման ընթացքում օգտագործվելու է ուսումնական գրականություն, սխեմաներ, կառավարման ապարատի բաժինների ֆունկցիաների վերաբերյալ հրահանգներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Դասախոսություն	8 ժամ
Գործնական պարապմունք	8 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ ԱԿՏՈՄՈՔԻԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐ

Մոդուլի դասիչը՝ ՓԿԿ 4-09-009

Մոդուլի տևողությունը՝ 72 ժամ

Դասախոսություն 36 ժամ

Գործնական պարապմունքներ՝ 36 ժամ

Մոդուլի նպատակը Մոդուլը նպատակ ունի սովորողին տալ գիտելիքներ ավտոմոբիլային ճանապարհների տարրերի, անցումային կորերի ու թեքուղիների, ճանապարհային տարբեր փոխհատումների, տրանսպորտաշահագործական հատկանիշների, ինչպես նաև, փողոցների նախագծման և քաղաքների հատակագծման սկզբունքների, թունելների, հենապատերի մասին և այլն:

Մոդուլը յուրացնելուց հետո, ուսանողը պետք է կարողանա որոշել ավտոճանապարհների տրանսպորտաշահագործական հատկանիշները, դասակարգել մայրուղիները, իմանա ճանապարհների նախագծման հիմունքները:

Մուտքային պահանջները՝ Չկան

Արդյունքները՝

Մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է.

1. Ի մանա ավտոմոբիլային ճանապարհների տարրերն ու դասակարգումը,
2. Իմանա տարբեր տեսակի փոխհատումները և դրանց առանձնահատկությունները,
3. Ծանոթ լինի փողոցների նախագծման սկզբունքներին,
4. Կարողանա հաշվարկել ճանապարհների տրանսպորտաշահագործական հատկանիշները,
5. Կարողանա գնահատել երթևեկության անվտանգության վրա ճանապարհի տարրերի ազդեցությունը,
6. Կարողանա տվյալ ճանապարհի համար որոշել վթարայնության գործակիցը:

Գնահատման կարգը

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների լիարժեք ապահովումն է:

Արդյունք 1. Իմանա ավտոմոբիլային ճանապարհների տարրերն ու դասակարգումը:

Կատարման չափանիշներ

ա. ճիշտ է ներկայացնում ճանապարհի տարրերը,

բ. կարողանում է դասակարգել մայրուղիները:

Գնահատման միջոցը

Սովորողին տրվում է որևէ ճանապարհահատվածի սխեմա, տրանսպորտային հոսքի ինտենսիվությունը և արագությունը այդ հատվածում, հատվածի երկայնական պրոֆիլի թեքությունը, հատակագծում կորագծերի շառավիղները և պահանջվում է ներկայացնել ճանապարհի տարրերն ու ըստ դասակարգման որոշել հատվածի խումբը:

- ա) Ավտոմոբիլային ճանապարհներ և մայրուղիներ
- բ) Ավտոմոբիլային ճանապարհների տարրեր
- գ) Ավտոմոբիլային ճանապարհների և մայրուղիների դասակարգումը

Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, երբ սովորողը կարողանում է անսխալ ներկայացնել ճանապարհահատվածի տարրերը և որոշել նրա խումբը՝ ըստ ճանապարհների դասակարգման:

Աշխատանքի կատարումը ստուգելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացվում է դասախոսության, գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողներին տալ ավտոմոբիլային ճանապարհների մասին անհրաժեշտ գիտելիքներ:

Ուսուցման ընթացքում օգտագործվում է ուսումնական գրականություն, ճանապարհահատվածի սխեմաներ, ճանապարհների պաստառներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

- Դասախոսություն 6 ժամ
- Գործնական պարապմունքներ՝ 6 ժամ

Արդյունք 2. Իմանա տարբեր տեսակի փոխհատումները և դրանց առանձնահատկությունները.

Կատարման չափանիշներ

- ա. ճիշտ է դասակարգում փոխհատումները,
- բ. ճիշտ է ներկայացնում տարբեր փոխհատումների առանձնահատկությունները:

Գնահատման միջոցը

Սովորողին տրվում են փոխհատումների սխեմաներ կամ լուսանկարներ և պահանջվում է դասակարգել փոխհատումներն ու ներկայացնել դրանց առանձնահատկությունները:

- ա) Ավտոմոբիլային ճանապարհների փոխհատում հասկացությունը
- բ) Փոխհատումների դասակարգումը և առանձնահատկությունները

Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե սովորողը կարողանում է անսխալ դասակարգել փոխհատումները և ներկայացնել դրանց առանձնահատկությունները:

Աշխատանքի կատարումը ստուգելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացվում է դասախոսության, գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողներին տալ ավտոմոբիլային ճանապարհների փոխհատումների մասին անհրաժեշտ գիտելիքներ:

Ուսուցման ընթացքում օգտագործվում է ուսումնական գրականություն, ճանապարհների փոխհատումների սխեմաներ, մակետներ, լուսանկարներ, փոխհատումների պաստառներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Դասախոսություն՝ 6 ժամ

Գործնական պարապմունքներ՝ 6 ժամ

Արդյունք 3. Ծանոթ լինի փողոցների նախագծման սկզբունքներին.

Կատարման չափանիշներ

- ա. ճիշտ է ներկայացնում նախագծման սկզբունքը,
- բ. ճիշտ է ներկայացնում նախագծման առանձնահատկությունները,
- գ. ճիշտ է ներկայացնում ճանապարհի ու փողոցի լայնական կտրվածքը,
- դ. ճիշտ է նախագծում անցումային կորերն ու թեքուղիները:

Գնահատման միջոցը

Սովորողին տրվում է տեղանքի ռելիեֆի, բնակլիմայական պայմանների մասին տեղեկություններ և պահանջվում է ճիշտ ներկայացնել տվյալ ճանապարհի կամ փողոցի նախագծման առանձնահատկությունները, ճանապարհի կամ փողոցի լայնական կտրվածքը, անցումային կորերն ու թեքուղիները:

- ա) Փողոցների և ճանապարհների նախագծման սկզբունքներ
- բ) Թեքուղիներ
- գ) Անցումային կորեր
- դ) Լայնական կտրվածք

Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե սովորողը կարողանում է անսխալ ներկայացնել նախագծման առանձնահատկությունները, ճանապարհի կամ փողոցի լայնական կտրվածքը, անցումային կորերն ու թեքուղիները:

Աշխատանքի կատարումը ստուգելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացվում է դասախոսության, գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողներին տալ ավտոմոբիլային ճանապարհների կամ փողոցների նախագծման մասին անհրաժեշտ գիտելիքներ:

Ուսուցման ընթացքում օգտագործվում է ուսումնական գրականություն, ճանապարհների կամ փողոցների նախագծման համար անհրաժեշտ նորմատիվային փաստաթղթեր:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Դասախոսություն՝ 6 ժամ

Գործնական պարապմունքներ՝ 6 ժամ

Արդյունք 4. Կարողանա հաշվարկել ճանապարհների տրանսպորտաշահագործական հատկանիշներ.

Կատարման չափանիշներ

- ա. ճիշտ է ներկայացնում ճանապարհի տրանսպորտաշահագործական հատկանիշները,
- բ. կարողանում է ճիշտ որոշել ճանապարհի հաշվարկային արագությունը, թողունակությունը:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումը կատարվում է գրավոր հարցաշարի միջոցով՝ հաշվի առնելով գործնական պարապմունքներում սովորողի ցուցաբերած գիտելիքները:

- ա) Ճանապարհի թողունակություն
- բ) Տրանսպորտային հոսքի հաշվարկային արագություն
- գ) Ճանապարհի կցման և կառչման գործակիցներ
- դ) Անցումային կորերի շառավիղներ

Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե սովորողը կարողանում է ճիշտ ներկայացնել տրանսպորտաշահագործական հատկանիշները և որոշել ճանապարհի հաշարկային արագությունն ու թողունակությունը:

Աշխատանքի կատարումը ստուգելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացվում է դասախոսության, գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողներին տալ ավտոմոբիլային ճանապարհների տեխնիկաշահագործական հատկանիշների մասին անհրաժեշտ գիտելիքներ:

Ուսուցման ընթացքում օգտագործվում է ուսումնական գրականություն, ճանապարհների վերաբերյալ նորմատիվային փաստաթղթեր, ճանապարհների սխեմաներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

- | | |
|--------------------------|-------|
| Դասախոսություն՝ | 6 ժամ |
| Գործնական պարապմունքներ՝ | 6 ժամ |

Արդյունք 5. Կարողանա գնահատել երթևեկության անվտանգության վրա ճանապարհի տարրերի ազդեցությունը.

Կատարման չափանիշներ

- ա. ճիշտ է ներկայացնում երթևեկության անվտանգության վրա ազդող տարրերը,
- բ. կարողանում է գնահատել ճանապարհի տարրերի ազդեցությունը երթևեկության անվտանգության վրա:

Գնահատման միջոցը

Սովորողին տրվում է ճանապարհի սխեման բոլոր անհրաժեշտ երկրաչափական տվյալներով ու նորմատիվային գործակիցներով և պահանջվում է ճիշտ ներկայացնել երթևեկության անվտանգության վրա ազդող տարրերը և ճիշտ գնահատել ճանապարհի տարրերի ազդեցությունը երթևեկության անվտանգության վրա:

- ա) Շրջադարձի շառավիղ
- բ) Ճանապարհի երկայնական թեքություն
- գ) Երթևեկելի գոտիների քանակ
- դ) Ճանապարհի լուսավորվածություն

Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե սովորողը կարողանում է անսխալ ներկայացնել երթևեկության անվտանգության վրա ազդող տարրերը և ճիշտ գնահատել ճանապարհի տարրերի ազդեցությունը երթևեկության անվտանգության վրա:

Աշխատանքի կատարումը ստուգելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացվում է դասախոսության, գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողներին տալ երթևեկության անվտանգության վրա ճանապարհի տարրերի ազդեցության մասին անհրաժեշտ գիտելիքներ:

Ուսուցման ընթացքում օգտագործվում է ուսումնական գրականություն, ճանապարհների վերաբերյալ նորմատիվային փաստաթղթեր, ճանապարհների սխեմաներ, ճանապարհային երթևեկության կանոններ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

- Դասախոսություն՝ 6 ժամ
- Գործնական պարապմունքներ՝ 6 ժամ

Արդյունք 6. Կարողանա տվյալ ճանապարհի համար որոշել վթարայնության գործակիցը.

Կատարման չափանիշներ

- ա. ճիշտ է հայտնաբերում ճանապարհի վտանգավոր տեղամասերն՝ անվտանգության գործակցի գրաֆիկով,
- բ. ճիշտ է որոշում վթարայնության գործակիցը:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումն իրականացվում է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական առաջադրանքների կատարման հիման վրա:

- ա) Տրանսպորտային հոսքի ինտենսիվություն և կազմ
- բ) Տրանսպորտային հոսքի արագություն
- գ) Ճանապարհահատվածի նեղացում
- դ) Ճամփեզրի լայնություն

Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե սովորողը կարողանում է անսխալ նշել ճանապարհի վտանգավոր տեղամասերը և որոշել վթարայնության գործակիցը:

Աշխատանքի կատարումը ստուգելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացվում է դասախոսության, գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողներին տալ երթևեկության անվտանգության գործակցի, ինչպես նաև վթարայնության գործակցի վերաբերյալ:

Ուսուցման ընթացքում օգտագործվում է ուսումնական գրականություն, ճանապարհների վերաբերյալ նորմատիվային փաստաթղթեր, ճանապարհների սխեմաներ, անվտանգության գործակցի գրաֆիկներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

- Դասախոսություն՝ 6 ժամ
- Գործնական պարապմունքներ՝ 6 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

Մոդուլի դասիչը՝	ՓԿԿ 4-09-010
Մոդուլի տևողությունը՝	72 ժամ
Դասախոսություն՝	36 ժամ
Գործնական պարապմունքներ՝	36 ժամ

Մոդուլի նպատակը

Մոդուլը նպատակ ունի սովորողին տալ գիտելիքներ տրանսպորտի առանձին տեսակների (ավտոմոբիլային, երկաթուղային, օդային, ջրային, խողովակաշարային, տրանսպորտի նորագույն տեսակներ) և դրանց աշխատանքի հիմնական ցուցանիշների վերաբերյալ: Մոդուլում կուսումնասիրվեն տրանսպորտի առանձին տեսակների տեխնիկական հագեցվածության հիմնական տարրերը և հետագա զարգացման գիտատեխնիկական խնդիրները:

Մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է կարողանա տարբերել տրանսպորտի առանձին տեսակների տեխնիկական հագեցվածության տարրերը, որոշել տրանսպորտի տեսակների աշխատանքի հիմնական ցուցանիշները, իմանա տրանսպորտի տեսակների միջև համագործակցության պայմանները:

Մուտքային պահանջներ՝ Չկան:

Արդյունքները՝

Մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է.

1. Իմանա տրանսպորտի առանձին տեսակների աշխատանքը բնութագրող հիմնական ցուցանիշները,
2. Իմանա տրանսպորտի առանձին տեսակների տեխնիկական հագեցվածության տարրերը,
3. Իմանա տրանսպորտի տեսակների միջև համագործակցության պայմանները:

Գնահատման կարգը

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների լիարժեք ապահովումն է:

Արդյունք 1. Իմանա տրանսպորտի առանձին տեսակների աշխատանքը բնութագրող հիմնական ցուցանիշները.

Կատարման չափանիշներ

ա. ճիշտ է ներկայացնում տրանսպորտի առանձին տեսակները և դրանց աշխատանքը բնութագրող հիմնական ցուցանիշները,

բ. ճիշտ է օգտագործում տրանսպորտում կիրառվող հիմնական տերմինները:

Գնահատման միջոցը

Սովորողին ներկայացվում են 8 հարց՝ տրանսպորտի առանձին տեսակների աշխատանքը բնութագրող հիմնական ցուցանիշների վերաբերյալ:

ա) Բեռնահոսքերի կազմ

բ) Շարժակազմի աշխատանքի արտադրողականություն

գ) Շարժակազմի աշխատանքի ինքնարժեք

դ) Վազքի և բեռնատարողության օգտագործման գործակիցներ

ե) Շարժակազմի պտույտի տևողություն

զ) Բեռնաերթերի քանակ

Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե սովորողը կարողանում է ճիշտ պատասխանել առնվազն 6 հարցի: Մնացած 2 պատասխաններում կարող են լինել որոշակի սխալներ:

Աշխատանքի կատարումը ստուգելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացվում է դասախոսության, գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողներին տալ տրանսպորտի տարբեր տեսակների աշխատանքը բնութագրող հիմնական ցուցանիշների և տրանսպորտում կիրառվող հիմնական տերմինների մասին համապատասխան գիտելիքներ:

Ուսուցման ընթացքում օգտագործվում է ուսումնական գրականություն, պաստառներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Դասախոսություն՝ 12 ժամ

Գործնական պարապմունքներ՝ 12 ժամ

Արդյունք 2. Իմանա տրանսպորտի առանձին տեսակների տեխնիկական հագեցվածության տարրերը.

Կատարման չափանիշներ

ա. ճիշտ է ներկայացնում հավաքակայան, օդանավակայան, նավահանգիստ, հաղորդակցական ուղի տերմինները,

բ. ճիշտ է մեկնաբանում ավտոկայան, բեռնային բակ, ավտոկայարան, աէրոպորտ, աէրոդրոմ և այլ տերմինները:

Գնահատման միջոցը

Սովորողին ներկայացվում են 10 հարց՝ տրանսպորտի առանձին տեսակների տեխնիկական հագեցվածության տարրերի վերաբերյալ:

- ա) Շարժակազմ
- բ) Հաղորդակցական ուղի
- գ) Ավտոկայան
- դ) Նավահանգիստ
- ե) Օդանավակայան
- զ) Ավտոկայարան
- է) Տաղավար
- ը) Երկաթուղային կայարան

Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե սովորողը կարողանում է ճիշտ պատասխանել առնվազն 7 հարցի: Մնացած 3 պատասխաններում կարող են լինել որոշակի սխալներ:

Աշխատանքի կատարումը ստուգելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացվում է դասախոսության, գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողներին տալ տրանսպորտի տարբեր տեսակների տեխնիկական հագեցվածության տարրերի մասին համապատասխան գիտելիքներ:

Ուսուցման ընթացքում օգտագործվում է ուսումնական գրականություն:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Դասախոսություն՝	14 ժամ
Գործնական պարապմունքներ՝	12 ժամ

Արդյունք 3. Իմանա տրանսպորտի տեսակների միջև համագործակցության պայմանները.

Կատարման չափանիշներ

ա. ձիշտ է ներկայացնում տրանսպորտի առանձին տեսակների համագործակցության պայմանները:

Գնահատման միջոցը

Սովորողին ներկայացվում են մի քանի հարցեր՝ տրանսպորտի տեսակների համագործակցության պայմանների մասին:

- ա) Միջազգային առևտրի ստանդարտ պայմաններ
- բ) Պիզգիբեկ փոխադրումներ
- գ) Սուլտիմոդալ փոխադրումներ
- դ) Համագործակցության պայմաններ
- ե) Կոմբինացված փոխադրումներ
- զ) Ինտերմոդալ փոխադրումներ

Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե սովորողը կարողանում է անսխալ պատասխանել առաջադրված հարցերի 70%-ին:

Աշխատանքի կատարումը ստուգելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացվում է դասախոսության, գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողներին տալ տրանսպորտի տեսակների միջև համագործակցության պայմանների մասին համապատասխան գիտելիքներ:

Ուսուցման ընթացքում օգտագործվում է ուսումնական գրականություն, միջազգային առևտրային կազմակերպության կողմից սահմանված միջազգային առևտրի ստանդարտ պայմանները:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Դասախոսություն՝	10 ժամ
Գործնական պարապմունքներ՝	12 ժամ

ՄՈՂՈՒԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝

ԲԵՌՆԱՆ - ԲԵՌՆԱԹԱՓՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Մոդուլի դասիչը՝	ՓԿԿ 4-09-011
Մոդուլի տևողությունը՝	90 ժամ
Դասախոսություն՝	54 ժամ
Գործնական պարապմունքներ՝	36 ժամ

Մոդուլի նպատակը՝

Սովորողին ծանոթացնել բեռների տեսակներին, դրանց դասակարգման սկզբունքներին, բեռների փաթեթավորման ամրացման պահանջներին, բեռնման-բեռնափոխման գործընթացին, դրանց կատարման համար նախատեսված ժամանակի նորմերին, ինչպես նաև բեռնման-բեռնաթափման ժամանակ առավել հաճախ օգտագործվող տեխնիկական միջոցներին:

Մուտքային պահանջները՝ Չկան:

Արդյունքները՝

- Մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է.
 1. Իմանա բեռների տեսակները և դրանց դասակարգման սկզբունքները.
 2. Իմանա բեռների փաթեթավորման , մակնիշավորման և թափքում ամրացման ձևերը.
 3. Ծանոթ լինի բեռնման-բեռնափոխման գործընթացին, դրանցում օգտագործվող տեխնիկական միջոցներին.
 4. Ծանոթ լինի բեռնման-բեռնափոխման աշխատանքների ընթացքում բեռնատար ավտոմեքենաների համար սահմանված պարապուրդի նորմերին.

Գնահատման կարգը՝

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Արդյունք 1. Իմանա բեռների տեսակները և դրանց դասակարգման սկզբունքները.

Կատարման չափանիշներ

- ա. Ճիշտ է բացատրում բեռների տեսակները և դրանց դասակարգման սկզբունքները,
- բ. Ճիշտ է ներկայացնում բեռների որակական հատկանիշները,
- գ. Ճիշտ է ներկայացնում բեռների փոխադրման ժամանակ կորստի թույլատրելի նորմերը,
- դ. Ճիշտ է ներկայացնում տարբեր բեռների փոխադրման համար անհրաժեշտ տրանսպորտային միջոցները և դրանց ներկայացվող առանձնահատուկ պահանջները:

Գնահատման միջոցը

Սովորողին ներկայացվում են 8 հարց՝ բեռների տեսակների և դրանց դասակարգման սկզբունքների վերաբերյալ:

- ա. Բեռներ, դրանց դասակարգումը,
- բ. Բեռների որակական հատկանիշներ,
- գ. Վտանգավոր բեռներ,
- դ. Առանձնահատուկ վտանգավոր բեռներ,
- ե. Տարբեր տեսակի բեռների փոխադրման համար անհրաժեշտ տրանսպորտային միջոցների

տեսակներ:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե սովորողը կարողանում է ճիշտ պատասխանել առնվազն 6 հարցի: Մնացած 2 պատասխաններում կարող են լինել որոշակի սխալներ:

Աշխատանքի կատարումը ստուգելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացվում է դասախոսության, գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողներին տալ բեռների տեսակների և դրանց դասակարգման սկզբունքների մասին համապատասխան գիտելիքներ:

Ուսուցման ընթացքում օգտագործվում է ուսումնական գրականություն, բեռների անվանացանկ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Դասախոսություն՝ 14 ժամ

Գործնական պարապմունքներ՝ 10 ժամ

Արդյունք 2. Իմանա փաթեթավորման , մակնիշավորման և թափքում ամրացման ձևերը.

Կատարման չափանիշներ

ա. Ճիշտ է ներկայացնում փոխադրման տարային և բեռների փաթեթավորմանը ներկայացվող բ. Ճիշտ է ներկայացնում բեռնման-բեռնափոխման եղանակը և փոխադրամիջոցը, ելնելով տվյալ բեռի մակնիշավորումից,

գ. Ճիշտ է ներկայացնում վտանգավոր բեռների փոխադրման ժամանակ փոխադրական տարային և փաթեթավորմանը ներկայացվող պահանջները,

դ. Ճիշտ է ներկայացնում բեռների այն տեսակները, որոնք կարող են ներկայացվել փոխադրման առանց փաթեթավորման, ինչպես նաև այն բեռները, որոնք պարտադիր ենթակա են փաթեթավորման,

ե. Ճիշտ է ներկայացնում բեռները թափքում ամրացնելու սկզբունքները և ձևերը:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումը կատարվում է հարց ու պատասխանի միջոցով՝ բանավոր ձևով: Գնահատման ժամանակ հաշվի է առնվում նաև սովորողի ցուցաբերած գիտելիքները:

ա. բեռների տրանսպորտային մակնիշավորում,

բ. բեռների ապրանքային մակնիշավորում,

գ. փաթեթ, տարա, տակդիր: Դրանց ներկայացվող պահանջները,

դ. փաթեթավորման ներկայացվող բեռներ,

ե. չփաթեթավորվող բեռներ,

զ. բեռները թափքում ամրացնելու եղանակներ:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե սովորողը կարողանում է անսխալ ներկայացնել բեռների փաթեթավորման եղանակները, կատարել մակնիշավորում և ճիշտ ներկայացնել բեռները թափքում ամրացնելու եղանակները:

Աշխատանքի կատարումը ստուգելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացվում է դասախոսության, գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողներին տալ բեռների փաթեթավորման, մակնիշավորման և թափքում ամրացնելու ձևերի մասին համապատասխան գիտելիքներ:

Ուսուցման ընթացքում օգտագործվում է ուսումնական գրականություն, բեռների անվանացանկ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Դասախոսություն՝ 12 ժամ

Գործնական պարապմունքներ՝ 8 ժամ

Արդյունք 3. Ծանոթ լինի բեռնման-բեռնափոխման գործընթացին, դրանցում օգտագործվող տեխնիկական միջոցներին:

Կատարման չափանիշներ

- ա. Ճիշտ է ներկայացնում բեռնման-բեռնափոխման գործընթացը, այդ գործընթացի ազդեցությունը ավտոմոբիլի պարապուրդի և ընդհանուր արտադրողականության վրա,
- բ. Ճիշտ է ներկայացնում բեռնման-բեռնափոխման միջոցների դասակարգումը և դրանց աշխատանքի առանձնահատկությունները՝ այդ թվում,
- գ. Ճիշտ է ներկայացնում ընդհանուր նշանակության և բարձր մանկրայնության ավտոբեռնիչները և էլեկտարաբեռնիչները,
- դ. Ճիշտ է ներկայացնում հատուկ նշանակության ավտոբեռնիչները և էլեկտարաբեռնիչները,
- ե. ամբարձիչ կրունկներ,
- զ. Ճիշտ է ներկայացնում միաշերտի և բազմաշերտի ամբարձիչները,
- է. փոխակրիչներ,
- ը. Ճիշտ է ներկայացնում բեռնման-բեռնաթափման պնևմատիկ և հիդրավլիկ միջոցները:
- թ. Ճիշտ է ներկայացնում բեռնման-բեռնաթափման միջոցների կիրառման արդյունավետությունը տարբեր բեռների բեռնման-բեռնաթափման ժամանակ:

Գնահատման միջոցը

Սովորողից պահանջվում է ճիշտ ներկայացնել բեռնման-բեռնափոխման գործընթացը, այդ գործընթացի ազդեցությունը ավտոմոբիլի պարապուրդի և ընդհանուր արտադրողականության վրա, կատարել բեռնման-բեռնաթափման միջոցների դասակարգում, ընդհանուր նշանակության և բարձր մանկրայնության ավտոբեռնիչները և էլեկտարաբեռնիչները, հատուկ նշանակության ավտոբեռնիչները, էլեկտարաբեռնիչները, ամբարձիչ կրունկները, միաշերտի և բազմաշերտի ամբարձիչները, փոխակրիչները, բեռնման-բեռնաթափման պնևմատիկ և հիդրավլիկ միջոցները:

- ա. բեռնման-բեռնաթափման աշխատանքներ,
- բ. բեռնման-բեռնաթափման հարմարանքներ,
- գ. բեռնման-բեռնաթափման մեխանիզմներ,
- դ. անընդհատ գործողությամբ մեխանիզմներ,
- ե. ընդհատվող գործողությամբ մեխանիզմներ:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե սովորողը կարողանում է անսխալ ներկայացնել բեռնման-բեռնափոխման գործընթացը և դրանում օգտագործվող տեխնիկական միջոցները:

Աշխատանքի կատարումը ստուգելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացվում է դասախոսության, գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողներին տալ բեռնման-բեռնափոխման գործընթացի, դրանցում օգտագործվող տեխնիկական միջոցների մասին համապատասխան գիտելիքներ:

Ուսուցման ընթացքում օգտագործվում է ուսումնական գրականություն, բեռների անվանացանկ, բեռնման-բեռնաթափման մեխանիզմների մակետներ ու պաստառներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Դասախոսություն՝	14 ժամ
Գործնական պարապմունքներ՝	8 ժամ

Արդյունք 4. Ծանոթանալ բեռնման-բեռնափոխման աշխատանքների ընթացքում բեռնատար ավտոմեքենաների համար սահմանված պարապուրդի նորմերին:

Կատարման չափանիշներ

- ա. Ճիշտ է ներկայացնում բեռնման-բեռնաթափման աշխատանքների ժամանակ բեռնատար ավտոմեքենաների պարապուրդի վրա ազդող գործոնները,
- բ. Ճիշտ է շարադրում բեռնման-բեռնաթափման աշխատանքների ընդացքում բեռնատար ավտոմեքենայի պարապուրդի ժամանակի ընդամուր կառուցվածքը և այդ ժամանակի առանձին տարրերի նվազեցման միջոցառումները,
- գ. Ճիշտ է շարադրում ձեռքով բեռնման-բեռնաթափման ժամանակ պարապուրդի նորմով սահմանված բեռնակիրների պահանջվող թվաքանակի որոշումը:

Գնահատման միջոցը

Սովորողին ներկայացվում են բանավոր մի քանի հարցեր՝ բեռնման-բեռնաթափման աշխատանքների ընթացքում բեռնատար ավտոմեքենաների համար սահմանված պարապուրդի նորմերի վերաբերյալ:

- ա. շարժակազմի մատուցում,
- բ. բեռնման-բեռնաթափման աշխատանքներ,
- գ. բեռի ամրացում,
- դ. մեքենայացված բեռնման-բեռնաթափման աշխատանքների նորմաներ,
- ե. ձեռքով բեռնման-բեռնաթափման աշխատանքների նորմաներ:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե սովորողը կարողանում է անսխալ ներկայացնել բեռնման-բեռնափոխման աշխատանքների ընթացքում բեռնատար ավտոմեքենաների համար սահմանված պարապուրդի նորմաներին և որոշել բեռնակիրների պահանջվող քանակը, ինչպես նաև ճիշտ ներկայացնել պարապուրդի վրա ազդող գործոնները:

Աշխատանքի կատարումը ստուգելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացվում է դասախոսության, գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողներին տալ բեռնման-բեռնափոխման աշխատանքների

ընթացքում բեռնատար ավտոմեքենաների համար սահմանված պարապուրդի նորմաների, բեռնակիրների քանակի հաշվարկման սկզբունքների մասին համապատասխան գիտելիքներ:

Ուսուցման ընթացքում օգտագործվում է ուսումնական գրականություն, բեռների անվանացանկ և շարժակազմի պարապուրդի նորմաներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Դասախոսություն`	14 ժամ
Գործնական պարապմունքներ`	10 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ` ԱԿՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Մոդուլի դասիչը` ՓԿԿ 4-09-012

Մոդուլի տևողությունը` 126 ժամ

Դասախոսություն` 36 ժամ

Գործնական պարապմունքներ` 90 ժամ

Մոդուլի նպատակը`

Այս մոդուլը նախատեսված է սովորողի մոտ ավտոմոբիլների շարժիչների, ընթացքային մասերի և թափքերի կառուցվածքների և կառուցվածքային առանձնահատկությունների վերաբերյալ հմտություններ և կիրառական գիտելիքներ զարգացնելու համար: Մոդուլը անհրաժեշտ կլինի ինչպես անձնական ավտոմոբիլներ շահագործող անձանց, այնպես էլ վարձու աշխատող ավտոմեքենայի վարորդներին:

Մուտքային պահանջները` Չկան

Արդյունքները

Այս մոդուլը յուրացնելուց հետո սովորողը պետք է.

1. Ներկայացնի ավտոմոբիլի դերը, որպես տնտեսության կարևոր բաղկացուցիչ օղակ: Ավտոմոբիլը` բեռնափոխադրումների և ուղևորափոխադրումների իրականացման արդյունավետ միջոց,
2. Իման ավտոմոբիլի ընդհանուր կառուցվածքը և նրա հիմնական մասերի նշանակությունը,
3. Իմանա ավտոմոբիլային ներքին այրման շարժիչների տեսակները, կառուցվածքային առանձնահատկությունները և կարողանա գործնականում կիրառել այդ գիտելիքները: Բացատրի շարժիչի տեխնիկական սպասարկման աշխատանքները,
4. Իմանա ավտոմոբիլի շարժահաղորդակների տեսակները, կառուցվածքը, աշխատանքի առանձնահատկությունները և կարողանա գործնականում կիրառել այդ գիտելիքները: Բացատրի շարժահաղորդակի ագրեգատների, մեխանիզմների տեխնիկական սպասարկման աշխատանքները և կարողանա գործնականում կիրառել այդ գիտելիքները: Բնութագրի շարժահաղորդակի հիմնական անսարքությունները,
5. Իմանա ղեկային վարման և արգելակային համակարգերի տեսակները, կառուցվածքային առանձնահատկությունները և կարողանա գործնականում կիրառել այդ գիտելիքները: Բացատրի ղեկային վարման և արգելակային համակարգերի տեխնիկական սպասարկման աշխատանքները և կարողանա գործնականում կիրառել այդ գիտելիքները: Բնութագրի ղեկային վարման և արգելակային համակարգերի հիմնական անսարքությունները,

6. Իմանա կախոցքների տեսակները, կառուցվածքային առանձնահատկությունները և կարողանա գործնականում կիրառել այդ գիտելիքները: Բացատրի կախոցքի տեխնիկական սպասարկման աշխատանքները և կարողանա գործնականում կիրառել այդ գիտելիքները: Բնութագրի կախոցքի հիմնական անսարքությունները,
7. Իմանա թափքերի տեսակները, կառուցվածքային առանձնահատկությունները և կարողանա գործնականում կիրառել այդ գիտելիքները: Բացատրի թափքի տեխնիկական սպասարկման աշխատանքները և կարողանա գործնականում կիրառել այդ գիտելիքները, բնութագրել թափքի հիմնական անսարքությունները,
8. Իմանա անիվների և դողերի կառուցվածքային առանձնահատկությունները և կարողանա գործնականում կիրառել այդ գիտելիքները:

Գնահատման կարգը`

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Արդյունք 1. Ներկայացնել ավտոմոբիլի դերն ու նշանակությունը շուկայական տնտեսության պայմաններում.

Կատարման չափանիշներ

- ա. Ճիշտ է ներկայացնում ավտոմոբիլի դերը, որպես ուղևորափոխադրումների և բեռնափոխադրումների արդյունավետության բարձրացման կարևոր միջոց,
- բ. Ճիշտ է բացատրում ավտոմոբիլի ընդհանուր կառուցվածքը և հիմնական մասերի նշանակությունը,
- գ. Ճիշտ է ներկայացնում ավտոմոբիլաշինության զարգացման պատմական փուլերը,

Գնահատման միջոցը

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանների հիման վրա:

Ստորև ներկայացվում է

- ավտոմոբիլի նշանակությունը,
- ավտոմոբիլի դասակարգումը,
- ավտոմոբիլի տարատեսակները,
- ավտոմոբիլի մակնիշավորումը,
- ավտոմոբիլի ընդհանուր կառուցվածքը:

Սովորողին կառաջադրվեն առնվազն 3 հարցեր վերը նշված արդյունքի վերաբերյալ:

Արդյունքի յուրացումը կհամարվի դրական, եթե բոլոր հարցերին տրվեն ճիշտ պատասխաններ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացվում է դասախոսության, գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում օգտագործվում է բեռնատար և ուղևորատար ավտոմոբիլների տարբեր տեսակների մոդելներ, նմուշներ, պլակատներ, ուսումնական համապատասխան գրականություն:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

- Դասախոսություն` 4 ժամ
- Գործնական պարապմունքներ` 10 ժամ

Արդյունք 2. Իմանալ ավտոմոբիլի ընդհանուր կառուցվածքը և նրա հիմնական մասերի նշանակությունը.

Կատարման չափանիշներ

- ա. Ճիշտ է բացատրում ավտոմեքենայի ընդհանուր կառուցվածքը,
- բ. Ճիշտ է բացատրում ավտոմեքենայի հիմնական մասերի նշանակությունը,
- գ. Ճիշտ է բացատրում ավտոմեքենայի հիմնական մասերի փոխադարձ կապը և փոխազդեցությունը:

Գնահատման միջոցը

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի հիման վրա:

Ստորև ներկայացվում է

- Ավտոմեքենայի շարժիչի կառուցվածքը և նշանակությունը.
- Ավտոմեքենայի շասսիի կառուցվածքը և նշանակությունը.
- Ավտոմեքենայի թափքի կառուցվածքը և նշանակությունը.

Սովորողին կառաջադրվի առնվազն 6 հարցեր ավտոմոբիլի ընդհանուր կառուցվածքի և հիմնական մասերի նշանակության վերաբերյալ: Արդյունքի ձեռքբերումը կհամարվի դրական, եթե հարցերի առնվազն 80%-ին տրվել են ճիշտ պատասխաններ: Մնացած հարցերի պատասխաններում կարող են թույլ տրվել որոշ ոչ էական սխալներ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացվում է դասախոսության, գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում օգտագործվում է ուսումնական համապատասխան գրականություն, տեսաֆիլմեր, դիտակտիկ նյութեր, ավտոմոբիլների ազդեցատների, մեխանիզմների մոդելներ և ստենդներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Դասախոսություն	4 ժամ
Գործնական պարապմունքներ	10 ժամ

Արդյունք 3. Իմանալ ավտոմոբիլային ներքին այրման շարժիչների տեսակները, կառուցվածքային առանձնահատկությունները և կարողանա գործնականում կիրառել այդ գիտելիքները: Բացատրի շարժիչի տեխնիկական սպասարկման աշխատանքները.

Կատարման չափանիշներ

- ա. Ճիշտ է բացատրում կարբյուրատորային, դիզելային և վառելանյութի ներարկումով շարժիչների աշխատանքի առանձնահատկությունները,
- բ. Ճիշտ է բացատրում ավտոմոբիլային ներքին այրման շարժիչների ընդհանուր կառուցվածքը,
- գ. Ճիշտ է ներկայացնում շուրտվիկ շարժաթևային մեխանիզմի շարժական և անշարժ մեքենամասերից յուրաքանչյուրի նշանակությունը և ընդհանուր կառուցվածքը,
- դ. Ճիշտ է ներկայացնում գազաբաշխիչ մեխանիզմի նշանակությունը,
- ե. Ճիշտ է ներկայացնում փականային գազաբաշխիչ մեխանիզմի մեքենամասերից յուրաքանչյուրի նշանակությունը և ընդհանուր կառուցվածքը,
- զ. Ճիշտ է ներկայացնում հովացման համակարգի նշանակությունը,
- է. Ճիշտ է ներկայացնում հեղուկային և օդային հովացման համակարգերից յուրաքանչյուրի նշանակությունը և ընդհանուր կառուցվածքը,

- ը. Ճիշտ է ներկայացնում յուղման համակարգի նշանակությունը,
- թ. Ճիշտ է ներկայացնում մեքենամասերի յուղման առանձնահատկությունները,
- ժ. Ճիշտ է ներկայացնում յուղման համակարգի յուրաքանչյուր մասի նշանակությունը և ընդհանուր կառուցվածքը,
- ի. Ճիշտ է ներկայացնում սնման համակարգի նշանակությունը,
- լ. Ճիշտ է ներկայացնում կարբյուրատորային, դիզելային և վառելիքի ներարկումով սնման համակարգների կառուցվածքային առանձնահատկությունները,
- խ. Ճիշտ է ներկայացնում սնման յուրաքանչյուր համակարգի հիմնական մասերի նշանակությունը և դրանց ընդհանուր կառուցվածքը,
- ծ. Ճիշտ է ներկայացնում վառոցքի համակարգի նշանակությունը,
- կ. Ճիշտ է ներկայացնում վառոցքի համակարգի հիմնական մասերից յուրաքանչյուրի նշանակությունը և ընդհանուր կառուցվածքը,
- հ. Ճիշտ է ներկայացնում շաժիչի մեխանիզմների և համակարգերի տեխնիկական աշխատանքները,
- ծ. Ճիշտ է ներկայացնում շարժիչի աշխատանքի ընթացքում առաջացող հիմնական անսարքությունները:

Գնահատման միջոցը

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի հիման վրա:

Ստորև ներկայացվում է

- ներքին այրման շարժիչի նշանակությունը,
- ներքին այրման շարժիչի դասակարգումը,
- ներքին այրման շարժիչի կառուցվածքը,
- ներքին այրման շարժիչի հիմնական պարամետրերն ու տերմինները,
- ներքին այրման շարժիչի աշխատանքի սկզբունքը,
- ներքին այրման շարժիչի տեխնիկական սպասարկումների տեսակները և նորմատիվները:

Սովորողին կառաջադրվի առնվազն 12 հարց շարժիչի ընդհանուր կառուցվածքի, մեխանիզմների և համակարգերի նշանակության, կառուցվածքի և տեխնիկական սպասարկման վերաբերյալ: Արդյունքի ձեռք բերումը բավարար կհամարվի, եթե հարցերի առնվազն 80%-ին տրվել են ճիշտ պատասխաններ, իսկ մնացած հարցերի պատասխաններում կարող են թույլ տրվել որոշ ոչ էական սխալներ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացվում է դասախոսության, գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում օգտագործվում է ավտոմոբիլային շարժիչների մոդելներ, պլակատներ, առանձին մեխանիզմների և համակարգերի ստեղծումներ, տեսաֆիլմեր, մեխանիզմների և համակարգերի մոդելներ, ուսումնական համապատասխան գրականություն:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Դասախոսություն՝	6 ժամ
Գործնական պարապմունքներ՝	12 ժամ

Արդյունք 4. Իմանալ ավտոմոբիլի շարժախաղողականների տեսակները, կառուցվածքը, աշխատանքի առանձնահատկությունները և կարողանա գործնականում կիրառել այդ գիտելիքները: Բացատրի

շարժահաղորդակի ագրեգատների, մեխանիզմների տեխնիկական սպասարկման աշխատանքները և կարողանա գործնականում կիրառել այդ գիտելիքները: Բնութագրի շարժահաղորդակի հիմնական անսարքությունները.

Կատարման չափանիշներ

- ա. ճիշտ է բացատրում շարժահաղորդակի նշնակություն և տեսակները,
- բ. ճիշտ է բացատրում կցորդիչի նշնակություն և տեսակները,
- գ. ճիշտ ներկայացնում կցորդիչի յուրաքանչյուր մեքենամասի նշանակություն և ընդհանուր կառուցվածքը,
- դ. ճիշտ է բացատրում փոխանցումների տուփի նշանակությունը և տեսակները,
- ե. ճիշտ է ներկայացնում աստիճանավոր և անաստիճան փոխանցման տուփերի հիմնական մեքենամասերի (մասերի) նշանակություն և ընդհանուր կառուցվածքը,
- ե. ճիշտ է բացատրում կարդանային փոխանցման նշանակության և տեսակները,
- զ. ճիշտ է ներկայացնում հավասար և անհավասար անկյունային արագության կարդանային փոխանցումների յուրաքանչյուր մեքենամասի նշանակությունը և ընդհանուր կառուցվածքը,
- է. ճիշտ է բացատրում բաշխիչ տուփի նշանակությունը և ընդհանուր կառուցվածքը,
- ը. ճիշտ է ներկայացնում բաշխիչ տուփի յուրաքանչյուր մեքենամասի նշանակությունը և ընդհանուր կառուցվածքը,
- թ. ճիշտ է բացատրում տանող կամրջակի նշանակությունը և ընդհանուր կառուցվածքը,
- ժ. ճիշտ է ներկայացնում տանող կամրջակի յուրաքանչյուր մասի (մեքենամասի) նշանակությունը և ընդհանուր կառուցվածքը,
- ի. ճիշտ է բացատրում առջևի տանող և ղեկավարվող անիվների հաղորդակների կառուցվածքային առանձնահատկությունները,
- լ. ճիշտ է ներկայացնում շարժահաղորդակի տեխնիկական սպասարկման աշխատանքները,
- խ. ճիշտ է ներկայացնում շարժահաղորդակի աշխատանքի ընթացքում առաջացող հիմնական անսարքությունները:

Գնահատման միջոցը

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանների հիման վրա:

Ստորև ներկայացվում է

- շարժահաղորդակի նշնակություն և տեսակները,
- կցորդիչի նշնակությունը, տեսակները, ընդհանուր կառուցվածքը և աշխատանքի սկզբունքը,
 - փոխանցումների տուփի նշանակությունը, տեսակները, ընդհանուր կառուցվածքը և աշխատանքի սկզբունքը,
- կարդանային փոխանցման նշանակությանը, տեսակները, ընդհանուր կառուցվածքը և աշխատանքի սկզբունքը,
- բաշխիչ տուփի նշանակությունը, նշանակությանը, տեսակները, ընդհանուր կառուցվածքը և աշխատանքի սկզբունքը,
- տանող կամրջակի նշանակությունը, տեսակները, ընդհանուր կառուցվածքը և աշխատանքի սկզբունքը,
- առջևի տանող և ղեկավարվող անիվների հաղորդակների կառուցվածքային առանձնահատկությունները,

- շարժահաղորդակի աշխատանքի ընթացքում առաջացող հիմնական անսարքությունները:

Սովորողին կառաջադրվեն առնվազն 10 հարցեր՝ ավտոմոբիլի շարժահաղորդակների տեսակների, կառուցվածքի, աշխատանքի առանձնահատկությունների, շարժահաղորդակի ագրեգատների, մեխանիզմների տեխնիկական սպասարկման աշխատանքների և դրանց անսարքությունների վերաբերյալ: Արդյունքի ձեռք բերումը դրական կհամարվի, եթե հարցերի առնվազն 80%-ին ճիշտ պատասխան կտրվի, իսկ մնացած հարցերի պատասխաններում կարող են թույլ տրվել որոշ ոչ էական սխալներ կառուցվածքային առանձնահատկությունների վերաբերյալ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացվում է դասախոսության, գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում օգտագործվում է ղեկային վարման և արգելակային ստենդներ, մոդելներ, պլակատներ, ուսումնական համապատասխան գրականություն, տեսաֆիլմեր, առանձին ագրեգատների մեխանիզմների և մեքենամասերի նմուշներ, ինչպես շահագործման համար պիտանի, այնպես էլ ոչ պիտանի:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Դասախոսություն՝	6 ժամ
Գործնական պարապմունքներ՝	12 ժամ

Արդյունք 5. Իմանալ ղեկային վարման և արգելակային համակարգերի տեսակները, կառուցվածքային առանձնահատկությունները և կարողանա գործնականում կիրառել այդ գիտելիքները: Բացատրի ղեկային վարման և արգելակային համակարգերի տեխնիկական սպասարկման աշխատանքները և կարողանա գործնականում կիրառել այդ գիտելիքները: Բնութագրի ղեկային վարման և արգելակային համակարգերի հիմնական անսարքությունները:

Կատարման չափանիշներ

- ա. ճիշտ է բացատրում ղեկային վարման նշանակությունը, ընդհանուր կառուցվածքը,
- բ. ճիշտ է ներկայացնում ղեկային մեխանիզմի, նշանակությունը, տեսակները և թվարկում հիմնական մեքենամասերը,
- գ. ճիշտ է ներկայացնում ղեկային մեխանիզմի յուրաքանչյուր մեքենամասի նշանակությունը և ընդհանուր կառուցվածքը,
- դ. ճիշտ է ներկայացնում ղեկային շարժաբերի նշանակությունը, տեսակները, թվարկում հիմնական մեքենամասերը,
- ե. ճիշտ է ներկայացնում ղեկային շարժաբերի յուրաքանչյուր հիմնական մեքենամասի, նշանակությունը և ընդհանուր կառուցվածքը,
- զ. ճիշտ է ներկայացնում արգելակային համակարգի նշանակությունը, ընդհանուր կառուցվածքը, տեսակները,
- է. ճիշտ է ներկայացնում արգելակային մեխանիզմի նշանակությունը,
- ը. ճիշտ է ներկայացնում թմբուկային և սկավառակային արգելակային մեխանիզմների յուրաքանչյուր մեքենամասի նշանակությունը և ընդհանուր կառուցվածքը,
- թ. ճիշտ է ներկայացնում արգելակային հաղորդակի տեսակները և կառուցվածքային առանձնահատկությունները,
- ժ. ճիշտ է ներկայացնում հիդրավլիկ արգելակային հաղորդակի հիմնական մասերի նշանակությունը և ընդհանուր կառուցվածքը,

ի. Ճիշտ է ներկայացնում պնևմատիկ արգելակային հաղորդակի հիմնական մասերի նշանակությունը և ընդհանուր կառուցվածքը,

լ. Ճիշտ է ներկայացնում ղեկային վարման տեխնիկական սպասարկման աշխատանքները և աշխատանքի ընթացքում առաջացող հիմնական անսարքությունները,

խ. Ճիշտ է ներկայացնում արգելակային համակարգի տեխնիկական սպասարկման աշխատանքները և աշխատանքի ընթացքում առաջացող հիմնական անսարքությունները:

Գնահատման միջոցը

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանների հիման վրա:

Ստորև ներկայացվում է

- ղեկային մեխանիզմների նշանակությունը, տեսակները և ընդհանուր կառուցվածքը,
- արգելակային մեխանիզմների նշանակությունը, տեսակները և ընդհանուր կառուցվածքը,
- ղեկային շարժաբերի նշանակությունը և ընդհանուր կառուցվածքը,
- թմբուկային և սկավառակային արգելակային մեխանիզմների նշանակությունը և ընդհանուր կառուցվածքը,
- հիդրավլիկ և պնևմատիկ արգելակային հաղորդակների նշանակությունը և ընդհանուր կառուցվածքը,
- ղեկային վարման և արգելակային համակարգի տեխնիկական սպասարկման աշխատանքները և աշխատանքի ընթացքում առաջացող հիմնական անսարքությունները:

Սովորողին կառաջադրվեն առնվազն 10 հարցեր՝ ղեկային վարման արգելակային համակարգերի, տեսակների, կառուցվածքի, աշխատանքի առանձնահատկությունների, տեխնիկական սպասարկման աշխատանքների և հիմնական անսարքությունների վերաբերյալ: Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե հարցերի առնվազն 80%-ին տրվել են ճիշտ պատասխաններ, իսկ մնացած հարցերի պատասխաններում կարող են թույլ տրվել որոշ ոչ էական սխալներ կառուցվածքային առանձնահատկությունների վերաբերյալ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացվում է դասախոսության, գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում օգտագործվում է ղեկային վարման և արգելակային համակարգերի ստենդներ, մոդելներ, պլակատներ, ուսումնական գրականություն, տեսաֆիլմեր, առանձին ազդեցատների մեխանիզմների և մեքենամասերի նմուշներ, ինչպես շահագործման համար պիտանի, այնպես էլ ոչ պիտանի:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Դասախոսություն՝ 4 ժամ

Գործնական պարապմունքներ՝ 14 ժամ

Արդյունքը 6. Իմանալ կախոցքների տեսակները, կառուցվածքային առանձնահատկությունները և կարողանա գործնականում կիրառել այդ գիտելիքները: Բացատրի կախոցքի տեխնիկական սպասարկման աշխատանքները և կարողանա գործնականում կիրառել այդ գիտելիքները: Բնութագրի կախոցքի հիմնական անսարքությունները:

Կատարման չափանիշներ

ա. Ճիշտ է բացատրում կախոցքների նշանակությունը, տեսակները,

բ. Ճիշտ է ներկայացնում կախյալ կախոցքի ընդհանուր կառուցվածքը և թվարկում հիմնական մասերը,

գ. Ճիշտ է ներկայացնում կախյալ կախոցքի յուրաքանչյուր մեքենամասի նշանակությունը և ընդհանուր կառուցվածքը,

դ. Ճիշտ է ներկայացնում անկախ կախոցքի ընդհանուր կառուցվածքը և թվարկում հիմնական մասերը,

ե. Ճիշտ է ներկայացնում անկախ կախոցքի յուրաքանչյուր մասի նշանակությունը և ընդհանուր կառուցվածքը,

զ. Ճիշտ է ներկայացնում կախոցքի տեխնիկական սպասարկման աշխատանքները,

է. Ճիշտ է ներկայացնում կախոցքի աշխատանքի ընթացքում առաջացող հիմնական անսարքությունները:

Գնահատման միջոցը

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանների հիման վրա:

Սովորողը պետք է գիտենա.

- կախոցքների նշանակությունը, տեսակները և ընդհանուր կառուցվածքը,

- կախոցքի տեխնիկական սպասարկման աշխատանքները և աշխատանքի ընթացքում առաջացող հիմնական անսարքությունները:

Սովորողին կառաջադրվի առնվազն 5 հարց կախոցքների նշանակության, տեսակների, ընդհանուր կառուցվածքի, տեխնիկական սպասարկման աշխատանքների և հիմնական անսարքությունների վերաբերյալ: Արդյունքի յուրացումը կհամարվի դրական, եթե հարցերի առնվազն 80%-ին տրվեն ճիշտ պատասխաններ, իսկ մնացած հարցերի պատասխաններում կարող են թույլ տրվել որոշ ոչ էական սխալներ կառուցվածքային առանձնահատկությունների վերաբերյալ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացվում է դասախոսության, գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում օգտագործվում է կախոցքների տարբեր տեսակի ստենդներ, մոդելներ, պլակատներ, ուսումնական համապատասխան գրականություն, առանձին հանգույցների, մասերի մոդելներ և իրական նմուշներ, անհրաժեշտության դեպքում նաև տեսաֆիլմեր:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Դասախոսություն՝ 4 ժամ

Գործնական պարապմունքներ՝ 12 ժամ

Արդյունքը 7. Իմանալ թափքերի տեսակները, կառուցվածքային առանձնահատկությունները և կարողանա գործնականում կիրառել այդ գիտելիքները: Բացատրի թափքի տեխնիկական սպասարկման աշխատանքները և կարողանա գործնականում կիրառել այդ գիտելիքները, բնութագրել թափքի հիմնական անսարքությունները.

Կատարման չափանիշներ

ա. Ճիշտ է բացատրում թափքերի նշակակությունը, տեսակները,

բ. Ճիշտ է ներկայացնում թափքերի ընդհանուր կառուցվածքը,

գ. Ճիշտ է ներկայացնում շրջանակի և թափքի հիմնական մասերից յուրաքանչյուր նշակակությունը և ընդհանուր կառուցվածքը,

դ. Ճիշտ է ներկայացնում թափքերի տեխնիկական սպասարկման աշխատանքները,

ե. Ճիշտ է ներկայացնում թափքերի հիմնական անսարքությունները,

Գնահատման միջոցը

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանների հիման վրա:

Ստորև ներկայացվում է

- թափքերի նշակակությունը, տեսակները և ընդհանուր կառուցվածքը,
- թափքերի տեխնիկական սպասարկման աշխատանքները և հիմնական անսարքություններ:

Սովորողին առաջադրվելու են 4 հարցեր՝ ավտոմոբիլների թափքերի նշանակության, տեսակների, ընդհանուր կառուցվածքի, տեխնիկական սպասարկման աշխատանքների և հիմնական անսարքությունների վերաբերյալ: Արդյունքի յուրացումը կհամարվի դրական, եթե հարցերի առնվազն 80%-ին տրվեն ճիշտ պատասխաններ: Իսկ մնացած հարցերի պատասխաններում կարող են թույլ տրվել որոշ ոչ էական սխալներ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացվում է դասախոսության, գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում օգտագործվում է ավտոմոբիլների թափքերի տարբեր տեսակների մոդելներ, պլակատներ, առանձին մասերի մոդելներ և իրական նմուշներ, ուսումնական համապատասխան գրականություն:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Դասախոսություն՝ 4 ժամ

Գործնական պարապմունքներ՝ 10 ժամ

Արդյունքը 8 Իմանալ անիվների և դողերի կառուցվածքային առանձնահատկությունները և կարողանա գործնականում կիրառել այդ գիտելիքները:

Կատարման չափանիշներ

- ա. Ճիշտ է բացատրում անիվների և դողրի կառուցվածքը և թվարկում մեքենամասերը,
- բ. Ճիշտ է ներկայացնում անիվների յուրաքանչյուր մեքենամասի նշակակությունը և ընդհանուր կառուցվածքը,
- գ. Ճիշտ է ներկայացնում անիվների և դողրի տեխնիկական սպասարկման աշխատանքները,
- դ. Ճիշտ է ներկայացնում ավտոմոբիլի շահագործման ընթացքում անիվների և դողերի հիմնական անսարքությունները:

Գնահատման միջոցը

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանների հիման վրա:

Ստորև ներկայացվում է

- անիվների և դողրի կառուցվածքը,
- անիվների և դողրի տեխնիկական սպասարկման աշխատանքները և շահագործման ընթացքում առաջացող դրանց հիմնական անսարքությունները:

Սովորողին կառաջադրվեն առնվազն 3 հարցեր անիվների և դողերի ընդհանուր կառուցվածքի, տեխնիկական սպասարկման աշխատանքների և հիմնական անսարքությունների վերաբերյալ: Արդյունքի յուրացումը կհամարվի դրական, եթե բոլոր հարցերին տրվեն ճիշտ պատասխաններ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացվում է դասախոսության, գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում օգտագործվում է անիվների և դողերի տարբեր տեսակների մոդելներ, մնուշներ, պլակատներ, ուսումնական համապատասխան գրականություն:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Դասախոսություն`	4 ժամ
Գործնական պարապմունքներ`	10 ժամ

ՄՈԴՈՒԽ ԱՆՎԱՆՈՒՄԸ` ԱՎՏՈՇԱՀԱԳՈՐԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

Մոդուլի դասիչը` ՓԿԿ 4-09-013

Մոդուլի տևողությունը` 36 ժամ

Դասախոսություն` 18 ժամ

Գործնական պարապմունքներ` 18 ժամ

Մոդուլի նպատակը`

Ավարտելով այս մոդուլը` սովորողը ձեռք կբերի ավտոմոբիլներում կիրառվող վառելիքաքսանյութերի և տեխնիկական հեղուկների վերաբերյալ գիտելիքներ, և ավտոմոբիլի շահագործման ընթացքում դրանք կիրառելու կարողություններ:

Մուտքային պահանջները` Չկան

Հատուկ պահանջներ`

Վառելիքաքսանյութերի և տեխնիկական հեղուկների նկատմամբ ալերգիկ երևույթների բացակայությունը:

Արդյունքները`

Այս մոդուլը յուրացնելուց հետո սովորողը պետք է`

1. Հստակ բացատրի վառելիքաքսանյութերի և տեխնիկական հեղուկների նշանակությունը ավտոմոբիլների արդյունավետ շահագործման, հուսալիության և երկարակեցության, անվտանգ շահագործման գործընթացում,
2. Ներկայացնի ավտոմոբիլային շարժիչներում օգտագործվող վառելանյութերի դասակարգումը, մակնիշումը և կիրառումը,
3. Ներկայացնի ավտոմոբիլների քսանյութերի դասակարգումը, մակնիշումը, կիրառումը,
4. Բացատրի տեխնիկական հեղուկների տեսակները, կիրառումը,
5. Բացատրի վառելիքաքսանյութերի և տեխնիկական հեղուկների պահպանման և լիցքավորման գործընթացները:

Գնահատման կարգը`

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Արդյունքը 1. Բացատրել վառելիքաքսանյութերի և տեխնիկական հեղուկների նշանակությունը.

Կատարման չափանիշներ

ա. Ճիշտ է բացատրում վառելիքաքսանյութերի նշանակությունը ավտոմոբիլների շահագործման արդյունավետության բարձրացման գործընթացում,

բ. Ճիշտ է բացատրում տեխնիկական հեղուկների նշանակությունը ավտոմոբիլի հուսալիության և երկարակեցության ապահովման համար,

գ. Ճիշտ է ներկայացնում վառելիքաքսանյութերի նշանակությունը ավտոմոբիլի հուսալի աշխատանքը և երկարակեցությունը ապահովման համար,

դ. Ճիշտ է ներկայացնում վառելիքաքսանյութերի և տեխնիկական հեղուկների նշանակությունը ավտոմոբիլի անվտանգ շահագործումը ապահովելիս:

Գնահատման միջոցը

Սովորողին տրվում է ուսումնական գրականություն և պահանջվում է ճիշտ բացատրել վառելիքաքսանյութերի և տեխնիկական հեղուկների նշանակությունը:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե սովորողը կարողանում է ավտոմոբիլների շահագործման արդյունավետության բարձրացման գործընթացում անսխալ ներկայացնել վառելիքաքսանյութերի նշանակությունը և բացատրել տեխնիկական հեղուկների նշանակությունը ավտոմոբիլի հուսալիության ու երկարակեցության ապահովման համար, ինչպես նաև ճիշտ ներկայացնել ավտոմոբիլի անվտանգ շահագործման ապահովման համար վառելիքաքսանյութերի և տեխնիկական հեղուկների նշանակությունը:

Աշխատանքի կատարումը ստուգելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացվում է դասախոսության, գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողներին տալ վառելիքաքսանյութերի և տեխնիկական հեղուկների մասին համապատասխան գիտելիքներ:

Ուսուցման ընթացքում օգտագործվում է ուսումնական գրականություն, վառելիքաքսանյութերի և տեխնիկական հեղուկների անվանացանկ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Դասախոսություն՝ 4 ժամ

Գործնական պարապմունքներ՝ 4 ժամ

Արդյունքը 2. Ներկայացնել ավտոմոբիլային շարժիչներում օգտագործվող վառելանյութերի դասակարգումը, մակնշումը, կիրառումը.

Կատարման չափանիշներ

ա. Ճիշտ է ներկայացնում ավտոմոբիլային վառելանյութային ներկայացվող տեխնիկա-շահագործական պահանջները,

բ. Ճիշտ է ներկայացնում ավտոմոբիլային վառելանյութերի որակի նորմավորված ցուցանիշները,

գ. Ճիշտ է ներկայացնում ավտոմոբիլային բենզինների դասակարգումը, մակնիշումը և կիրառումը,

դ. Ճիշտ է ներկայացնում դիզելային վառելանյութերի դասակարգումը, մակնիշումը և կիրառումը,

ե. Ճիշտ է ներկայացնում գազային վառելանյութերի տեսակները, մակնիշումը և կիրառման բնագավառները:

Գնահատման միջոցը

Սովորողին տրվում է ուսումնական գրականություն և պահանջվում է ճիշտ ներկայացնել ավտոմոբիլային շարժիչներում օգտագործվող վառելանյութերի դասակարգումը, մակնիշավորումը, կիրառումը:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե սովորողը կարողանում է ճիշտ ներկայացնել ավտոմոբիլային վառելանյութերի նկատմամբ կիրառվող տեխնիկաշահագործական պահանջները, ավտոմոբիլային վառելանյութերի որակի նորմավորված ցուցանիշները, բենզինների, դիզելային ու գազային վառելանյութերի դասակարգումը, մակնիշավորումը և կիրառումը:

Աշխատանքի կատարումը ստուգելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացվում է դասախոսության, գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողներին տալ ավտոմոբիլային շարժիչներում օգտագործվող վառելանյութերի դասակարգման, մակնիշավորման ու կիրառման մասին համապատասխան գիտելիքներ:

Ուսուցման ընթացքում օգտագործվում է ուսումնական գրականություն և վառելանյութերի տարբեր մակնիշներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Դասախոսություն՝ 2 ժամ

Գործնական պարապմունքներ՝ 4 ժամ

Արդյունքը 3. Ներկայացնել ավտոմեքենաների քսանյութերի դասակարգումը, մակնիշումը և կիրառումը.

Կատարման չափանիշներ

ա. Ճիշտ է ներկայացնում շարժիչային քսանյութերի դասակարգումը, մակնիշումը և կիրառման բնագավառները,

բ. Ճիշտ է ներկայացնում շարժահաղորդակներում կիրառվող քսանյութերի տեսակները և կիրառման բնագավառները,

գ. Ճիշտ է ներկայացնում քսուքների տեսակները և կիրառման բնագավառները:

Գնահատման միջոցը

Սովորողին տրվում է ուսումնական գրականություն և պահանջվում է ճիշտ ներկայացնել ավտոմեքենաների քսանյութերի դասակարգումը, մակնիշավորումը և կիրառումը:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե սովորողը կարողանում է ճիշտ ներկայացնել շարժիչային քսանյութերի դասակարգումը, մակնիշավորումը, շարժահաղորդակներում կիրառվող քսանյութերի տեսակները, քսուքների տեսակները, ինչպես նաև դրանց կիրառման բնագավառները:

Աշխատանքի կատարումը ստուգելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացվում է դասախոսության, գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողներին տալ ավտոմեքենաների քսանյութերի դասակարգման, մակնշավորման և կիրառման մասին համապատասխան գիտելիքներ:

Ուսուցման ընթացքում օգտագործվում է ուսումնական գրականություն և քսանյութերի տարբեր մակնիշներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Դասախոսություն՝	4 ժամ
Գործնական պարապմունքներ՝	2 ժամ

Արդյունքը 4. Ներկայացնել տեխնիկական հեղուկների նշանակությունը, տեսակները, կիրառման բնագավառները.

Կատարման չափանիշներ

- ա. Ճիշտ ներկայացնում ավտոմեքենայի շարժիչներում օգտագործվող հովացնող հեղուկների նշանակությունը, դասակարգումը,
- բ. Ճիշտ է ներկայացնում կցորդիչի հաղորդակում կիրառվող տեխնիկական հեղուկների նշանակությունը, դասակարգումը, մակնիշումը,
- գ. Ճիշտ է ներկայացնում արգելակային հաղորդակում կիրառվող տեխնիկական հեղուկների նշանակությունը, դասակարգումը, մակնիշումը,
- դ. Ճիշտ է ներկայացնում ինքնաթափերի թափքի բեռնաթափման հաղորդակում կիրառվող տեխնիկական հեղուկների նշանակությունը, դասակարգումը, մակնիշումը:

Գնահատման միջոցը

Սովորողին տրվում է ուսումնական գրականություն և պահանջվում է Ճիշտ ներկայացնել տեխնիկական հեղուկների նշանակությունը, տեսակները, կիրառման բնագավառները:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե սովորողը կարողանում է Ճիշտ ներկայացնել ավտոմեքենայի շարժիչներում օգտագործվող հովացնող հեղուկների նշանակությունը, դասակարգումը, կցորդիչի և արգելակային հաղորդակներում, ինչպես նաև ինքնաթափող մեխանիզմներում կիրառվող տեխնիկական հեղուկների նշանակությունը, դասակարգումը, մակնիշավորումը:

Աշխատանքի կատարումը ստուգելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացվում է դասախոսության, գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողներին տալ ավտոմոբիլներում օգտագործվող տեխնիկական հեղուկների նշանակության, տեսակների, կիրառման բնագավառների մասին համապատասխան գիտելիքներ: Ուսուցման ընթացքում օգտագործվում է ուսումնական գրականություն և տեխնիկական հեղուկների տարբեր մակնիշներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Դասախոսություն՝	4 ժամ
Գործնական պարապմունքներ՝	4 ժամ

Արդյունքը 5. Բացատրել վառելիքաքսանյութերի և տեխնիկական հեղուկների պահպանումը և լիցքավորումը.

Կատարման չափանիշներ

- ա. Ճիշտ է ներկայացնում բենզինների պահպանումը և ավտոմոբիլի լիցքավորումը,
- բ. Ճիշտ է ներկայացնում դիզելային վառելիքի պահպանումը և ավտոմոբիլի լիցքավորումը,
- գ. Ճիշտ է ներկայացնում հեղուկ գազի պահպանումը և լիցքավորումը,
- դ. Ճիշտ է ներկայացնում բնական գազի պահպանումը և լիցքավորումը,
- ե. Ճիշտ է ներկայացնում ավտոմոբիլային քսանյութերի պահպանումը և լիցքավորումը,
- զ. Ճիշտ է ներկայացնում տեխնիկական հեղուկների պահպանումը և լիցքավորումը:

Գնահատման միջոցը

Սովորողին տրվում է ուսումնական գրականություն և պահանջվում է ճիշտ բացատրել վառելիքաքսանյութերի և տեխնիկական հեղուկների պահպանումն ու լիցքավորումը:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե սովորողը կարողանում է ճիշտ ներկայացնել բենզինների, դիզելային վառելիքի, հեղուկ և բնական գազի, ավտոմոբիլային քսանյութերի, տեխնիկական հեղուկների պահպանումը և դրանց լիցքավորումը:

Աշխատանքի կատարումը ստուգելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացվում է դասախոսության, գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողներին տալ վառելիքաքսանյութերի և տեխնիկական հեղուկների պահպանման ու լիցքավորման մասին համապատասխան գիտելիքներ:

Ուսուցման ընթացքում օգտագործվում է ուսումնական գրականություն և վառելիքաքսանյութերի ու տեխնիկական հեղուկների պահպանման և լիցքավորման նորմատիվային փաստաթղթեր:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Դասախոսություն	4 ժամ
Գործնական պարապմունքներ	4 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ

Մոդուլի դասիչը՝ ՓԿԿ 4-09-014

Մոդուլի տևողությունը՝ 36 ժամ

Դասախոսություն՝ 24 ժամ

Սեմինար պարապմունքներ՝ 12 ժամ

Մոդուլի նպատակը՝

Սովորողին ծանոթացնել Հայաստանի Հանրապետությունում տրանսպորտային գործունեության իրավական, տնտեսական և կազմակերպական հիմնադրույթներին, ինչպես նաև այդ գործունեության մասնակիցների իրավասություններին և պարտականություններին:

Մուտքային պահանջներ՝ 2 կան

Արդյունքները՝

Այս մոդուլը յուրացնելուց հետո սովորողը պետք է

1. Իմանա «Տրանսպորտի մասին», «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում օգտագործված հիմնական հասկացությունները,
2. Պիտենա ավտոմոբիլային տրանսպորտի բնագավառում պետական կարգավորման և կառավարման հիմունքները,
3. Պիտենա ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների և ուղեբեռի փոխադրումների կազմակերպման հիմնադրույթները,
4. Պիտենա ավտոմոբիլային տրանսպորտով բեռների փոխադրումների կազմակերպման հիմնադրույթները,
5. Պիտենա մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորների փոխադրումների կազմակերպման հիմնադրույթները,
6. Իմանա փոխադրողի և պատվիրատուի իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը,
7. Պիտենա ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրումների անվտանգությանը ներկայացվող հիմնական պահանջները:

Գնահատման կարգը`

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Արդյունք 1. Իմանալ «Տրանսպորտի մասին», «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում օգտագործված հիմնական հասկացությունները.

Կատարման չափանիշներ

- ա. Ճիշտ է մեկնաբանում օրենքների կարգավորման առարկաները և գործողության ոլորտները,
- բ. Ճիշտ է մեկնաբանում ավտոմոբիլային տրանսպորտի մասին օրենսդրությունը,
- գ. կարողանում է սահմանել օրենքներում բերված բոլոր ընդհանուր հասկացությունները:

Գնահատման միջոցը

Սովորողին տրվում է 10 հարց «Տրանսպորտի մասին» ու «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում օգտագործված հիմնական հասկացությունների վերաբերյալ: Գնահատումը կատարվում է բանավոր:

ա) «Տրանսպորտի մասին» ՀՀ օրենքը

բ) «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքը

Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե սովորողը կարողանում է անսխալ մեկնաբանել օրենքների կարգավորման առարկան ու գործողության ոլորտը, ավտոմոբիլային տրանսպորտի մասին օրենսդրությունը և սահմանել օրենքներում օգտագործված հիմնական հասկացությունները: Ընդ որում սովորողը պետք է ճիշտ պատասխանի առնվազն 6 հարցի:

Աշխատանքի կատարումը ստուգելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացվում է դասախոսության և գործնական պարապմունքների միջոցով` նպատակ ունենալով սովորողներին տալ «Տրանսպորտի մասին» ու «Ավտոմոբիլային

տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում օգտագործված հիմնական հասկացությունների մասին համապատասխան գիտելիքներ:

Ուսուցման ընթացքում օգտագործվում է «Տրանսպորտի մասին» ու «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքները:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Դասախոսություն	6 ժամ
Սեմինար պարապմունքներ	4 ժամ

Արդյունք 2. Գիտենալ ավտոմոբիլային տրանսպորտի բնագավառում պետական կարգավորման և կառավարման հիմունքները.

Կատարման չափանիշներ

- ա. Ճիշտ է մեկնաբանում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտի բնագավառում պետական կարգավորման իրականացման նպատակները,
- բ. Ճիշտ է ներկայացնում ավտոմոբիլային տրանսպորտի բնագավառում պետական կարգավորման իրականացման ձևերը,
- գ. Ճիշտ է մեկնաբանում ավտոմոբիլային տրանսպորտի բնագավառի պետական կառավարումը,
- դ. Ճիշտ է մեկնաբանում Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի օգոստոսի 30-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորափոխադրումների կազմակերպման կարգը հաստատելու մասին» 1042-Ն որոշման պահանջները,
- ե. Ճիշտ է մեկնաբանում Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 27-ի «Ավտոկայարանային գործունեության կազմակերպման կարգը հաստատելու մասին» 1604-Ն որոշման պահանջները,
- զ. Ճիշտ է մեկնաբանում Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության տարածքից ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների և ուղեբեռների միջպետական փոխադրումների իրականացման կարգը հաստատելու մասին» 1587-Ն որոշման պահանջները,
- է. Կարողանում է լրացնել Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հուլիսի 31-ի «Կանոնավոր ուղևորափոխադրումների ճանապարհային թերթիկների և տոմսահաշվառման փաստաթղթերի ձևերը հաստատելու մասին» 1852-Ն որոշմամբ հաստատված ձևերը,
- ը. Ճիշտ է մեկնաբանում Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի օգոստոսի 30-ի «Հայաստանի Հանրապետության տարածքից ավտոմոբիլային տրանսպորտով բեռների միջպետական փոխադրումների իրականացման կարգը հաստատելու մասին» 1226-Ն որոշման պահանջները:

Գնահատման միջոցը

Գնահատումը կատարվում է բանավոր՝ սովորողին տալով 10 հարց՝ ավտոմոբիլային տրանսպորտի բնագավառում պետական կարգավորման և կառավարման հիմունքների մասին: «Տրանսպորտի մասին» ու «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքները, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի օգոստոսի 30-ի

«Հայաստանի Հանրապետության տարածքում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորափոխադրումների կազմակերպման կարգը հաստատելու մասին» 1042-Ն, 2007 թվականի դեկտեմբերի 27-ի «Ավտոկայարանային գործունեության կազմակերպման կարգը հաստատելու մասին» 1604-Ն, 2007 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության տարածքից ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների և ուղեբեռների միջպետական փոխադրումների իրականացման կարգը հաստատելու մասին» 1587-Ն, 2007 թվականի օգոստոսի 30-ի «Հայաստանի Հանրապետության տարածքից ավտոմոբիլային տրանսպորտով բեռների միջպետական փոխադրումների իրականացման կարգը հաստատելու մասին» 1226-Ն որոշումները, 2008 թվականի հուլիսի 31-ի «Կանոնավոր ուղևորափոխադրումների ճանապարհային թերթիկների և տոմսահաշվառման փաստաթղթերի ձևերը հաստատելու մասին» դ852-Ն որոշումով հաստատված ձևերը:

ա. «Տրանսպորտի մասին» ՀՀ օերնքը,

բ. «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» ՀՀ օերնքը,

գ. Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի օգոստոսի 30-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորափոխադրումների կազմակերպման կարգը հաստատելու մասին» 1042-Ն որոշումը,

դ. ՀՀ կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 27-ի «Ավտոկայարանային գործունեության կազմակերպման կարգը հաստատելու մասին» 1604-Ն որոշումը,

ե. ՀՀ կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության տարածքից ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների և ուղեբեռների միջպետական փոխադրումների իրականացման կարգը հաստատելու մասին» 1587-Ն որոշումը,

զ. ՀՀ կառավարության 2007 թվականի օգոստոսի 30-ի «Հայաստանի Հանրապետության տարածքից ավտոմոբիլային տրանսպորտով բեռների միջպետական փոխադրումների իրականացման կարգը հաստատելու մասին» 1226-Ն որոշումը,

է. ՀՀ կառավարության 2008 թվականի հուլիսի 31-ի «Կանոնավոր ուղևորափոխադրումների ճանապարհային թերթիկների և տոմսահաշվառման փաստաթղթերի ձևերը հաստատելու մասին» դ852-Ն որոշումով հաստատված ձևերը:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե առաջադրված հարցերից 5-ին սովորողը պատասխանում է անսխալ:

Աշխատանքի կատարումը ստուգելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացվում է դասախոսության և գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողներին տալ ավտոմոբիլային տրանսպորտի բնագավառում պետական կարգավորման և կառավարման հիմունքների վերաբերյալ գիտելիքներ:

Ուսուցման ընթացքում օգտագործվում է «Տրանսպորտի մասին» ու «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքները և ՀՀ կառավարության 2007թ 1042-Ն, 1604-Ն, 1587-Ն, 1226-Ն, 2008թ դ852-Ն որոշումները:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Դասախոսություն

8 ժամ

Մեմինար պարապմունքներ՝

2 ժամ

Արդյունք 3. Գիտենալ ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների և ուղեբեռի փոխադրումների կազմակերպման հիմնադրույթները.

Կատարման չափանիշներ

- ա. ճիշտ է ներկայացնում ուղևորների և ուղեբեռի փոխադրումների կազմակերպման հիմնադրույթները,
- բ. ճիշտ է ներկայացնում կանոնավոր ուղևորափոխադրումների երթուղային ցանցի ձևավորման մեթոդները,
- գ. ճիշտ է ներկայացնում կանոնավոր ուղևորափոխադրումների կազմակերպման հիմնական պահանջները,
- դ. ճիշտ է ներկայացնում ավտոբուսային կանոնավոր փոխադրումների երթուղիներին և սպասարկող ավտոտրանսպորտային միջոցներին ներկայացվող ընդհանուր պահանջները,
- ե. ճիշտ է ներկայացնում ուղևորների և ուղեբեռի կանոնավոր փոխադրումների կազմակերպման դրույթները:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումը կատարվում է բանավոր՝ հարց ու պատասխանի միջոցով: Սովորողին տրվում է 8 հարց՝ ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների և ուղեբեռի փոխադրումների կազմակերպման հիմնադրույթների մասին:

- ա. ուղևորների և ուղեբեռի փոխադրումների կազմակերպման հիմնադրույթներ,
- բ. կանոնավոր ուղևորափոխադրումների երթուղային ցանցի ձևավորման մեթոդներ,
- գ. կանոնավոր ուղևորափոխադրումների կազմակերպման հիմնական պահանջներ:

դ) Ավտոբուսային կանոնավոր փոխադրումների երթուղիներին և սպասարկող ավտոտրանսպորտային միջոցներին ներկայացվող ընդհանուր պահանջներ

Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե սովորողը կարողանում է անսխալ պատասխանել առաջադրված հարցերից 5-ին:

Աշխատանքի կատարումը ստուգելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացվում է դասախոսության և գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողներին տալ ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների և ուղեբեռի փոխադրումների կազմակերպման հիմնադրույթների մասին գիտելիքներ:

Ուսուցման ընթացքում օգտագործվում է «Տրանսպորտի մասին» ու «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքները, ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքի» «Փոխադրման պարտավորություններ» գլուխը, ՀՀ Տրանսպորտի և կապի նախարարության նորմատիվային փաստաթղթեր:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Դասախոսություն՝ 2 ժամ

Մեմինար պարապմունքներ՝ 1 ժամ

Արդյունք 4. Գիտենալ ավտոմոբիլային տրանսպորտով բեռների փոխադրումների կազմակերպման հիմնադրույթները.

Կատարման չափանիշներ

ա. ճիշտ է ներկայացնում Հայաստանի Հանրապետության տարածքում ավտոմոբիլային տրանսպորտով բեռնափոխադրումների կազմակերպման հիմնադրույթները և հիմնական պահանջները,

բ. ճիշտ է ներկայացնում Հայաստանի Հանրապետության տարածքից ավտոմոբիլային տրանսպորտով բեռների միջպետական փոխադրումների իրականացմանը ներկայացվող պահանջները,

գ. ճիշտ է ներկայացնում բեռնարկերով, տակդիրներով, կապոցներով և այլ մասնագիտացված փոխադրումներին ներկայացվող պահանջները,

դ. ճիշտ է ներկայացնում բեռն առաքողի և բեռը ստացողի իրավունքներն ու պարտականությունները:

Գնահատման միջոցը

Սովորողին տրվում են «Տրանսպորտի մասին», «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքները և պահանջվում է անսխալ ներկայացնել Հայաստանի Հանրապետության տարածքում ավտոմոբիլային տրանսպորտով բեռնափոխադրումների կազմակերպման հիմնադրույթները:

ա. Հայաստանի Հանրապետության տարածքում ավտոմոբիլային տրանսպորտով բեռնափոխադրումների կազմակերպման հիմնադրույթները և հիմնական պահանջներ,

բ. Հայաստանի Հանրապետության տարածքից ավտոմոբիլային տրանսպորտով բեռների միջպետական փոխադրումների իրականացմանը ներկայացվող պահանջներ,

գ. բեռնարկերով, տակդիրներով, կապոցներով և այլ մասնագիտացված փոխադրումներին ներկայացվող պահանջներ,

դ. առաքողի և սպառողի իրավունքներն ու պարտականությունները:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե սովորողը կարողանում է անսխալ ներկայացնել Հայաստանի Հանրապետության տարածքում ավտոմոբիլային տրանսպորտով բեռնափոխադրումների կազմակերպման հիմնադրույթները և հիմնական պահանջները, Հայաստանի Հանրապետության տարածքից ավտոմոբիլային տրանսպորտով բեռների միջպետական փոխադրումների իրականացմանը ներկայացվող պահանջները, բեռնարկերով, տակդիրներով, կապոցներով և այլ մասնագիտացված փոխադրումներին ներկայացվող պահանջները, բեռն առաքողի և բեռը ստացողի իրավունքներն ու պարտականությունները:

Աշխատանքի կատարումը ստուգելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացվում է դասախոսության և գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողներին տալ ավտոմոբիլային տրանսպորտով բեռների փոխադրումների կազմակերպման հիմնադրույթների մասին անհրաժեշտ գիտելիքներ:

Ուսուցման ընթացքում օգտագործվում է «Տրանսպորտի մասին» ու «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքները, ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքի» «Փոխադրման պարտավորություններ» գլուխը և ՀՀ Տրանսպորտի և կապի նախարարության նորմատիվային փաստաթղթեր:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Դասախոսություն՝ 2 ժամ

Սեմինար պարապմունքներ՝ 1 ժամ

Արդյունք 5. Գիտենալ մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորների փոխադրումների կազմակերպման հիմնադրույթները.

Կատարման չափանիշներ

ա. Ճիշտ է ներկայացնում տաքսամատորային փոխադրումներ իրականացնող ավտոտրանսպորտային միջոցների կահավորմանը ներկայացվող պահանջները,

բ. Ճիշտ է ներկայացնում մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորության կազմակերպմանը ներկայացվող պահանջները:

Գնահատման միջոցը

Սովորողին տրվում է 6 հարց տաքսամատորային փոխադրումների վերաբերյալ:

ա. տաքսամատորային փոխադրումներ իրականացնող ավտոտրանսպորտային միջոցների կահավորմանը ներկայացվող պահանջները,

բ. մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորության կազմակերպմանը ներկայացվող պահանջներ:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե սովորողը կարողանում է անսխալ պատասխանել առաջադրված հարցերից առնվազն 4-ին:

Աշխատանքի կատարումը ստուգելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացվում է դասախոսության և գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողներին տալ մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորների փոխադրումների կազմակերպման հիմնադրույթների մասին անհրաժեշտ գիտելիքներ:

Ուսուցման ընթացքում օգտագործվում է «Տրանսպորտի մասին» ու «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքները, ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքի» «Փոխադրման պարտավորություններ» գլուխը և ՀՀ Տրանսպորտի և կապի նախարարության նորմատիվային փաստաթղթեր:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Դասախոսություն՝ 2 ժամ

Սեմինար պարապմունքներ՝ 2 ժամ

Արդյունք 6. Իմանա փոխադրողի և պատվիրատուի իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը.

Կատարման չափանիշներ

ա. Ճիշտ է ներկայացնում փոխադրողի իրավունքները ու պարտականությունները,

բ. Ճիշտ է ներկայացնում ուղևորների իրավունքները և պարտականությունները,

գ. Ճիշտ է ներկայացնում պատասխանատվությունը փոխադրումների կազմակերպման ընթացքում:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումը կատարվում է գրավոր՝ հացաշարի միջոցով՝ հաշվի առնելով գործնական պարապմունքների ժամանակ սովորողի ցուցաբերած գիտելիքները:

- ա. փոխադրող կազմակերպության իրավունքներն ու պարտականությունները,
- բ. ուղևորների իրավունքները և պարտականությունները,
- գ. երկկողմանի պատասխանատվությունը փոխադրումների կազմակերպման ընթացքում:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե սովորողը կարողանում է անսխալ ներկայացնել փոխադրողների և ուղևորների իրավունքներն ու պարտականությունները, պատասխանատվությունը՝ փոխադրումների կազմակերպման ընթացքում:

Աշխատանքի կատարումը ստուգելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացվում է դասախոսության և գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողներին տալ փոխադրողի և պատվիրատուի իրավունքների, պարտականությունների և պատասխանատվության մասին գիտելիքներ:

Ուսուցման ընթացքում օգտագործվում է «Տրանսպորտի մասին» ու «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքները, ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքի» «Փոխադրման պարտավորություններ» գլուխը և ՀՀ Տրանսպորտի և կապի նախարարության նորմատիվային փաստաթղթեր:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Դասախոսություն	2 ժամ
Սեմինար պարապմունքներ	1 ժամ

Արդյունք 7. Գիտենալ ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրումների անվտանգությանը ներկայացվող հիմնական պահանջները.

Կատարման չափանիշներ

- ա. ճիշտ է ներկայացնում ավտոտրանսպորտային միջոցների անվտանգությանը ներկայացվող պահանջները,
- բ. ճիշտ է ներկայացնում փոխադրումների անվտանգությանը ներկայացվող պահանջները,
- գ. ճիշտ է ներկայացնում ավտովարորդներին ներկայացվող պահանջները:

Գնահատման միջոցը

Սովորողին տրվում է 10 հարց՝ ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրումների անվտանգությանը ներկայացվող հիմնական պահանջների վերաբերյալ: Գնահատումը կատարվում է բանավոր:

- ա. ավտոտրանսպորտային միջոցների անվտանգությանը ներկայացվող պահանջներ,
- բ. փոխադրումների անվտանգությանը ներկայացվող պահանջներ,
- գ. ավտովարորդներին ներկայացվող պահանջներ:

Սովորողին տրվում են «Տրանսպորտի մասին», «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքները և պահանջվում է ճիշտ ներկայացնել ավտոտրանսպորտային միջոցների անվտանգությանը ներկայացվող պահանջները, փոխադրումների անվտանգությանը ներկայացվող պահանջները, ավտովարորդներին ներկայացվող պահանջները:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե սովորողը կարողանում է անսխալ պատասխանել առաջադրված հարցերի 80%-ին:

Աշխատանքի կատարումը ստուգելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացվում է դասախոսության և գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողներին տալ ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրումների անվտանգությանը ներկայացվող հիմնական պահանջների մասին գիտելիքներ:

Ուսուցման ընթացքում օգտագործվում է «Ճանապարհային երթևեկության կանոնները», «Ճանապարհային երթևեկության ապահովման մասին» ՀՀ օրենքը:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Դասախոսություն՝	2 ժամ
Սեմինար պարապմունքներ՝	1 ժամ

ՍՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ ԼՈՂԻՍՏԻԿԱՅԻ ՀԻՄՈՆՔՆԵՐ

Սողուլի դասիչը՝ ՓԿԿ 4-09-015

Սողուլի տևողությունը՝ 54 ժամ

Դասախոսություն՝ 36 ժամ

Գործնական պարապմունքներ՝ 18 ժամ

Սողուլի նպատակը՝

Սողուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել պատկերացում լոգիստիկայի, որպես գիտության մասին, տալ ընդհանուր գիտելիքներ և հմտություններ լոգիստիկայի նպատակների, խնդիրների ու սկզբունքների, լոգիստիկայի առարկայի, ֆունկցիաների ու մակարդակների, նաև լոգիստիկայի դերի մասին: Ավարտելով այս մոդուլը՝ ուսանողը կհմանա լոգիստիկայի զարգացման և ձևավորման հիմնական փուլերը, լոգիստիկայի հիմնական դրույթները և խնդիրները: Սովորողը կհմանա, թե ինչպիսի առարկաների հետ է առնչվում լոգիստիկան, ինչ է ներքին (պահեստների) եվ արտաքին (բեռնափոխադրումների) լոգիստիկան, առևտրային և լոգիստիկական ուղիները:

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

1. Պատկերացում կազմի լոգիստիկայի, որպես ժամանակակից գիտության մասին, կարողանա տարբերակել լոգիստիկայի առարկան, հիմնական ուսմունքները և դրույթները,
2. Իմանա լոգիստիկայի նպատակները, խնդիրները և սկզբունքները,
3. Իմանա լոգիստիկայի հիմնական գործառույթները և դերը տրանսպորտում,
4. Պատկերացում կազմի լոգիստիկայի ստեղծման նախապայմանների վերաբերյալ, իմանա լոգիստիկայի հիմնական դրույթները և խնդիրները, ինչպես նաև հարակից առարկաները,
5. Իմանա լոգիստիկայի կիրարման նպատակները, առևտրային և լոգիստիկական ուղիները, իմանա թե ինչ է ներքին (պահեստների) եվ արտաքին (բեռնափոխադրումների) լոգիստիկան:

Գնահատման կարգը՝

Սողուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների լիարժեք մակարդակի ապահովումն է:

Արդյունք 1. Կազմել պատկերացում լոգիստիկայից, որպես ժամանակակից գիտության մասին.

Կատարման չափանիշներ

- ա. ճիշտ է հասկանում և շարադրում «լոգիստիկա» հասկացությունը,
- բ. ճիշտ է ներկայացնում լոգիստիկայի հիմնական ուսմունքները և դրույթները,

Գնահատման միջոցը

Սովորողին լոգիստիկայի վերաբերյալ տրվում է 6 հարց: Գնահատումն իրականացվում է բանավոր:

- ա. լոգիստիկա առարկան, նրա դերը և նշանակությունը,
- բ. լոգիստիկայի հիմնական դրույթները:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե սովորողը կարողանում է ճիշտ հասկանալ և շարադրել «լոգիստիկա» հասկացության և լոգիստիկայի հիմնական դրույթներ վերաբերյալ ներկայացված հարցերից առնվազն 4-ին:

Աշխատանքի կատարումը ստուգելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացվում է դասախոսության, գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողներին տալ լոգիստիկայի մասին համապատասխան գիտելիքներ: Ուսուցման ընթացքում օգտագործվում է ուսումնական գրականություն բեռնատար և ուղևորատար փոխադրումների ու լոգիստիկայի վերաբերյալ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

- Դասախոսություն՝ 6 ժամ
- Գործնական պարապմունքներ՝ 4 ժամ

Արդյունք 2. Իմանալ լոգիստիկայի նպատակները, խնդիրները և սկզբունքները.

Կատարման չափանիշներ

- ա. ճիշտ է ներկայացնում լոգիստիկայի հիմնական նպատակը.
- բ. ճիշտ է նկարագրում լոգիստիկայի հիմնական խնդիրները.
- գ. ճիշտ է ներկայացնում լոգիստիկայի հիմնական սկզբունքները:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումը կատարվում է հարց ու պատասխանների, ինչպես նաև գործնական առաջադրանքների կատարման հիման վրա: Սովորողին տրվում են մի քանի հարցեր՝ լոգիստիկայի նպատակների և խնդիրների մասին:

- ա. լոգիստիկայի նպատակները,
- բ. լոգիստիկայի խնդիրները,
- գ. լոգիստիկայի հիմնական սկզբունքները:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե սովորողը կարողանում է ճիշտ պատասխանել առաջադրված հարցերի 60%-ին:

Աշխատանքի կատարումը ստուգելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացվում է դասախոսության, գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողներին տալ լոգիստիկայի նպատակների, խնդիրների և սկզբունքների մասին համապատասխան գիտելիքներ: Ուսուցման ընթացքում օգտագործվում է ուսումնական գրականություն և պատասխաններ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Դասախոսություն՝	8 ժամ
Գործնական պարապմունքներ՝	4 ժամ

Արդյունք 3. Իմանալ բեռնափոխադրումների լոգիստիկական գործառնությունները և լոգիստիկայի դերը տրանսպորտում:

Կատարման չափանիշներ

- ա. ճիշտ է ներկայացնում լոգիստիկական գործառնությունները,
- բ. ճիշտ է պատկերացնում լոգիստիկայի դերը տրանսպորտում:

Գնահատման միջոցը

Լոգիստիկական գործառնությունների մասին սովորողին տրվում է 6 հարց:

- ա. լոգիստիկական գործառնություններ,
- բ. լոգիստիկայի դերը տրանսպորտում,
- գ. պահեստներ:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե սովորողը կարողանում է ճիշտ պատասխանել առնվազն 4 հարցի:

Աշխատանքի կատարումը ստուգելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացվում է դասախոսության, գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողներին տալ բեռնափոխադրումների լոգիստիկական գործառնությունների մասին համապատասխան գիտելիքներ:

Ուսուցման ընթացքում օգտագործվում է ուսումնական գրականություն:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Դասախոսություն՝	8 ժամ
Գործնական պարապմունքներ՝	4 ժամ

Արդյունք 4. Կազմել պատկերացում լոգիստիկայի ստեղծման նախապայմանների վերաբերյալ, իմանալ լոգիստիկայի հիմնական դրույթները և խնդիրները , ինչպես նաև հարակից առարկաները:

Կատարման չափանիշներ

- ա. ճիշտ է պատկերացնում լոգիստիկայի ստեղծման և զարգացման նախապայմանները և տրամաբանությունը,
- բ. ճիշտ է պատկերացնում հիմնական դրույթները և խնդիրները,
- գ. ճիշտ է ներկայացնում լոգիստիկայի հարակից առարկաները:

Գնահատման միջոցը

Սովորողին տրվում է ուսումնական գրականություն և պահանջվում է ճիշտ պատկերացում կազմել լոգիստիկայի ստեղծման նախապայմանների, հիմնական դրույթների և խնդիրների, ինչպես նաև հարակից առարկաների մասին:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե սովորողը կարողանում է ճիշտ պատկերացնել լոգիստիկայի ստեղծման և զարգացման նախապայմանները, տրամաբանությունը, հիմնական դրույթներն ու խնդիրները:

Աշխատանքի կատարումը ստուգելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացվում է դասախոսության, գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողներին տալ լոգիստիկայի ստեղծման նախապայմանների, հիմնական դրույթների և խնդիրների, ինչպես նաև հարակից առարկաների մասին համապատասխան գիտելիքներ:

Ուսուցման ընթացքում օգտագործվում է ուսումնական գրականություն, պաստառներ, ֆիլմեր:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Դասախոսություն՝ 6 ժամ

Գործնական պարապմունքներ՝ 4 ժամ

Արդյունք 5. Իմանալ լոգիստիկայի կիրառման նպատակները, առևտրային և լոգիստիկական ուղիները, տարբերի ներքին (պահեստների) և արտաքին (բեռնափոխադրումների) լոգիստիկաները:

Կատարման չափանիշներ

ա. ճիշտ է պատկերացնում լոգիստիկայի կիրառման նպատակները,

բ. ճիշտ է ներկայացնում առևտրային և լոգիստիկական ուղիները,

գ. ճիշտ է ներկայացնում ներքին (պահեստների) լոգիստիկան,

դ. ճիշտ է ներկայացնում արտաքին (բեռնափոխադրումների) լոգիստիկան:

Գնահատման միջոցը

Սովորողին տրվում է ուսումնական գրականություն և պահանջվում է ճիշտ ներկայացնել լոգիստիկայի կիրառման նպատակները, առևտրային և լոգիստիկական ուղիները, ներքին և արտաքին լոգիստիկաները:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե սովորողը կարողանում է ճիշտ պատկերացնել լոգիստիկայի կիրառման նպատակները, ինչպես նաև ճիշտ ներկայացնել առևտրային և լոգիստիկական ուղիները, ներքին և արտաքին լոգիստիկան:

Աշխատանքի կատարումը ստուգելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացվում է դասախոսության, գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողներին տալ լոգիստիկայի կիրառման նպատակների, առևտրային և լոգիստիկական ուղիների, ներքին և արտաքին լոգիստիկայի մասին համապատասխան գիտելիքներ:

Ուսուցման ընթացքում օգտագործվում է ուսումնական գրականություն, ֆիլմեր, պաստառներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Դասախոսություն	8 ժամ
Գործնական պարապմունքներ	2 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ` ՃԱՆԱԿԱՐԿԱՅԻՆ ԵՐՔԵԿՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Մոդուլի դասիչը	ՓԿԿ 4-09-016
Մոդուլի տևողությունը	96 ժամ
Դասախոսություն	54 ժամ
Գործնական պարապմունքներ	42 ժամ

Մոդուլի նպատակը

Մոդուլը նպատակ ունի սովորողին տալ գիտելիքներ ճանապարհային երթևեկության կազմակերպման ու անվտանգության վերաբերյալ: Մոդուլում կուսումնասիրվեն ճանապարհային երթևեկության հատկանիշները (արագությունը և վտանգը) և տեխնիկական միջոցները (ճանապարհային նշաններ և գծանշում, լուսաֆորներ, անվտանգության կոդակներ և այլն), տրանսպորտային ու հետիոտնային հոսքերի հիմնական բնութագրերը և դրանց հետազոտման եղանակները, կոնֆլիկտային կետերի վերլուծությունը, երթևեկության կազմակերպման մեթոդները (միակողմանի երթևեկություն, շրջանաձև երթևեկություն, տրանսպորտային հոսքի կազմի հավասարեցում ու արագության ռեժիմի օպտիմալացում և այլն): Մոդուլում կուսումնասիրվեն նաև ճանապարհատրանսպորտային պատահարների (ՃՏՊ) հաշվառման ու վերլուծության ձևերը, վարորդի հոգեբանաֆիզիոլոգիական հատկանիշները, ավտոմոբիլի (ավտոմեքենայի) կառուցվածքային անվտանգության ակտիվ, պասիվ, հետվթարային ու էկոլոգիական տեսակները և այլն:

Մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է կարողանա ճանապարհային ցանցում (կամ ցանցի տվյալ տեղամասում) վերլուծել ճանապարհային երթևեկության կազմակերպման վիճակը և երթևեկության անվտանգության բարձրացման նպատակով` բարելավել այն:

Մուտքային պահանջները

Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է ուսումնասիրած լինի ՓԿԿ 04-09-009, ՓԿԿ 04-09-012 և ՓԿԿ 04-09-014 մոդուլները:

Արդյունքները

Մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է.

1. Իմանա կոնֆլիկտային կետերի դասակարգումը, ճանապարհային նշաններն ու գծանշումները և ճանապարհային երթևեկության կազմակերպման մնացած տեխնիկական միջոցները,
2. Իմանա ճանապարհային երթևեկության կազմակերպման մեթոդական սկզբունքները և կազմակերպման սխեմաների առանձնահատկությունները,
3. Իմանա ՃՏՊ դասակարգումը և վերլուծության եղանակները,
4. Կարողանա որոշել խաչմերուկի բարդության աստիճանը և տրանսպորտային հոսքի ուշացումը (հապաղումը) խաչմերուկում,
5. Կիրառի ճանապարհային երթևեկության կազմակերպման սխեմաները:

Գնահատման կարգը

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների լիարժեք ապահովումն է:

Արդյունք 1. Իմանա կոնֆլիկտային կետերի դասակարգումը, ճանապարհային նշաններն ու գծանշումները և ճանապարհային երթևեկության կազմակերպման մնացած տեխնիկական միջոցները:

Կատարման չափանիշներ

- ա. ճիշտ է տարբերակում կոնֆլիկտային կետերը,
- բ. ճիշտ է ներկայացնում ճանապարհային նշաններն ու գծանշումներն ըստ դրանց խմբերի,
- գ. ճիշտ մեկնաբանում տրանսպորտային լուսաֆորների ազդանշանները:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումը կատարվում է բանավոր, հաշվի առնելով գործնական պարապմունքների ժամանակ սովորողի ցուցաբերած գիտելիքները: Սովորողին տրվում է կոնֆլիկտային կետերի դասակարգման, ճանապարհային երթևեկության կազմակերպման տեխնիկական միջոցների մասին 8 հարց:

- ա. կոնֆլիկտային կետեր,
- բ. կոնֆլիկտային իրավիճակներ,
- գ. ճանապարհային նշաններ, դրանց դասակարգումը,
- դ. հորիզոնական գծանշում,
- ե. ուղղաձիգ գծանշում,
- զ. լուսաֆորներ:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե սովորողը կարողանում է անսխալ պատասխանել առնվազն 6 հարցի:

Աշխատանքի կատարումը ստուգելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացվում է դասախոսության և գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողներին տալ կոնֆլիկտային կետերի դասակարգման, կոնֆլիկտային իրավիճակների և կոնֆլիկտային կետերի վերլուծության, ինչպես նաև ճանապարհային երթևեկության կազմակերպման տեխնիկական միջոցների մասին համապատասխան գիտելիքներ:

Ուսուցման ընթացքում օգտագործվում է ուսումնական գրականություն, ճանապարհների և փոխհատումների սխեմաներ, լուսաֆորների, գծանշումների, ճանապարհային նշանների լուսանկարներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

- Դասախոսություն՝ 12 ժամ
- Գործնական պարապմունքներ՝ 8 ժամ

Արդյունք 2. Իմանա ճանապարհային երթևեկության կազմակերպման մեթոդական սկզբունքները և կազմակերպման սխեմաների առանձնահատկությունները:

Կատարման չափանիշներ

ա. ճիշտ է մեկնաբանում կոնֆլիկտային կետերի քանակի ու վտանգավորության աստիճանի նվազեցման եղանակները

բ. ճիշտ է ներկայացնում «Միակողմանի երթևեկություն» և «Շրջանաձև երթևեկություն» սխեմաների առավելություններն ու թերությունները,

գ. ճիշտ է ներկայացնում տրանսպորտային հոսքի կազմի հավասարեցման և արագության ռեժիմի օպտիմալացման առանձնահատկությունները:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումը կատարվում է գրավոր՝ հարցաշարի միջոցով: Ընդ որում հաշվի են առնվում նաև գործնական պարապմունքներում սովորողի ցուցաբերած գիտելիքները: Սովորողին ածաշարվում է 4 հարց:

ա. միակողմանի երթևեկություն

բ. շրջանաձև երթևեկություն,

գ. տրանսպորտային հոսքի կազմի հավասարեցում,

դ. արագության ռեժիմի օպտիմալացում,

ե. երթևեկությունը խաչմերուկներում,

զ. երթևեկության կազմակերպումը ձմեռային պայմաններում:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե սովորողը կարողանում է անսխալ պատասխանել առնվազն 3 հարցի:

Աշխատանքի կատարումը ստուգելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացվում է դասախոսության և գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողներին տալ կոնֆլիկտային կետերի վտանգավորության աստիճանի նվազեցման, երթևեկության կազմակերպման տարբեր սխեմաների և մեթոդական սկզբունքների մասին համապատասխան գիտելիքներ:

Ուսուցման ընթացքում օգտագործվում է ուսումնական գրականություն, ճանապարհների և փոխհատումների սխեմաներ, լուսաֆորների, գծանշումների, ճանապարհային նշանների լուսանկարներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Դասախոսություն՝ 10 ժամ

Գործնական պարապմունքներ՝ 8 ժամ

Արդյունք 3. Իմանա ճՏՊ դասակարգումը և վերլուծության եղանակները:

Կատարման չափանիշներ

ա. ճիշտ է ներկայացնում բախում, շրջում, վրաերթ և այլ ճՏՊ-ները,

բ. ճիշտ է ներկայացնում ճՏՊ վերլուծության քանակական ու որակական ցուցանիշները և վերլուծության քարտեզագրական եղանակը:

Գնահատման միջոցը

Սովորողին տրվում է 6 հարց՝ ճՏՊ դասակարգման և վերլուծության եղանակների վերաբերյալ: Գնահատումը կատարվում է գրավոր:

ա. ճՏՊ հասկացությունը,

- բ. ՃՏՊ դասակարգումը,
- գ. ՃՏՊ վերլուծության քանակական ցուցանիշներ,
- դ. ՃՏՊ որակական վերլուծություն,
- ե. ՃՏՊ քարտեզագրական վերլուծություն:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե սովորողը առաջադրված հարցերից պատասխանում է առնվազն 4-ին:

Աշխատանքի կատարումը ստուգելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացվում է դասախոսության և գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողներին տալ ՃՏՊ դասակարգման և վերլուծության եղանակների մասին համապատասխան գիտելիքներ:

Ուսուցման ընթացքում օգտագործվում է ուսումնական գրականություն, ճանապարհների և փոխհատումների սխեմաներ, ՃՏՊ սխեմաներ ու պատասխաններ, ՃՏՊ մասին անհրաժեշտ տեղեկատվություն:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Դասախոսություն՝	10 ժամ
Գործնական պարապմունքներ՝	8 ժամ

Արդյունք 4. Կարողանա որոշել խաչմերուկի բարդության աստիճանը և տրանսպորտային հոսքի ուղացումը (հապաղումը) խաչմերուկում:

Կատարման չափանիշներ

ա. ճիշտ է որոշում խաչմերուկում ձևավորվող շեղում, միահյուսում, հատում կոնֆլիկտների քանակը,

բ. ճիշտ է որոշում խաչմերուկի բարդության աստիճանը:

Գնահատման միջոցը

Սովորողին տրվում են մի քանի հարցեր՝ տրանսպորտային հոսքերի ուղացումների ու խաչմերուկի բարդության աստիճանի որոշման վերաբերյալ: Գնահատումը կատարվում է գրավոր:

- ա. խաչմերուկի բարդության աստիճանի որոշումը 10 բալանոց համակարգով,
- բ. տրանսպորտային հոսքերի ուղացումները կարգավորվող խաչմերուկներում,
- գ. տրանսպորտային հոսքերի ուղացումները չկարգավորվող խաչմերուկներում,
- դ. շեղում, միահյուսում, հատում, բախում տարբեր աստիճանների տակ, կոնֆլիկտների բալերը:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե սովորողը կարողանում է ճիշտ պատասխանել առաջադրված հարցերի 70%-ին:

Աշխատանքի կատարումը ստուգելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացվում է դասախոսության և գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողներին տալ խաչմերուկի բարդության աստիճանի և տրանսպորտային հոսքի ուղացումների որոշման մեթոդների մասին համապատասխան գիտելիքներ:

Ուսուցման ընթացքում օգտագործվում է ուսումնական գրականություն, ճանապարհների և փոխհատումների սխեմաներ, տրանսպորտային հոսքերի ինտենսիվությունները՝ ըստ առանձին երթևեկելի գոտիների:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

- Դասախոսություն՝ 12 ժամ
- Գործնական պարապմունքներ՝ 8 ժամ

Արդյունք 5. Կիրառի ճանապարհային երթևեկության կազմակերպման սխեմաները:

Կատարման չափանիշներ

ա. կարողանում է ճիշտ ընտրել երթևեկության կազմակերպման տեխնիկական միջոցները ճանապարհափողոցային ցանցի տվյալ տեղամասում,

բ. կարողանում է տրված տեղամասում կիրառել երթևեկության կազմակերպման անհրաժեշտ սխեման:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումը կատարվում է բանավոր՝ հաշվի առնելով նաև գործնական առաջադրանքների կատարումը:

- ա. ճանապարհափողոցային ցանց,
- բ. միակողմանի երթևեկության առավելությունները և թերությունները,
- գ. շրջանաձև երթևեկությունը որպես միակողմանի երթևեկության մասնավոր դեպք:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե սովորողը կարողանում է ճանապարհափողոցային ցանցի տվյալ տեղամասում ճիշտ ընտրել երթևեկության կազմակերպման տեխնիկական միջոցները և կիրառել երթևեկության կազմակերպման անհրաժեշտ սխեման:

Աշխատանքի կատարումը ստուգելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացվում է դասախոսության և գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողներին տալ ճանապարհային երթևեկության կազմակերպման սխեմաների ու մեթոդների մասին համապատասխան գիտելիքներ:

Ուսուցման ընթացքում օգտագործվում է ուսումնական գրականություն, ճանապարհների և փոխհատումների սխեմաներ, տրանսպորտային հոսքերի ինտենսիվությունները՝ ըստ առանձին երթևեկելի գոտիների:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

- Դասախոսություն՝ 10 ժամ
- Գործնական պարապմունքներ՝ 10 ժամ

ՄՈՂՈՒԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ ԲԵՌՆԱՏԱՐ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐ

Մոդուլի դասիչը՝	ՓԿԿ 4-09-017
Մոդուլի տևողությունը՝	132 ժամ
Դասախոսություն՝	72 ժամ
Գործնական պարապմունքներ՝	60 ժամ

Մոդուլի նպատակը

Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ բեռնատար ավտոմոբիլային փոխադրումների տեխնոլոգիայի, կազմակերպման ու կառավարման վերաբերյալ: Այս մոդուլում կուսումնասիրվեն այնպիսի հարցեր, որոնք կապված են ավտոտրանսպորտային ծառայությունների շուկայի, ավտոտրանսպորտի, որպես առանձին ճյուղի կառավարման ժամանակակից կառուցվածքի, փոխադրումների իրավական հիմունքների, բեռների դասակարգման, փաթեթավորման ու մակնիշավորման, բեռնատար ավտոտրանսպորտային միջոցների դասակարգման, բեռնատար ավտոմոբիլի և ավտոպարկի աշխատանքի հիմնական ցուցանիշների հաշվարկի, փոխադրումների կազմակերպման (երթուղիների տեսակներ, դրանց հաշվարկը, բեռնարկղային, փաթեթային և այլ փոխադրումներ), բեռնման-բեռնաթափման աշխատանքների, առանձին ճյուղերի բեռների փոխադրումների կազմակերպման, միջպետական փոխադրումների առանձնահատկությունների հետ և այլն:

Մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է կարողանա ընտրել փոխադրվող բեռին համապատասխան տրանսպորտային միջոց (շարժակազմ) և ռացիոնալ երթուղի, կազմակերպել փոխադրումը և կառավարել այն:

Մուտքային պահանջները

Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է ուսումնասիրած լինի ՓԿԿ 04-09-009, ՓԿԿ 04-09-010, ՓԿԿ 04-09-011, ՓԿԿ 04-09-014 և ՓԿԿ 04-09-016 մոդուլները:

Արդյունքները

Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է.

1. Իմանա բեռնատար ավտոմոբիլային փոխադրումների կազմակերպման և կառավարման հիմունքները, նպատակները, առարկան, օբյեկտը, տերմինաբանությունը,
2. Իմանա տեխնիկաշահագործական գործոնները և դրանց ուղղակի ու անուղղակի ազդեցությունները,
3. Կարողանա ընդունել որոշումներ բեռների տեսակների վերաբերյալ,
4. Կարողանա վերլուծել բեռնահոսքերը և դրանց մասին տեղեկատվությունը,
5. Կազմակերպի բեռնատար ավտոմոբիլային փոխադրումներ:

Գնահատման կարգը

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների լիարժեք ապահովումն է:

Արդյունք 1. Իմանա բեռնատար ավտոմոբիլային փոխադրումների կազմակերպման և կառավարման հիմունքները, նպատակները, առարկան, օբյեկտը, տերմինաբանությունը:

Կատարման չափանիշներ

ա. Ճիշտ է ներկայացնում բեռնատար ավտոմոբիլային փոխադրումների անհրաժեշտությունը

օբյեկտը,

բ. ճիշտ է օգտագործում բեռնատար ավտոմոբիլային փոխադրումներում կիրառվող տերմինները,

գ. կարողանում է դասակարգել շարժակազմը և երթուղիները:

Գնահատման միջոցը

Գնահատումը կատարվում է բանավոր՝ հարց ու պատասխանի միջոցով: Գնահատման ժամանակ հաշվի է առնվում նաև սովորողի գործնական պարապմունքներում դրսևորած գիտելիքները: Հարցերի քանակը կարող է լինել 6-10:

ա. բեռնատար ավտոմոբիլային փոխադրումների դերը տնտեսության համար,

բ. բեռնատար ավտոմոբիլային փոխադրումներում կիրառվող հիմնական տերմինները,

գ. բեռնահոսքերի բաշխում՝ տրանսպորտի տեսակների միջև:

Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե սովորողը կարողանում է ճիշտ պատասխանել առաջադրված հարցերի առնվազն 80%-ին:

Աշխատանքի կատարումը ստուգելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացվում է դասախոսության և գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողներին տալ բեռնատար ավտոմոբիլային փոխադրումների կազմակերպման և կառավարման հիմունքների, նպատակների, առարկայի, օբյեկտի, տերմինաբանության վերաբերյալ անհրաժեշտ գիտելիքներ:

Ուսուցման ընթացքում օգտագործվում է ուսումնական գրականություն, «Տրանսպորտի մասին», «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներ և Տրանսպորտի և կապի նախարարության նորմատիվային փաստաթղթեր, ինչպես նաև ՀՀ կառավարության 2007 թվականի օգոստոսի 30-ի «Հայաստանի Հանրապետության տարածքից ավտոմոբիլային տրանսպորտով բեռների միջպետական փոխադրումների իրականացման կարգը հաստատելու մասին» 1226-Ն որոշում:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Դասախոսություն՝ 12 ժամ

Գործնական պարապմունքներ՝ 12 ժամ

Արդյունք 2. Իմանա տեխնիկաշահագործական գործոնները և դրանց ուղղակի ու անուղղակի ազդեցությունները:

Կատարման չափանիշներ

ա. ճիշտ է ներկայացնում տեխնիկաշահագործական գործոնները,

բ. ճիշտ է առանձնացնում այն գործոնները, որոնք ուղղակի ազդեցություն ունեն շարժակազմի աշխատանքի արտադրողականության վրա:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումը կատարվում է բանավոր՝ հարց ու պատասխանի միջոցով: Գնահատման ժամանակ հաշվի է առնվում նաև սովորողի գործնական պարապմունքներում դրսևորած գիտելիքները: Սովորողին տրվում է 10 հարց:

ա. շարժակազմի տեխնիկաշահագործական գործոնները,

- բ. շարժակազմի տեխնիկաշահագործական ցուցանիշները,
- գ. շարժակազմի տեխնիկատնտեսական ցուցանիշներ,
- դ. շարժակազմի աշխատանքի արտադրողականություն:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե սովորողը կարողանում է ճիշտ ներկայացնել ու անսխալ մեկնաբանել շարժակազմի աշխատանքի արտադրողականության վրա ուղղակի ազդեցություն ունեցող գործոնները և անսխալ պատասխանել առաջադրված հարցերից առնվազն 7-ին:

Աշխատանքի կատարումը ստուգելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացվում է դասախոսության և գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողներին տալ տեխնիկաշահագործական գործոնների և շարժակազմի արտադրողականության վրա դրանց ուղղակի ու անուղղակի ազդեցությունների վերաբերյալ անհրաժեշտ գիտելիքներ:

Ուսուցման ընթացքում օգտագործվում է ուսումնական գրականություն:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

- Դասախոսություն՝ 12 ժամ
- Գործնական պարապմունքներ՝ 12 ժամ

Արդյունք 3. Կարողանա ընդունել որոշումներ բեռների տեսակների վերաբերյալ.

Կատարման չափանիշներ

- ա. ճիշտ է ընդունում որոշումներ բեռների տեսակների, փաթեթավորման և այլնի վերաբերյալ,
- բ. ճիշտ է դնում նպատակները և ընտրում միջոցներ բեռնափոխադրումների համար:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումը կատարվում է բանավոր՝ հարց ու պատասխանի միջոցով: Գնահատման ժամանակ հաշվի է առնվում նաև սովորողի գործնական պարապմունքներում դրսևորած գիտելիքները: Սովորողին տրվում է 8 հարց:

- ա. բեռներ, դրանց դասակարգումը, մակնիշավորումը,
- բ. փաթեթ, տակդիր, տարա,
- գ. շարժակազմի տեսակները:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե սովորողը կարողանում է անսխալ որոշել բեռների տեսակները, փաթեթավորումը, ճիշտ ընտրել շարժակազմի տեսակը և ճիշտ պատասխանել առնվազն 6 հարցի:

Աշխատանքի կատարումը ստուգելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացվում է դասախոսության և գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողներին տալ բեռների տեսակների, դրանց փաթեթավորման և շարժակազմի տեսակների վերաբերյալ անհրաժեշտ գիտելիքներ:

Ուսուցման ընթացքում օգտագործվում է ուսումնական գրականություն և բեռների ու փաթեթավորման տեսակների անվանացանկ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Դասախոսություն՝ 12 ժամ

Գործնական պարապմունքներ՝ 12 ժամ

Արդյունք 4. Կարողանա վերլուծել բեռնահոսքերը և դրանց մասին տեղեկատվությունը.

Կատարման չափանիշներ

- ա. ճիշտ է հավաքագրում ներքին և արտաքին տեղեկատվությունները,
- բ. ճիշտ է վերլուծում հավաքագրված տեղեկատվությունը,
- գ. ճիշտ է ընդունում որոշումները՝ ելնելով կատարված արդյունքներից:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումը կատարվում է գրավոր հարցաշարի միջոցով: Գնահատման ժամանակ հաշվի է առնվում նաև սովորողի գործնական պարապմունքներում դրսևորած գիտելիքները: Հարցաշարն ընդգրկում է 8 հարց:

- ա. բեռնահոսք, բեռնաշրջանառություն,
- բ. բեռնահոսքերի ներկայացման աղյուսակային ձևերը,
- գ. բեռնահոսքերի և բեռնաշրջանառությունների էպյուրներ:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե սովորողը կարողանում է ճիշտ պատասխանել առնվազն 6 հարցի:

Աշխատանքի կատարումը ստուգելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացվում է դասախոսության, գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողներին տալ բեռնահոսքերի մասին անհրաժեշտ գիտելիքներ:

Ուսուցման ընթացքում օգտագործվում է ուսումնական գրականություն և բեռնահոսքերի էպյուրներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Դասախոսություն՝ 16 ժամ

Գործնական պարապմունքներ՝ 12 ժամ

Արդյունք 5. Կազմակերպի բեռնատար ավտոմոբիլային փոխադրումներ:

Կատարման չափանիշներ

- ա. ճիշտ է գնահատում փոխադրման ներկայացված բեռների և առկա շարժակազմի առանձնահատկությունները և համապատասխանությունը,
- բ. ճիշտ է ընտրում երթուղին և որոշում շարժակազմի աշխատանքի ցուցանիշները,
- գ. ճիշտ է կիրառում վարորդների աշխատանքի ռեժիմները,
- դ. ճիշտ է կիրառում փոխադրումների կազմակերպման ու կառավարման մեթոդները:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումը կատարվում է բանավոր: Գնահատման ժամանակ հաշվի է առնվում նաև սովորողի գործնական պարապմունքներում դրսևորած գիտելիքները: Սովորողին տրվում է 8 հարց:

- ա. երթուղիներ, դրանց դասակարգումը,
- բ. երթուղիների հաշվարկ,

- գ. շարժակազմի շահագործման պայմաններ,
- դ. բեռի և շարժակազմի համապատասխանություն:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե սովորողը կարողանում է ճիշտ պատասխանել առնվազն 6 հարցի:

Աշխատանքի կատարումը ստուգելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացվում է դասախոսության և գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողներին տալ բեռնատար ավտոմոբիլային փոխադրումների կազմակերպման մասին անհրաժեշտ գիտելիքներ:

Ուսուցման ընթացքում օգտագործվում է ուսումնական գրականություն, բեռնահոսքերի էպյուրներ, երթուղային ցանցի սխեմա, բեռների անվանացանկ, շարժակազմի մակնիշներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Դասախոսություն՝	20 ժամ
Գործնական պարապմունքներ՝	12 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ ՈւՂԵՎՈՐԱՏԱՐ ԱԿՏՈՍՈՔԻԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐ

Մոդուլի դասիչը՝	ՓԿԿ -4-09-018
Մոդուլի տևողությունը՝	132 ժամ
Դասախոսություն	72 ժամ
Գործնական պարապմունքներ՝	60 ժամ

Մոդուլի նպատակը

Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ ուղևորատար ավտոմոբիլային փոխադրումների տեխնոլոգիայի, կազմակերպման ու կառավարման վերաբերյալ: Այս մոդուլում կուսումնասիրվեն այնպիսի հարցեր, որոնք կապված են ավտոտրանսպորտային ծառայությունների շուկայի, ավտոտրանսպորտի, որպես առանձին ճյուղի կառավարման ժամանակակից կառուցվածքի, փոխադրումների իրավական հիմունքների, ուղևորատար ավտոտրանսպորտային միջոցների դասակարգման, տաքսու, միկրոավտոբուսի և ավտոբուսի ու ավտոպարկի աշխատանքի հիմնական ցուցանիշների հաշվարկի, փոխադրումների կազմակերպման քաղաքային, մերձքաղաքային, միջքաղաքային և միջպետական ուղևորատար փոխադրումների առանձնահատկությունների հետ և այլն:

Մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է կարողանա ըստ ուղևորահոսքի ընտրել համապատասխան տրանսպորտային միջոց (շարժակազմ), կազմակերպել փոխադրումը և կառավարել այն:

Մուտքային պահանջներ

Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է ուսումնասիրած լինի ՓԿԿ ՓԿԿ 04-09-009, ՓԿԿ 04-09-010, ՓԿԿ 04-09-012, ՓԿԿ 04-09-014 և ՓԿԿ 04-09-016 մոդուլները:

Արդյունքները

Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է.

1. Իմանա ուղևորատար ավտոմոբիլային փոխադրումների կազմակերպման և կառավարման հիմունքները, նպատակները, առարկան, օբյեկտը, տերմինաբանությունը, երթուղիների և շարժակազմի դասակարգումը,
2. Իմանա տարբեր տեսակի փոխադրումների առանձնահատկությունները,
3. Կարողանա ընտրել ուղևորահոսքին համապատասխանող տրանսպորտային միջոց (շարժակազմ),
4. Կարողանա հաշվարկել շարժակազմի և պարկի աշխատանքի հիմնական ցուցանիշները,
5. Կիրառի վարորդների աշխատանքի կազմակերպման մեթոդները,
6. Կիրառի փոխադրումների կազմակերպման և կառավարման մեթոդներ:

Գնահատման կարգը

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների լիարժեք ապահովումն է:

Արդյունք 1. Իմանա ուղևորատար ավտոմոբիլային փոխադրումների կազմակերպման և կառավարման հիմունքները, նպատակները, առարկան, օբյեկտը, տերմինաբանությունը, երթուղիների և շարժակազմի դասակարգումը:

Կատարման չափանիշներ

- ա. ճիշտ է ներկայացնում ուղևորատար ավտոմոբիլային փոխադրումների անհրաժեշտությունը, օբյեկտը
- բ. ճիշտ է օգտագործում ուղևորատար ավտոմոբիլային փոխադրումներում կիրառվող տերմինները,
- գ. կարողանում է դասակարգել երթուղիները և շարժակազմը:

Գնահատման միջոցը

Գնահատումը կատարվում է բանավոր` հարց ու պատասխանի միջոցով: Գնահատման ժամանակ հաշվի է առնվում նաև սովորողի գործնական պարապմունքներում դրսևորած գիտելիքները: Հարցերի քանակը կարող է լինել 6-10:

- ա. ուղևորատար ավտոմոբիլային փոխադրումների դերը տնտեսության համար
- բ. ուղևորատար ավտոմոբիլային փոխադրումներում կիրառվող տերմինները
- գ. երթուղիներ, դրանց դասակարգումը
- դ. ուղևորատար ավտոտրանսպորտային միջոցների դասակարգումը

Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե սովորողը կարողանում է ճիշտ պատասխանել առաջադրված հարցերի առնվազն 80%-ին: Սովորողին տրվում է 6-10 հարց:

Աշխատանքի կատարումը ստուգելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացվում է դասախոսության և գործնական պարապմունքների միջոցով` նպատակ ունենալով սովորողներին տալ ուղևորատար ավտոմոբիլային փոխադրումների կազմակերպման և կառավարման հիմունքների, նպատակների, առարկայի, օբյեկտի, տերմինաբանության վերաբերյալ անհրաժեշտ գիտելիքներ:

Ուսուցման ընթացքում օգտագործվում է ուսումնական գրականություն, «Տրանսպորտի մասին», «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներ և Տրանսպորտի և կապի նախարարության նորմատիվային փաստաթղթեր, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության տարածքից ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների և ուղեբեռների միջպետական փոխադրումների իրականացման կարգը հաստատելու մասին» 1587-Ն որոշումը:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Դասախոսություն՝	12 ժամ
Գործնական պարապմունքներ՝	6 ժամ

Արդյունք 2. Իմանա տարբեր տեսակի փոխադրումների առանձնահատկությունները.

Կատարման չափանիշներ

- ա. ճիշտ է դասակարգում փոխադրումներն ըստ տեսակների,
- բ. ճիշտ է ներկայացնում տարբեր փոխադրումների առանձնահատկությունները:

Գնահատման միջոցը

Գնահատումը կատարվում է բանավոր՝ հարց ու պատասխանի միջոցով: Գնահատման ժամանակ հաշվի է առնվում նաև սովորողի գործնական պարապմունքներում դրսևորած գիտելիքները: Սովորողին տրվում է 6 հարց:

- ա. քաղաքային ուղևորատար փոխադրումներ,
- բ. մերձքաղաքային ուղևորատար փոխադրումներ,
- գ. միջպետական և միջքաղաքային ուղևորատար փոխադրումներ:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե սովորողը կարողանում է ճիշտ պատասխանել առնվազն 4 հարցի:

Աշխատանքի կատարումը ստուգելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացվում է դասախոսության և գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողներին տալ փոխադրումների առանձնահատկությունների ու երթուղիների տեսակների վերաբերյալ անհրաժեշտ գիտելիքներ:

Ուսուցման ընթացքում օգտագործվում է ուսումնական գրականություն, երթուղիների սխեմաներ՝ նշելով դրանց երկարությունները:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Դասախոսություն՝	12 ժամ
Գործնական պարապմունքներ՝	6 ժամ

Արդյունք 3 Կարողանա ընտրել ուղևորահոսքին համապատասխանող տրանսպորտային միջոց (շարժակազմ):

Կատարման չափանիշներ

- ա. ճիշտ է հավաքագրում ներքին և արտաքին տեղեկատվությունները,
- բ. ճիշտ է վերլուծում հավաքագրված տեղեկատվությունը,
- գ. ճիշտ է ընդունում որոշումները՝ ելնելով կատարված արդյունքներից,
- դ. ճիշտ է ընդունում որոշումներ փոխադրումների տեսակների վերաբերյալ:

Գնահատման միջոցը

Գնահատումը կատարվում է բանավոր՝ հարց ու պատասխանի միջոցով: Գնահատման ժամանակ հաշվի է առնվում նաև սովորողի գործնական պարապմունքներում դրսևորած գիտելիքները: Սովորողին տրվում է 6 հարց:

- ա. ուղևորահոսքեր, դրանց վերլուծությունը,
- բ. ուղևորատար փոխադրումներում օգտագործվող շարժակազմին ներկայացվող պահանջները:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե սովորողը կարողանում է ճիշտ պատասխանում առնվազն 4 հարցի:

Աշխատանքի կատարումը ստուգելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացվում է դասախոսության և գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողներին տալ ուղևորահոսքերի մասին անհրաժեշտ գիտելիքներ:

Ուսուցման ընթացքում օգտագործվում է ուսումնական գրականություն և ուղևորահոսքերի վերաբերյալ տեղեկություններ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

- Դասախոսություն՝ 12 ժամ
- Գործնական պարապմունքներ՝ 12 ժամ

Արդյունք 4 Կարողանա հաշվարկել շարժակազմի և պարկի աշխատանքի հիմնական ցուցանիշները:

Կատարման չափանիշներ

- ա. ճիշտ է ներկայացնում պտույտի տևողություն, ուղևորափոխման գործակից և այլ հասկացություններ,
- բ. կարողանում է ճիշտ հաշվարկել շարժակազմի և պարկի աշխատանքի հիմնական ցուցանիշները:

Գնահատման միջոցը

Գնահատումը կատարվում է գրավոր հարցաշարի միջոցով: Գնահատման ժամանակ հաշվի է առնվում նաև սովորողի գործնական պարապմունքներում դրսևորած գիտելիքները: Սովորողին տրվում է 6 հարց:

- ա. շարժակազմի աշխատանքի հիմնական ցուցանիշները,
- բ. պարկի աշխատանքի հիմնական ցուցանիշները:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե սովորողը կարողանում է անսխալ պատասխանել առնվազն 4 հարցի:

Աշխատանքի կատարումը ստուգելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացվում է դասախոսության և գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողներին տալ շարժակազմի և պարկի աշխատանքի հիմնական ցուցանիշների վերաբերյալ անհրաժեշտ գիտելիքներ:

Ուսուցման ընթացքում օգտագործվում է ուսումնական գրականություն, շարժակազմի աշխատանքի հաշվարկի ելակետային տվյալներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Դասախոսություն 12 ժամ

Գործնական պարապմունքներ՝ 12 ժամ

Արդյունք 5 Կիրառի վարորդների աշխատանքի կազմակերպման մեթոդները:

Կատարման չափանիշներ

ա. ճիշտ է ներկայացնում վարորդների աշխատանքի ռեժիմները,

բ. կարողանում է կազմակերպել վարորդների աշխատանքի ռեժիմները:

Գնահատման միջոցը

Գնահատումը կատարվում է բանավոր: Սովորողին տրվում է 6 հարց:

ա. վարորդներին ներկայացվող պահանջներ,

բ. վարորդների աշխատանքի ռեժիմներ,

գ. ռեժիմների կազմակերպման սկզբունքները:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե սովորողը անսխալ պատասխանում է 4 հարցի:

Աշխատանքի կատարումը ստուգելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացվում է դասախոսության և գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողներին տալ վարորդների աշխատանքի կազմակերպման մեթոդների մասին համապատասխան գիտելիքներ:

Ուսուցման ընթացքում օգտագործվում է ուսումնական գրականություն, աշխատանքի ռեժիմների վերաբերյալ ժամանակացույցեր, հերթափոխերի քանակ ու կարգադրային ժամանակ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Դասախոսություն 12 ժամ

Գործնական պարապմունքներ՝ 12 ժամ

Արդյունք 6 Կիրառի փոխադրումների կազմակերպման և կառավարման մեթոդները:

Կատարման չափանիշներ

ա. ճիշտ է գնահատում ուղևորահոսքերը և առկա շարժակազմի առանձնահատկություններն ու համապատասխանությունն ուղևորահոսքերին,

բ. ճիշտ է ընտրում երթուղին,

գ. կարողանում է ճիշտ դնել նպատակները և ընտրել միջոցներ՝ փոխադրումների

կազմակերպման համար:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումը կատարվում է բանավոր: Գնահատման ժամանակ հաշվի է առնվում նաև սովորողի գործնական պարապմունքներում դրսևորած գիտելիքները: Սովորողին տրվում է 8 հարց:

ա) Սովորական, ձեպընթաց, կոմբինացված երթուղիներ

բ) Երթուղիների առանձնահատկությունները

զ) Շարժակազմի ընտրության սկզբունքները

Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե սովորողը կարողանում է ճիշտ պատասխանել առնվազն 5 հարցի:

Աշխատանքի կատարումը ստուգելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացվում է դասախոսության և գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողներին տալ ուղևորատար ավտոմոբիլային փոխադրումների կազմակերպման ու կառավարման մեթոդների մասին անհրաժեշտ գիտելիքներ:

Ուսուցման ընթացքում օգտագործվում է ուսումնական գրականություն, ուղևորահոսքեր, երթուղային ցանցի սխեմա, շարժակազմի մակնիշներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Դասախոսություն՝	12 ժամ
Գործնական պարապմունքներ՝	12 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Մոդուլի դասիչը՝ ՓԿԿ 4-09-019

Մոդուլի տևողությունը՝ 60 ժամ

Դասախոսություն՝ 36 ժամ

Գործնական պարապմունքներ՝ 24 ժամ

Մոդուլի նպատակը՝

Մոդուլը նպատակ է հետապնդում ուսանողի մոտ ձևավորել միջպետական ուղևորափոխադրումների և բեռնափոխադրումների կազմակերպման և իրականացման գործընթացի հիմնական սկզբունքները: Ավարտելով այս մոդուլը՝ ուսանողը կկարողանա արդյունավետ կազմակերպել Հայաստանի Հանրապետության տարածքից, ինչպես նաև դեպի Հայաստանի Հանրապետություն սահմանված չվացուցակով միջպետական կանոնավոր ուղևորափոխադրումներ, ինչպես նաև միջպետական ոչ կանոնավոր (տուրիստական) ուղևորափոխադրումներ: Ուսանողը կկարողանա արդյունավետ ընտրել բեռի փոխադրման երթուղին, բեռի դասին համապատասխան տրանսպորտային միջոցը, ինչպես նաև մաքսային մարմիններում բեռի ձևակերպում և պատվիրատուին հանձնում:

Մուտքային պահանջները՝

Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է անցած լինի ՓԿԿ 04-09-007, ՓԿԿ 04-09-008, ՓԿԿ 04-09-009, ՓԿԿ 04-09-010, ՓԿԿ 04-09-012, ՓԿԿ 04-09-013, ՓԿԿ 04-09-014, ՓԿԿ 04-09-016, ՓԿԿ 04-09-017 և ՓԿԿ 04-09-018 մոդուլները:

Արդյունքները՝

Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է.

1. Կարողանա համապատասխան տրանսպորտային միջոցները բաց թողնել երթուղի,

2. Կարողանա վարել բանակցություններ և Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փոխադրման պատվիրատու հանդիսացող կազմակերպությունների հետ կնքել պայմանագրեր,
3. Կարողանա սահմանային անցման կետերում կատարել համապատասխան փաստաթղթերի ձևակերպումներ,
4. Կարողանա կառավարել միջպետական փոխադրումներում ներգրավված տրանսպորտային միջոցների վարորդների աշխատանքը,
5. Ճանապարհային և բնակլիմայական պայմաններից ելնելով երթուղում ուղորդել տրանսպորտային միջոցը:

Գնահատման կարգը

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների լիարժեք ապահովումն է:

Արդյունք 1. Կատարել տրանսպորտային միջոցների բաց թողում երթուղի.

Կատարման չափանիշներ

- ա. կարողանում է լրացնել նախաուղերթային փաստաթղթերը,
- բ. ըստ առաջադրանքի կարողանում է նախապատրաստել տրանսպորտային միջոցը երթուղի դուրս գալու,
- գ. կարողանում է ըստ առաջադրանքի իրականացնել ուղևորների նստեցում,
- դ. կարողանում է ըստ առաջադրանքի կազմակերպել բեռի բեռնման-բեռնաթափման աշխատանքները և ստացողին հանձնումը,
- ե. կարողանում է ըստ առաջադրանքի իրականացնել ուղևորներին նշանակման կետ հասցնելը:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումը կատարվում է հարց ու պատասխանների և գործնական առաջադրանքների կատարման հիման վրա: Գնահատումը կատարվում է բանավոր, ընդ որում սովորողին տրվում է 8 հարց:

- ա. շարժակազմի գիծ բացթողնման կազմակերպում,
- բ. շարժակազմի նախապատրաստումը գիծ բացթողնման,
- գ. բեռնման-բեռնաթափման աշխատանքների կազմակերպում,
- դ. ուղևորների փոխադրումների կազմակերպում:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե սովորողը ճիշտ է պատասխանել առնվազն 6 հարցի:

Աշխատանքի կատարումը ստուգելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացվում է դասախոսության և գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողներին տալ տրանսպորտային միջոցների երթուղի բացթողնելու մասին անհրաժեշտ գիտելիքներ:

Ուսուցման ընթացքում օգտագործվում է ուսումնական գրականություն, նախաերթուղային փաստաթղթերի և բեռնագրերի ձևեր:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Դասախոսություն՝ 8 ժամ

Գործնական պարապմունքներ՝ 6 ժամ

Արդյունք 2 Վարում է բանակցություններ և Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փոխադրման պատվիրատու հանդիսացող կազմակերպությունների հետ կնքում պայմանագրեր:

Կատարման չափանիշներ

- ա. կարողանում է ըստ առաջադրանքի վարել գործնական զրույցներ,
- բ. կարողանում է լրացնել հայտեր և այլ անհրաժեշտ փաստաթղթեր ավտոմոբիլային տրանսպորտի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրության և միջազգային համաձայնագրերի հիման վրա,
- գ. կարողանում է վարել գործնական բանակցություններ, պատվիրատուներին ներկայացնել առաջարկվող ծառայությունները և կնքել պայմանագրեր:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումը կատարվում է հարց ու պատասխանների և գործնական առաջադրանքների կատարման հիման վրա: Գնահատումը կատարվում է բանավոր, ընդ որում սովորողին տրվում է 10 հարց:

- ա. փոխադրումների ժամանակ կիրառվող փաստաթղթեր
- բ. վարորդի մոտ գտնվող փաստաթղթեր,
- գ. բեռին ուղեկցող փաստաթղթեր,
- դ. ՀՀ տրանսպորտի և Կապի նախարարության նորմատիվային փաստաթղթեր:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե սովորողը կարողանում է ճիշտ պատասխանել առաջադրված հարցերից 7-ին:

Աշխատանքի կատարումը ստուգելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացվում է դասախոսության և գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողներին տալ բանակցությունների վարման և Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փոխադրման պատվիրատու հանդիսացող կազմակերպությունների հետ կնքվող պայմանագրերի մասին անհրաժեշտ գիտելիքներ:

Ուսուցման ընթացքում օգտագործվում է ուսումնական գրականություն, ՀՀ օրենքներ և կառավարության որոշումներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Դասախոսություն՝ 10 ժամ

Գործնական պարապմունքներ՝ 6 ժամ

Արդյունք 3 Կարողանա սահմանային անցման կետերում կատարել համապատասխան փաստաթղթերի ձևակերպումներ:

Կատարման չափանիշներ

- ա. ճիշտ է ներկայացնում Հայաստանի Հանրապետության և այլ պետությունների մաքսային օրենսդրությունը,

բ. կարողանում է մաքսային մարմիններում իրականացնել համապատասխան բեռների ձևակերպումներ:

Գնահատմա ն միջոցը

Արդյունքի գնահատումը կատարվում է հարց ու պատասխանների և գործնական առաջադրանքների կատարման հիման վրա: Գնահատումը կատարվում է բանավոր, ընդ որում սովորողին տրվում է 8 հարց:

- ա. ՀՀ և այլ պետությունների մաքսային օբյեկտություններ,
- բ. մաքսային ռեժիմներ,
- գ. մաքսային օպերացիաներ,
- դ. տերմինալներ:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե սովորողը կարողանում է ճիշտ պատասխանել 6 հարցի:

Աշխատանքի կատարումը ստուգելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացվում է դասախոսության և գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողներին տալ սահմանային անցման կետերում կատարվող փաստաթղթերի ձևակերպումներ:

Ուսուցման ընթացքում օգտագործվում է ուսումնական գրականություն, Հայաստանի Հանրապետության և այլ պետությունների մաքսային օբյեկտներ, մաքսային ձևակերպումների համար անհրաժեշտ փաստաթղթերի ձևեր:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

- | | |
|-------------------------|-------|
| Դասախոսություն | 6 ժամ |
| Գործնական պարապմունքներ | 4 ժամ |

Արդյունք 4 Կառավարում է միջպետական փոխադրումներում ներգրավված տրանսպորտային միջոցների վարորդների աշխատանքը:

Կատարման չափանիշներ

- ա. կարողանում է անցկացնել նախաուղերթային հրահանգավորում միջպետական փոխադրումներում ներգրավված վարորդների հետ,
- բ. կարողանում է նախապատրաստել միջպետական փոխադրման համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը և դրանք հանձնել վարորդին,
- գ. կարողանում է կազմակերպել վարորդների միջհերթափոխային աշխատանքը հաշվի առնելով վարորդի աշխատանքի և հանգստի ռեժիմը:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումը կատարվում է հարց ու պատասխանների և գործնական առաջադրանքների կատարման հիման վրա: Գնահատումը կատարվում է բանավոր, ընդ որում սովորողին տրվում է 6 հարց:

- ա. միջպետական փոխադրումներում ներգրավված տրանսպորտային միջոցների վարորդների աշխատանքի ռեժիմները,

բ. միջպետական փոխադրումներ իրականացնող վարորդների միջհերթափոխային աշխատանքի կազմակերպումը,

գ. վարորդների հանգստի ռեժիմը:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե սովորողը կարողանում է պատասխանել առնվազն 4 հարցի:

Աշխատանքի կատարումը ստուգելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացվում է դասախոսության և գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողներին տալ միջպետական փոխադրումներում ներգրավված տրանսպորտային միջոցների վարորդների աշխատանքը:

Ուսուցման ընթացքում օգտագործվում է ուսումնական գրականություն, վարորդների աշխատանքային ռեժիմների ժամանակացույցեր, հերթափոխների քանակ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Դասախոսություն՝ 6 ժամ

Գործնական պարապմունքներ՝ 4 ժամ

Արդյունք 5 Կարողանում է ճանապարհային և բնակլիմայական պայմաններից ելնելով երթուղում ուղղորդել տրանսպորտային միջոցը:

Կատարման չափանիշներ

ա. կարողանում է վերահսկել չափիչ սարքավորումների աշխատանքը,

բ. կարողանում է տիրապետել տեղեկատվության՝

վերաբերյալ,

գ. կարողանում է օգտվել կապի միջոցներից ըստ առաջադրանքի:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումը կատարվում է գրավոր՝ հարցաշարի միջոցով: Գնահատման ժամանակ հաշվի է առնվում գործնական առաջադրանքների կատարումը: Սովորողին տրվում է 6 հարց:

ա. շարժակազմի շահագործման պայմաններ,

բ. շարժակազմի աշխատանքը վերահսկող չափիչ սարքավորումներ,

գ. տախոգրաֆներ,

դ. կապի միջոցներ:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե սովորողը ճիշտ է պատասխանում առնվազն 4 հարցի:

Աշխատանքի կատարումը ստուգելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացվում է դասախոսության և գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողներին տալ երթուղում տրանսպորտային միջոցի ուղղորդման վերաբերյալ անհրաժեշտ գիտելիքներ:

Ուսուցման ընթացքում օգտագործվում է ուսումնական գրականություն, վարորդների աշխատանքային ռեժիմների ժամանակացույցեր, չափիչ սարքավորումներ, ճանապարհային պայմանների վերաբերյալ պայմանական տվյալներ, կապի միջոցներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Դասախոսություն	6 ժամ
Գործնական պարապմունքներ	4 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Մոդուլի դասիչը	ՓԿԿ 4-09-020
Մոդուլի տևողությունը	60 ժամ
Դասախոսություն	36 ժամ
Գործնական պարապմունքներ	24 ժամ

Մոդուլի նպատակը

Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել տրանսպորտային համակարգի մարմիններում, տրանսպորտային կազմակերպություններում կամ այլ կազմակերպությունների տրանսպորտային բաժիններում (ծառայություններում) փոխադրումների կազմակերպմանը և կառավարմանը վերաբերվող հաշիվ-հաշվարկների վարման, ցուցանիշների արձանագրման, արյունավետության գնահատման և ծրագրերում համապատասխան ճշգրտումներ իրականացնելու կարողություններ:

Մուտքային պահանջները

Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է անցած լինի ՓԿԿ-04-09-008, ՓԿԿ-04-09-014, ՓԿԿ-04-09-015, մոդուլները:

Հատուկ պահանջներ՝ չկան

Արդյունքները

Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է.

1. Արձանագրի ծառայությունների մատուցման տարաբնույթ ցուցանիշների համակարգը.
2. Իմանա հաշվետարության հիմունքները.
3. Գնահատի կազմակերպության արդյունավետությունը:

Գնահատման կարգը

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների լիարժեք ապահովումն է:

Արդյունք 1. Արձանագրել ծառայությունների մատուցման տարաբնույթ ցուցանիշների համակարգը:

Կատարման չափանիշներ

- ա. ճիշտ է նկարագրում ծառայությունների բնույթը՝ դրա բաղկացուցիչներով,
- բ. ճիշտ է ձևակերպում ծառայությունների ցուցանիշները թվային տեսքով:

Գնահատման միջոցը

Սովորողին ներկայացվում է մի քանի հարց՝ ծառայությունների մատուցման տարաբնույթ ցուցանիշների համակարգի վերաբերյալ:

- ա. տրանսպորտային ծառայություններ, դրանց բնույթը,
- բ. տրանսպորտային ծառայությունների ցուցանիշները,
- գ. տրանսպորտային ծառայությունների ձևակերպումները:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե սովորողը ճիշտ է պատասխանում առաջադրված հարցերից առնվազն 60%-ին:

Աշխատանքի կատարումը ստուգելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացվում է դասախոսության և գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողներին տալ ծառայությունների մատուցման տարաբնույթ ցուցանիշների վերաբերյալ անհրաժեշտ գիտելիքներ:

Ուսուցման ընթացքում օգտագործվում է ուսումնական գրականություն, տրանսպորտային աշխատանքի գնահատման ցուցանիշների ցանկ, տրանսպորտային աշխատանքն ընդգրկող գործառույթային համակարգ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

- Դասախոսություն՝ 14 ժամ
- Գործնական պարապմունքներ՝ 8 ժամ

Արդյունք 2 Իմանալ հաշվետարարության հիմունքները:

Կատարման չափանիշներ

- ա. ճիշտ է իրականացնում թվերի (ցուցանիշների) հետ առաջադրված աշխատանքը,
- բ. ճիշտ է կազմում առաջադրված աղյուսակներ և աշխատում դրանց հետ:

Գնահատման միջոցը

Սովորողին ներկայացվում է մի քանի հարց՝ հաշվետարարության հիմունքների վերաբերյալ:

- ա. ցուցանիշների մշակում,
- բ. աղյուսակների կազմման մեթոդներ:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե սովորողը ճիշտ է պատասխանում առաջադրված հարցերից առնվազն 50%-ին:

Աշխատանքի կատարումը ստուգելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացվում է դասախոսության և գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողներին տալ հաշվետարարության հիմունքների վերաբերյալ անհրաժեշտ գիտելիքներ:

Ուսուցման ընթացքում օգտագործվում է ուսումնական գրականություն, տրանսպորտային աշխատանքի վերլուծության մեթոդիկա, աշխատանքի արդյունքների ներկայացման եղանակներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Դասախոսություն`	10 ժամ
Գործնական պարապմունքներ`	8 ժամ

Արդյունք 3 Գնահատել կազմակերպության արդյունավետությունը:

Կատարման չափանիշներ

- ա. ճիշտ է բնութագրում արդյունավետության հասկացությունը,
- բ. առաջադրված դեպքի համար ճիշտ է հաշվարկում արդյունավետության_ցուցանիշը,
- գ. ճիշտ է տալիս դրական կամ բացասական արդյունքների մեկնաբանությունը:

Գնահատման միջոցը

Սովորողին ներկայացվում է 8 հարց` ձեռնարկության արդյունավետության որոշման վերաբերյալ:

- ա. ձեռնարկության արդյունավետություն,
- բ. աշխատանքի արտադրողականություն,
- գ. աշխատանքի ինքնարժեք,
- ե. ձեռնարկության աշխատանքի արդյունավետության վրա ազդող գործոններ:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե սովորողը ճիշտ է բնութագրում արդյունավետություն հասկացությունը և հաշվարկում է արդյունավետության ցուցանիշը, անսխալ է մեկնաբանում դրական կամ բացասական արդյունքները պատասխանում առնվազն 6 հարցի:

Աշխատանքի կատարումը ստուգելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացվում է դասախոսության և գործնական պարապմունքների միջոցով` նպատակ ունենալով սովորողներին տալ կազմակերպության գործունեության արդյունավետության և դրա հաշվարկի վերաբերյալ անհրաժեշտ գիտելիքներ:

Ուսուցման ընթացքում օգտագործվում է ուսումնական գրականություն, տրանսպորտային աշխատանքի արդյունավետության գնահատման տնտեսական և տեխնիկական ցուցանիշների ցանկ և կոնկրետ ելակետային տվյալների խումբ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Դասախոսություն`	12 ժամ
Գործնական պարապմունքներ`	8 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ` ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Մոդուլի դասիչը`	ՓԿԿ 4-09-021
Մոդուլի տևողությունը`	60 ժամ
Դասախոսություն`	36 ժամ
Գործնական պարապմունքներ`	24 ժամ

Մոդուլի նպատակը

Մոդուլը նպատակ ունի սովորողին տալ գիտելիքներ տրանսպորտի առանձին տեսակների (ավտոմոբիլային, երկաթուղային, օդային, ջրային) համագործակցության ձևերի, դրանց աշխատանքի

կորորդինացման մեթոդների, խառը փոխադրումների ժամանակ տրանսպորտի ռացիոնալ տեսակների ընտրության և տեխնիկատնտեսական հիմնավորման, տրանսպորտային հանգույցներում համագործակցող տեսակների աշխատանքի համատեղելի գրաֆիկների, դրանց ու բեռնման-բեռնաթափման մեխանիզմների աշխատանքի միասնական տեխնոլոգիայի վերաբերյալ: Մոդուլում կուսումնասիրվեն տրանսպորտի առանձին տեսակների համագործակցության և աշխատանքի կորորդինավման հարցերը երկրի միասնական տրանսպորտային համակարգի պայմաններում:

Մոդուլը յուրացնելուց հետո, ուսանողը պետք է կարողանա կատարել փոխադրումների ծավալի բաշխում տրանսպորտի առանձին տեսակների միջև, տիրապետի համագործակցության կոմերցիոն կառավարման մեթոդներին, իմանա բեռների առաքման արագացման ուղիները՝ տրանսպորտի տեսակների միջև համագործակցության պայմաններում:

Մուտքային պահանջները

Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է ուսումնասիրած լինի ՓԿԿ-04-010, ՓԿԿ-04-011 և ՓԿԿ-04-012 մոդուլները:

Արդյունքները

Մոդուլն ուսումնասիրելուց հետո սովորողը պետք է.

1. Իմանա տրանսպորտի առանձին տեսակների աշխատանքը բնութագրող հիմնական ցուցանիշները,
2. Իմանա տրանսպորտի առանձին տեսակների համագործակցության և աշխատանքի կորորդինացման հարցերը,
3. Իմանա տրանսպորտի տեսակների միջև համագործակցության պայմաններում բեռնարկղերի (կոնտեյներների) դերը:

Գնահատման կարգը

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների լիարժեք ապահովումն է:

Արդյունք 1. Իմանա տրանսպորտի առանձին տեսակների աշխատանքը բնութագրող հիմնական ցուցանիշները.

Կատարման չափանիշներ ա. ճիշտ է ներկայացնում տրանսպորտի առանձին տեսակների աշխատանքը բնութագրող հիմնական ցուցանիշները,

բ. ճիշտ է ներկայացնում տրանսպորտի տեսակների համագործակցության ձևերը:

Գնահատման միջոցը

Սովորողին ներկայացվում է 8 հարց՝ տրանսպորտի առանձին տեսակների աշխատանքը բնութագրող հիմնական ցուցանիշներ վերաբերյալ:

ա. տրանսպորտի առանձին տեսակների բնութագրերը,

բ. տրանսպորտի առանձին տեսակների ռացիոնալ օգտագործման ոլորտները,

գ. փոխադրումների ծավալի ռացիոնալ բաշխման սկզբունքները՝ տրանսպորտի տեսակների միջև:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե սովորողը կարողանում է անսխալ պատասխանել առաջադրված հարցերից առնվազն 5-ին:

Աշխատանքի կատարումը ստուգելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացվում է դասախոսության և գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողներին տալ տրանսպորտի առանձին տեսակների աշխատանքը բնութագրող հիմնական ցուցանիշների և համագործակցության ձևերի մասին համապատասխան գիտելիքներ:

Ուսուցման ընթացքում օգտագործվում է ուսումնական գրականություն, տրանսպորտի տարբեր տեսակների աշխատանքը բնութագրող հիմնական ցուցանիշների ցանկ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

- Դասախոսություն՝ 14 ժամ
- Գործնական պարապմունքներ՝ 8 ժամ

Արդյունք 2 Իմանա տրանսպորտի առանձին տեսակների համագործակցության և աշխատանքի կորոդինացման հարցերը:

Կատարման չափանիշներ

- ա. ճիշտ է մեկնաբանում տրանսպորտային հանգույցներում փոխադրական անընդհատ գործընթացի որակի ցուցանիշը,
- բ. ճիշտ է մեկնաբանում տրանսպորտային հանգույցում տրանսպորտի տեսակների աշխատանքի պլանավորման և կառավարման մաթեմատիկական մոդելը:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումը կատարվում է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական առաջադրանքների հիման վրա: Սովորողին ներկայացվում է 6 հարց:

- ա. տրանսպորտի տեսակների տեխնոլոգիական համագործակցություն,
- բ. տրանսպորտի տեսակների տեխնիկական համագործակցություն,
- գ. տրանսպորտի տեսակների տնտեսական համագործակցություն,
- դ. տրանսպորտի տեսակների աշխատանքի կորոդինացման պլանային կազմակերպչակառավարչական մեթոդները (պլանային, տնտեսական, իրավական):

Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե սովորողը կարողանում է անսխալ պատասխանել առնվազն 4 հարցի:

Աշխատանքի կատարումը ստուգելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացվում է դասախոսության և գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողներին տալ տրանսպորտի առանձին տեսակների համագործակցության և աշխատանքի կորոդինացման մասին համապատասխան գիտելիքներ:

Ուսուցման ընթացքում օգտագործվում է ուսումնական գրականություն, երթևեկության չվացուցակներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

- Դասախոսություն՝ 10 ժամ
- Գործնական պարապմունքներ՝ 8 ժամ

Արդյունք 3 Իմանա տրանսպորտի տեսակների միջև համագործակցության պայմաններում բեռնարկղերի (կոնտեյներների) դերը:

Կատարման չափանիշներ

- ա. ճիշտ է ներկայացնում միասնական կոնտեյներային համակարգի բնութագիրը և կոնտեյներային տերմինալները,
- բ. ճիշտ է ներկայացնում կոնտեյներների փոխանակման կետերի աշխատանքը:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումը կատարվում է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական առաջադրանքների հիման վրա: Սովորողին ներկայացվում է 6 հարց:

- ա. կոնտեյներներ, դրանց բնութագրերը,
- բ. կոնտեյներային փոխանակման կետեր,
- գ. կոնտեյներային փոխանակման կետերի աշխատանքների տեխնիկական նորմաներ:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե սովորողը կարողանում է անսխալ պատասխանել առնվազն 4 հարցի:

Աշխատանքի կատարումը ստուգելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացվում է դասախոսության և գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողներին տալ բեռնարկղերի դերի և բեռնարկղային փոխադրումների ու տերմինալների մասին համապատասխան գիտելիքներ:

Ուսուցման ընթացքում օգտագործվում է ուսումնական գրականություն, բեռնարկղերի տվյալների ցանկ և փոխանակման կետերի ու տերմինալների բնութագրեր:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

- Դասախոսություն՝ 12 ժամ
- Գործնական պարապմունքներ՝ 8 ժամ